



ԶԱՄԱՐՈՒՆ





ԽՐ

ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Օգոստոս


1985



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԸ ՌՈՒՍ
ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ, ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ
ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐԷ ՊԻՄԵՆԻՆ

Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հրավերով սույն թվականի հուլիսի 22-ին մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Պիմենի ծննդյան 75-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսություններին:

Այս առթիվ Նորին Սրբությանը ուղեկցում էին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը և Մայր Աթոռի միաբան Գուրգեն սրկ. Մարտիրոսյանը:

ՄԵԿՆՈՒՄ ՄՈՍԿՎԱ

Հուլիսի 22-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 7.30-ին, Նորին Սրբությունը հրաժեշտ առավ Մայր Աթոռից և մեքենաների շարայունով ուղևորվեց «Չվարթնոց» օդանավակայան:

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհի մաղթեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

ԺԱՄԱՆՈՒՄ ՄՈՍԿՎԱ

Երկու և կես ժամ տևող թռիչքից հետո օդանավը վայրէջք կատարեց Մոսկվայի «Դոմոդեդովո» օդանավակայանում, որտեղ Նորին Սրբությանը դիմավորեցին միտրոպոլիտ Տ. Յովնապին, Տ. Վարսոնոֆեյ վարդապետը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոպալայանը և Նոր Նա-

խիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Ս. Տիրան վրդ. կյուրեղյանը:

Հայոց Հայրապետին դիմավորելու համար օդանավակայան էր եկել ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի աջխատակից տիար Էդվարդ Գալստյանը:

Ողջույնի և բարիգալստյան խոսքերի փոխանակումից հետո մեքենաների շարասյունը առաջնորդվեց Մոսկվայի «Սովետսկայա» հյուրանոց. ուր իջևանելու էր Նորին Սրբությունը իր շքախմբով:

Նույն օրը, ժամը 17-ին, Նորին Սրբությանը այցելություն է տալիս Մինսկի և Բելոռուսիայի միտրոպոլիտ Ֆիլարետը:

Հուլիսի 23-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 7.30-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով ուղևորվեց Ջագորսկ, որտեղ պիտի տեղի ունենային հոբեյանական հանդիսությունները:

Հանդիսություններն սկսվեցին առավոտյան ժամը 9-ին, Սերգիևո-Տրոյիցկ վանքի Մայր տաճարում մատուցվող ս. պատարագով: Պատարագիչն էր համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Իլիա Բ-ն:

Հավարտ ս. պատարագի, ժամը 13-ին, Ջագորսկի հոգևոր ակադեմիայի հանդիսությանց նոր դահլիճում տեղի ունեցավ հոբեյանական հանդիսավոր նիստ՝ նվիրված Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի ծննդյան 75-ամյակին:

Հանդիսությանը ներկա էին Սովետական Միության բոլոր Եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների պետերն ու ներկայացուցիչները:

Հանդիսության բացումը կատարեց Մոսկվայի պատրիարքարանի գործերի կառավարիչ, Տալլինի և Էստոնիայի միտրոպոլիտ Ս. Ալեքսին:

Ապա Մոսկվայի հոգևոր ձեմարանի և ակադեմիայի վերատեսուչ, Դմիտրովի եպիսկոպոս Ս. Ալեքսանդրը ելույթ ունեցավ «Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը Մոսկվայի քահանայապետերի ժառանգորդ» պեկուցմով: Ձեկուցող սրբապան հայրը հանգամանորեն ներկայացրեց Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի կյանքն ու գործունեությունը:

Սրբապան Սինոդի ողջույնի և շնորհավորանքի ուղերձն ընթերցեց Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ Անտոնին:

Այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկավ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ Կ. Մ. Խաչևը: Ընդհավորական խոսքի վերջում տիար Կ. Մ. Խաչևը հայտնեց, որ սովետական կառավարությունն այս առիթով Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքին պարգևատրել է կառավարական շքանշանով:

Ողջույնի և շնորհավորանքի խոսքերով ելույթ ունեցան՝ համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Իլիա Բ-ն, Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց, Նորին Սուրբ Օծություն Ս. Տ. Վապգեն Ա-ն, Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչ Ս. Պավլոնիս արքեպիսկոպոսը, իսլամական կրոնի ներկայացուցիչը, Ավետարանական քրիստոնյա-մկրտչականների Համամիութենական խորհրդի նախագահ Վ. Ե. Լոգվինենկոն, Մոսկվայում Անտիոքի Եկեղեցու ներկայացուցիչ Ս. Նիֆոն վարդապետը, Սովետական Միության Խաղաղության Ֆոնդի վարչության նախագահի առաջին տեղակալ պրոֆեսոր Վ. Ս. Եմելյանովը, Մոսկվայում Բուլղար Եկեղեցու ներկայացուցիչ Կիրիլ վարդապետը:

Հանդիսության ավարտին շնորհակալության և երախտագիտության շերմ խոսքով հանդես եկավ Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը:



ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆՈՐԻՆ՝ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐԺԸ

Հորեյանական հանդիսավոր նիստի փակման խոսքով հանդես եկավ Տալլինի և Էստոնիայի միտրոպոլիտ Ալեքսին:

Հանդիսությունն ավարտվեց «Արժանի է» աղոթքով:

Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐԺ ՊԻՄԵՆԻ ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏԻ ԺԱՄԱՆԱԿ

Զերդ Սրբություն,

Այսօր ուրախության օր է ոչ միայն Ռուս Պապական Եկեղեցու համար, այլ նաև Հայ Առաքելական Եկեղեցու և անձնապես Մեզ համար: Այսօր մեր ուրախությունը սկսվեց ս. պատարագի արարողությամբ, որը տեղի ունեցավ մեկ-երկու ժամ առաջ այս պատմական վանքի Մայր Եկեղեցում, որտեղ մենք մի անգամ ևս զգացինք Ռուս Եկեղեցու սրբությունը, հոգևոր ուժը և գեղեցկությունը: Այս կյարտինք Ձեր ծննդյան 75-ամյակի հորեյանին, որի համար շնորհակալ ենք:

Մենք Ձեզ ճանաչում ենք երեսուն տարիներից ի վեր, երբ միասին, կողք-կողքի ենք գտնվել զանազան էկումենիկ հանդիպումներին, տարբեր տոնախմբություններին, և մանավանդ, խաղաղության ժողովներին ու համագումարներին:

Մենք ճանաչում ենք Ձեզ իբրև բարի և մաքուր սրտով անձնավորություն, միշտ Սուրբ Հոգով ներշնչված, միշտ նվիրված աղոթքի, Քրիստոսի Ավետարանի քարոզության, Ձեր Մայր Եկեղեցու պայծառության, Ձեր ժողովրդի և հայրենիքի բարօրության, և նաև աշխարհի խաղաղության պահպանման սուրբ գործին:

Գալով Հայաստանից՝ Ս. Էջմիածնից բերեմ ենք Ձեզ Հայ Առաքելական Եկեղեցու շնորհավորանքը, սերն ու հարգանքը՝ մաղթելով Ձեզ քաջառողջություն և Ձեր բոլոր սուրբ գործերին՝ հաջողություն:

Քաջ գիտենք, որ Դուք Ձեր կարևոր մեկ առաքելությունն էք նկատում աշխարհի խաղաղության պահպանումը, որը մեր օրերին ծանրորեն վտանգված է, երբ արևմուտքում կան որոշ շրջանակներ, որոնք ծրագրեր են պատրաստում նույնիսկ կոսմոսը վերածելու քաոսի: Այսպիսի ճակատագրական պահին մենք՝ հոգևորականներս, պետք է առավել լարված կերպով միավորվենք և մեր շուրջը միավորենք մեր բոլոր քույր Եկեղեցիները ստեղծելու համար միջեկեղեցական մի հզոր շարժում ամբողջ աշխարհում՝ ի պաշտպանություն մարդկային կյանքի և Աստուծո ստեղծագործության:

Մեր այս կոչը և այս իրագործումը, կարծում ենք, կլինի Ձեր 75-ամյակի առթիվ Ձեզ մատուցված լավագույն պարգևը:

Զերդ սրբություն,

Ի սրտե մաղթում եմ, որ տակավին երկար տարիներ ապրեք և Ձեր սեփական աչքերով տեսնեք արևածագը՝ վերջնական հաղթանակը ավետարանական խաղաղության և արդարության պատգամի:


Բռն ծափահարությունների ներքո երկու Հայրապետները ողջագուրվեցին, և Վեհափառ Հայրապետը Պիմեն Պատրիարքին նվիրեց արծաթյա ոսկեգոծ նրբանախշ սկիհ և ԺԷ դարի սլավոնական մի ձեռագիր Աղոթագիրք:


Հուլիսի 25-ին, հինգշաբթի օրը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոպապայանը և Վրաց Եկեղեցու Տ. Դավիթ միտրոպոլիտը, եկեղեցա-

կան ժողովի մասնակցելու կապակցությամբ Արգենտինա մեկնելուց առաջ, այցելեցին Վեհափառ Հայրապետին՝ ստանալու Նորին Սրբության հայրական օրհնությունը:

Հուլիսի 27-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը, Տ. Նարեկ եպս. Շաքարյանի ուղեկցությամբ, մեկնեց Կիսլովոդսկ՝ հանգստանալու:

ԳՈՒՐԳԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ





ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՂՋՈՒՅՆԸ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Վեհափառ Տեր,

Հանուն ամերիկահայոց թեմի Երիտասարդաց Կազմակերպության՝ 39-րդ տարեկան համաժողովեն, որ տեղի ունեցավ Ուստըր, Մասաչուսեթս, օգոստոս 28, 29, 30 1985, հովանավորությամբ թեմիս առաջնորդ գերաշնորհ Թորգոմ սրբազանի, կհայտնենք բոլորիս որդիական սերն ու հավատարմությունը Ձերդ Սրբության՝ ամերիկահայ երիտասարդներու հանդեպ Ձեր ցուցաբերած հայրական վերաբերմունքին համար, ի մասնավորի Ամերիկայեն միամսյա դասընթացներու* առթիվ: Ի սրտե կմաղթենք և խոնարհաբար կաղոթենք Ձեր արևշատության և առողջության համար, և անսասանության համար մեր հավատքի կեդրոն Սուրբ Էջմիածնի:


ՍՔՈԹ ՆԱՃԱՐՅԱՆ
Ատենապետ

ՀԱԿՈԲ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Վարիչ-քարտուղար

3 սեպտեմբերի 1985 թ.

* Խոսքն այն մասին է, որ ամեն տարի, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, ամերիկահայ երիտասարդներից կազմված մի խումբ այցի է գալիս Մայր Աթոռ՝ հայերենագիտական դասընթացի հետևելու համար:





ՀԱՆԳԻՍՏ
ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ
ՅԱՆԻՍ ՄԱՏՈՒԼԻՍ ԱՐԶԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Լատվիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու պետ Յանիս Մատուլիս Արքեպիսկոպոսը ծնվել է 1911 թվականի փետրվարի 21-ին Կալուգայ քաղաքում: Երկար տարիներ ուսուցիչ աշխատելուց հետո, 1943 թվականին հոգևոր հովիվ է ձեռնադրվել և 1969 թվականին Արքեպիսկոպոսի պաշտոն է ստանձնել: Նա եղել է աստվածաբանության դասախոս և լատիշերեն է թարգմանել Մատթեոսի Ավետարանն ու Պետրոս Առաքյալի թղթերը: Քրիստոնեական աշխարհում ծանոթ է իր էկումենիկ և խաղաղասիրական գործունեությամբ:

Արքեպիսկոպոս Յանիս Մատուլիսը Հայաստանյայց Եկեղեցու լավ բարեկամն էր:

Նորին Սրբապնության մահվան առիթով Վեհափառ Հայրապետը Լատվիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցուն հղեց հետևյալ հեռագիրը.

ԼԱՏՎԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Սրտի կսկիծով ընդունեցինք Լատվիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու պետ դոկտոր Յանիս Մատուլիս Արքեպիսկոպոսի մահվան լուրը: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և անձնապես Մեր անունից խորին ցավակցություն եմ հայտնում Լատվիական Եկեղեցու մեծ կորստի առիթով: Մենք չենք մոռանա գերաշնորհ Արքեպիսկոպոսի էկումենիկ, հայրենասիրական և խաղաղասիրական ներդրումը՝ խաղաղության և ժողովուրդների արդար գոյակցության գործում: Աղոթում ենք առ Աստված, որ հավեռ հանգիստ պարգևի իր ծառային երկնից արքայության մեջ:

Սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 21-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Ս. Նարեկ քին. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագից տեր հայրը ընթերցում է Վեհափառ Հայրապետի կոնդակը՝ գրված ազգային բարերար Գալուստ Կյուլպենկյանի մահվան 30-ամյակի առթիվ:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում իողեհանգստյան արարողություն՝ Գալուստ Կյուլպենկյանի հիշատակին:

* * *

Հուլիսի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Ս. Գրիգոր ավագ քին. Տեր-տերյանը:

* * *

Հուլիսի 28—օգոստոսի 8 օրերին Բունեսու Արեսում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի տարեկան հերթական հանդիպումը, որին Հայ Առաքելական Եկեղեցու կողմից մասնակցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Ս. Ներսես եպ. Պոպապայանը:

* * *

Օգոստոսի 4-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Հունաստանից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ս. Հակոբ քին. Ռուստամյանը:

«Հայր մեր»-ից առաջ խոսած իր քարոզում պատարագից տեր հայրը հավատացյալներին ծանոթացնում է հունահայոց թեմի կյանքին:

* * *

Օգոստոսի 11-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Ս. Նարեկ քին. Մատարյանը:

* * *

Օգոստոսի 18-ին, կիրակի.—Վերափոփոխումն Ս. Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Մայր տաճարի լուսարարապետ Ս. Հուսիկ արքեպ. Սանթրոյանը:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում «Օրհնություն խաղողոյ»:

*
* *

Օգոստոսի 19-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Ս. Եղիշե քին. Բաղրամյանը:

«Ձկնի սրբոյ պատարագի» կատարվում է «հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 21.30-ին, Կիսովորդակի «Կրասնըն կամնի» առողջարանից Մայր Աթոռ վերադարձավ Նորին Սուրբ Օծություն Ս. Ս. Վապգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը:

*
* *

Օգոստոսի 23-ին, ուրբաթ.—Այսօր հոգեվոր ճեմարանում, տեսուչ Ս. Եզնիկ քին. Պետրոսյանի նախագահությամբ, սկսվում են հոգևոր ճեմարանի 1985—86 ուսում-

նական տարվա ընդունելության քննությունները:

*
* *

Օգոստոսի 25-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Ս. Նարեկ քին. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ Մայր Աթոռի դիվանապետ Ս. Ներսես եպս. Պոպապայանը քարոզ է խոսում «Դու հողանիւթ սրովբէ ես. հարսն ի յերկրէ յերկինս ես. վԱստուած մարմնով ծնեալ ես. Աստուածամօին մեղայ քեզ» (տաղ) բնաբանով:

Իր քարոզի մեջ սրբապան հայրը համառոտակի կանգ է առնում Աստվածամոր կենսագրության վրա և նշում Աստվածածնի մեծ դերը փրկչագործական խորհրդում:

*
* *

Օգոստոսի 26-ին, երկուշաբթի.—Այսօր Վիեննայից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Ս. Աբել աբեղա Օղլուգյանը:

ՄԱՅՐ ՏԱԾԱՐԻ ԱՎԱՆԴԱՏԱՆ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Ամենայն Հայոց Հայրապետի կարգադրությամբ և Մայր Աթոռի բարերար վենետուելահայ Վարդգես Երեցյանի օժանդակությամբ վերանորոգվեց Մայր տաճարին կից գործող հայ եկեղեցական արվեստի ավանդատունը: Շուրջ վեց ամիս տևած վերանորոգումից հետո, 1985 թվականի հուլիսի 31-ին, Ս. Էջմիածին այցելող հյուրերի և հավատացյալների առջև իր դռները բացեց Մայր տաճարի ավանդատունը:

Ամբողջովին փոխվեցին ավանդատան ցուցապահարանները, որոնք պատրաստվել էին Հունգարիայում: Ավանդատան ձևավորման աշխատանքները ղեկավարեց ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը: Գեղեցիկ և լուսավորված պահարաններում կատարված ցուցադրումը կարծես նորովի բացահայտեց ցուցանմուշների պատմական և գեղագիտական արժեքը: Նոր ցուցադրման մեջ տեղ են գրավել հայկական արվեստի բարձրարժեք եկեղեցական իրեր և քրիստոնեական հավատքի սրբություններ՝ ինչպես Սուրբ Գեղարդը, փոքրիկ մասունքներ Նոյան տապանից և Քրիստոսի խաչավայտից և այլն: Այս մասունքներն ու հարուստ ցուցանմուշները մեծ ճանաչում են բերել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և այն դարձրել ուխտատեղի:

ԹԴԹԱԿԻՑ

ՅԱԿԻՆԿՈՅԿԱՅ ԴՐՈՏԻՆՈՒԻ ՎԱՐՄՈՑ ԱՇԽԱՏ







ՆԱԳԻՆԳՈՒՏԱՅ ԳՈՐԾԱՆՈՒՄ ԿԱՐԶԱՆԱԳՈՐԾԱՆՈՒՄ



Երկու խոշոր անոթապահարան և ցուցակահարան



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՎԱՆԱԴԱՆՆ ԶՈՒՑՈՓԵՂԿԵՐԻՑ



ՄԱՅՐ ՏԱՅՐԻ ԱՎԱՆԱԴԱՆՈՒՄԸ ԳՈՒԳՈՒԹՅԱՆ ՊԱՐԿԱՆԻՆԻՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻՆԻՍՏԱՆԻ



ՍՓՅՈՒՌԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ

Վաղուց արդեն ավանդույթ է դարձել սփյուռքահայ ուսուցիչների ամենամյա հավաքը Մայր Հայրենիքում՝ իրենց հայագիտական գիտելիքները խորացնելու և ոգին առավել ևս հայեցիությամբ գոտեպնդելու համար։ Եվ, բնականաբար, ամեն տարի սփյուռքահայ ուսուցիչները այցելում են Մայր Աթոռ՝ ստանալու համար Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը՝ իրենց առաքելությունը խորոշումով և անկեղծությամբ շարունակելու համար։

Այս տարի նույնպես, օգոստոսի 21-ին, աշխարհի տարբեր երկրներից (Լիբանան, Սիրիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Իտալիա, Շվեդիա, Անգլիա, Կիպրոս և այլն) ժամանած 50 ուսուցիչներ եկան իրենց ուխտը կատարելու Ս. Էջմիածնի դարավոր կամարների տակ։ Նրանք նախ իրենց աղոթքը մատուցեցին Մայր տաճարում, ապա թանգարանում և Գանձատանը հաղորդվեցին մեր ժողովրդի մշակույթի և արվեստի արժեքներին, վայելեցին ոսկյա այբուբենի և խաչքարի գեղեցկությունը։ Ժամը 13-ին ուսուցիչներին ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը։

Ողջույնի և բարի գալուստի խոսքերից հետո Վեհափառ Հայրապետն ասաց.

«Կարևորը այն է, որ այստեղ մեզ՝ հայաստանցիներին, հատկապես ինձ գոհունակություն կպատճառե, որ Սփյուռքի կրթական մշակները տարին մեկ անգամ կայեցեն Մայր Հայրենիք և նաև Ս. Էջմիածին։ Այս ցույց կուտա կենդանությունը մեր արտասահմանի հայության՝ հակառակ դժվարություններու և խոչընդոտներու, որոնք կդրվին հայապահպանության գործին առաջ։ Բնականաբար այս բոլորը դուք ավելի լավ գիտեք և կզգաք։ Համապատասխան պայքար մըն է, որ կմղվի արտասահմանի մեջ՝ հայը հայ պահելու համար և՛ ֆիզիկապես, և՛ հոգիով, և՛ հատկապես մայրենի լեզվով, որուն դուք նվիրված եք։

Անշուշտ արտասահմանի մեջ հայ լեզուն հարյուր տոկոսով, ամբողջապես պահպանել հնարավոր չէ, դժբախտաբար իրողությունը այդ է։ Շատ-շատ անգամներ, երբ Արևմուտք կգտնվիմ, հատկապես Հյուսիսային Ամերիկա, տարբեր առիթներով կը հանդիպեի երեխաներու, կհարցնեի՝ «Ա-

նույն դրանք է», չէր հասկնար, թե ինչ կը սեն: Բայց պետք չէ հուսահատիլ, որովհետև ճշմարիտ է նաև այն, որ շատ հայեր (ես անձնապես շատերուն հանդիպած եմ) հայերեն չեն խոսիր, բայց շատ լավ հայեր են: Ես այդ փորձառությունը ունիմ Ռումանիայեն: Այնտեղ ալ շատեր հայերեն չեն գիտեր, բայց անոնց մեջ ալ սքանչելի հայեր կային, երբեմն ավելի թունդ հայեր էին, քան թե հայախոսները: Եվ երևի հոգեբանորեն կարելի է բացատրել ճիշտ այն պատճառով, որ բան մը կորսնցուցած էին, այդ կորսնցուցածին տեղ բան մը գտնելու համար ավելի համառորեն կառչած էին իրենց հայկական ծագումին և հայկական ոգիին»:

Ապա Վեհափառ Հայրապետը փոքրիկ մի հուշ պատմեց իր վարդապետության օրերից, երբ Ռումինիայի պատմական մեծ գաղութ և երկու փառավոր եկեղեցիներ ունեցող քաղաքում պատարագից հետո հարց է դրվել աստվածաշնչական որոշ ընթերցումներ ռումիններեն կատարել, բոլորովին հայերեն չիմացող մի աղջիկ խստորեն ընդդիմացել է և բացականչել.

—Ո՛չ, շատ բան կորսնցուցած ենք, գոնե եկեղեցվո մեջ հայերեն լսենք:


«Սակայն,—իր խոսքը շարունակեց Վեհափառ Հայրապետը,—անշուշտ հայերեն լեզուն վճռական նշանակություն ունի հայապահպանության համար: Եթե տասն մեկը հայերեն խոսի, մյուս իննիս կրնա իր ետևեն քաշել: Բարեբախտաբար գաղութներուն մեջ դպրոցներ կան և այդ դպրոցներու գոյությամբ որոշ չափով գոնե ամեն տեղ պիտի պահպանվի հայերեն խոսողներու թիվը: Եվ դուք, որ նվիրված մշակներն եք այդ իդեալին, վստահ եմ, որ ձեզմե ամեն մեկը իր պարտականությունը կհատարե ոչ միայն մասնագիտական իմաստով հայերեն լեզուն տալու, շարադրանքը սորվեցնելու, այլ մղիչ ուժը հայկական գիտակցությունն է, ազգային գիտակցությունն է, որ ձեզի կմղե հայկական վարժարաններու մեջ դասավանդելու:

Հաջողություն կմաղթեմ և իմ օրինությունը ձեզի բոլորիդ և նաև շնորհակալություն, որ նվիրված եք այսքան կարևոր առաքելության մը:

Անշուշտ որ Մայր Հայրենիքը նոր խթան կհանդիսանա, և պետք է հանդիսանա, որպեսզի ավելի լիցքավորված հայկականությամբ վերադառնաք և շարունակեք ձեր առաքելությունը՝ առավել վճռականությամբ և առավել լավատեսությամբ:

Այստեղ Հայաստան է և ամեն ինչ հայ-

կական է: Եվ ոչ միայն հայկական է, ինչ որ նյութական է և ձեր աչքով կտեսնեք, այլ նաև, կխորհիմ, դուք պետք է դիտեք Հայաստանը ձեր ներքին աչքով, հոգևոր աչքով՝ տեսնելու համար այն, ինչ որ նյութականն այն կողմ է՝ հավիտենական Հայաստանը, որ իրականացված է այսօրվա պայմաններու մեջ: Որովհետև Հայաստան գալ, Հայաստան տեսնել ալ կա, տեսնել ալ: Կան սովորական այցելուներ, որոնք կուգան և միայն արտաքինը կտեսնեն: Հայ մարդը այս աչքով միայն պետք չէ դիտե Հայաստանը, այլ պետք է Հայաստանը զգա իր անցյալով, իր դժբախտություններով և ներկա հաջողություններով: Ներկա հաջողությունները գուցե հարյուր տոկոսով մեզի չեն գոհացներ տակավին: Բայց ասիկա քարոքանդ երկիր մըն էր: Համեմատությունը պետք է ընել անպայման, որպեսզի կարողանանք հասկնալ արժեքը այսօրվա վերաշինված վիճակի: Համառ աշխատանքով, բառացիորեն արյունքոտիքով ստեղծված վիճակ է: Երևանը այսօր, մանավանդ կեդրոնական մասով, ազգային ճարտարապետության պատկերը կներկայացնե և ասիկա պատիվ կբերե շինարարներուն: Աշխարհի վրա գուցե չկա մայրաքաղաք մը, որ այսքան ազգային ճարտարապետության ոճով կառուցված ըլլա, ինչքան Երևանը, ոչ մի քաղաքի չի նմանիր և ատիկա իր արժանիքն է. իսկական հայկական է ամբողջ կերտվածքով, մանավանդ, ինչպես ըսի, կեդրոնական մասը: Ասիկա մեզի հպարտություն կպատճառե, որովհետև մենք, որ այսքան շատ բան կորսնցուցինք անցյալի մեջ, հատկապես 1915 թվականի ցեղասպանությամբ և մեր ժողովրդի կեսը նահատակվեցավ, և ամբողջ հայրենիք մը, իսկական պատմական հայրենիքը, քարոքանդ եղավ, և մենք այս փոքրիկ հողամասի վրա սեղմված ենք, ահավասիկ այն բոլորը ինչ որ կորսնցուցինք, կվերականգնվի ազգային շունչով և ոգիով, ազգային մշակույթի վարգացումով և ծաղկումով: Եղածը փառավոր է և հույսկալ, հերոսական աշխատանքով իրագործված և կշարունակվի, բայց մեր հայկական զգացումները տակավին ավելին կպայասեն, կակնկալեն. մենք հույս ունինք և ասիկա ամբողջ հայաստանցի ժողովուրդի, մանավանդ ղեկավարներու հավատքն է, որ հետագային ավելին պիտի իրագործվի, նույնիսկ մեր ազգային բոլոր իդեալներու իրականացումով: Այդ գերագույն նպատակը մեր կյանքի հեռանկարն է, իորիպոնն է, որուն կձգտինք, և դուք ալ՝ արտասահմանի դաստիարակները, կխորհիմ, այդ ոգիով

[illegible]

է, որ կաշխատիք և այդ հորիզոնն է, որ կբանաք ձեր աշակերտներու հոգիներու հայացքի առջև: Մենք լավատես ենք:


Վստահ ենք, որ հայ ժողովուրդը տակավին թաքնված ուժեր ունի և մեր բոլոր արդար իրավունքները պիտի իրականացվին. պայքար և լավատեսական ոգի:


Կրկին բարի գալուստ բոլորիդ: Վերադարձեք հայրենական ոգիով լիցքավորված և ձեզի հետ տարեք Աստուծո օրհնությունը Ս. Էջմիածնեն: Ամեն»:

Հանուն սփյուռքահայ ուսուցիչների պատասխան խոսքով հանդես եկավ Արգենտինայի «Շարժում» թերթի խմբագիր, ուսու-

ցիչ Սամվել Սարգսյանը, որ ջնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ ջերմ ընդունելության և ոգևորիչ խոսքի համար: Ասաց, որ սփյուռքահայ ուսուցիչը ամեն օր կարիքը ունի մի քիչ ավելի պորացնելու իր հայրենասիրությունը, և այս այցելությունը նրանց օգնեց Ս. Էջմիածնի և նրա Գահակալի օրհնություններով՝ որպես նոր խանդավառությամբ աշխատելու երաշխիք:

Ապա, Մայր Աթոռի պտուղների բարի բերքը վայելելուց հետո, սփյուռքահայ ուսուցիչ-ուխտավորները նկարվեցին Վեհափառ Հայրապետի հետ և հրաժեշտ առին Նորին Սրբությունից:





ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱԾՐՋԱՆԸ ՊՐԱԳԱՅՈՒՄ

1985 թվականի հուլիսի 2—9-ը Պրագայում տեղի ունեցավ Խաղաղության Քրիստոնեական Համաժողովի վեցերորդ նստաշրջանը: Համաժողովին մասնակցում էին 90 երկրներից ժամանած մոտավորապես 800 ներկայացուցիչներ, հյուրեր և թղթակիցներ, կրոնական տարբեր հարանվանությունների պատվիրակներ:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին սույն Համաժողովում ներկայացնում էին Երրակի թեմի առաջնորդ Ս. Նարեկ եպս. Շաքարյանն ու Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Ս. Անանիա եպս. Արաբաշյանը:

Հուլիսի 2-ին մեր Եկեղեցու ներկայացուցիչները, Սովետական Միության Եկեղեցիների շուրջ 40 հոգուց բաղկացած պատվիրակության կապում, ժամանեցին Պրագա:

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Պրագայի Մշակույթի պալատում Համաժողովը բացեց Բոսովանայի արքեպիսկոպոս Մակուլուն, որն ընդգծեց Համաժողովի նպատակը՝ միջոցներ և ուղիներ որոնել՝ մարդկությանը փրկելու վերահաս ատոմային աղետից: Համաժողովի կարգախոս ընտրվեց «Աստված կանչում է. կյանքն ընտրի՛ր, ժամանակը չի սպասում», «Ես եկի՛ս և կենսա ունիցին, և առաւել ևս ունիցին» (Հովհ. Ժ 10) բնաբանով:

Խաղաղության Քրիստոնեական Համաժողովի նախագահ եպիսկոպոս Կարոլի Տոթը առաջարկեց մեկ րոպե լռությամբ հարգել հինգերորդ և վեցերորդ համաժողովների միջև ընկած ժամանակում մահացած գործիչների հիշատակը: Այնուհետև ընտրվեցին պանական հանձնաժողովներ:

Ապա ընթերցվեցին Համաժողովին ուղղված ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ա. Տիխոնովի, Չեխոսլովակիայի նախագահ Գուստավ Հուսակի և մի շարք այլ երկրների ղեկավարների, Եկեղեցիների պետերի ողջույնի գրերը:

Հուլիսի 3-ին հնդիկ մալաբար Եկեղեցու ներկայացուցիչ միտրոպոլիտ Մար-Գրիգորիոսը իր հիմնական Վեկուցումով կոչ արեց բոլոր քրիստոնյա Եկեղեցիներին՝ վճռական խաղաղարարական գործունեություն ծավալել երկրագնդի վրա կյանքը փրկելու համար:

Համաժողովը իր հիմնականում նիստերում լսեց հետևյալ Վեկուցումները. Կինի և Գալիցիայի միտրոպոլիտ Ֆիլարետ՝ «Համընդհանուր սպառնալիք մարդկությանը. համատարած խաղաղարարական քաղաքականություն», պրոֆ. Վալտեր Կրեկ (ԳՖՀ)՝ «Քրիստոնյա Եկեղեցիներն ու նրանց խաղաղարարական պարտականությունը», եպիսկոպոս Սերգիո Մենդես-Արսեո (Մեքսիկա)՝ «Խաղաղ համագոյակցություն և ավատագրում»:

Ապա Համաժողովը բաժանվեց հինգ աշխատանքային ենթախմբերի.

ա) «Համընդհանուր վտանգ և համընդհանուր խաղաղարարական գործունեություն»:

բ) «Քրիստոնյա Եկեղեցիները և նրանց խաղաղարարական պարտականությունը»:

գ) «Խաղաղարար ուժերի համատեղ պատասխանատվությունը՝ վերացնելու համար խաղաղության ճանապարհին կանգնած արգելքները»:

դ) «Խաղաղ գոյակցություն և ապատագրում»:

ե) «ԽՔՀ-ի աշխատանքի կառուցվածքն ու ծրագրերը»:

Հուլիսի 3-ի երեկոյան տեղի ունեցավ սովետական և ամերիկյան պատվիրակությունների առանձին հանդիպումը: Ելույթ ունեցան՝ սովետական պատվիրակության ղեկավար Կինի և Գալիցիայի միտրոպոլիտ Ֆիլարետն ու Ամերիկայի ներկայացուցիչ Ալիս Վեյմարը: Նրանք ընդգծեցին, որ սովետա-ամերիկյան հարաբերությունները պետք է պարզանա բարի կամեցողության մթնոլորտում, որովհետև հիմնականում երկու հպոր երկրների գործունեությունից է կախված աշխարհում խաղաղություն պահպանելու կարևոր հարցը: Ամերիկյան կողմը սովետական պատվիրակությանը հանձնեց հինգ կետերից բաղկացած մի առաջարկ՝ խաղաղության պահպանման ասպարեզում համատեղ գործունեության և փոխադարձ կապերի ամրապնդման վերաբերյալ:

Հուլիսի 5-ին Համաժողովի շուրջ 120 մասնակիցներին սովետական պատվիրակության հետ ընդունեց Չեխոսլովակիայում Սովետական Միության դեսպան Վ. Պ. Ալամակինը, որը ողջունեց խաղաղության Քրիստոնեական Համաժողովը իբրև առաջադեմ և խաղաղության գործին նվիրված կապակերպություն: Պատասխան ջնորհակալական խոսքով հանդես եկավ դոկտոր Կարոլի Տոթը:

Նույն օրը, երեկոյան, տեղի ունեցավ սովետական և անգլիական պատվիրակությունների առանձին հանդիպում: Անգլիա-

կան կողմը Սովետական Միության պատվիրակությանը հանձնեց համագործակցության մի առաջարկ:

Հուլիսի 6—8-ը շարունակվեցին ենթախմբերի աշխատանքները, պատրաստվեցին Համաժողովի աշխատանքները ներկայացնող փաստաթղթերը և ընտրվեցին պանապան կոմիտեների նոր անդամներ: Կրկին ԽՔՀ-ի նախագահ ընտրվեց Կարոլի Տոթը, իսկ աշխատանքների Շարունակման կոմիտեի նախագահ՝ Կինի և Գալիցիայի միտրոպոլիտ Ֆիլարետը:


Հուլիսի 8-ի երեկոյան Մշակույթի պալատում հռչակվեցին ԽՔՀ-ի հայտարարություններն ու ուղերձները՝ ուղղված աշխարհի երկրների ղեկավարներին, այլակրոն համայնքներին և քրիստոնեական եկեղեցիներին: Ապա Համաժողովը հայտարարվեց փակված, որից հետո բոլոր մասնակիցների պատվին տրվեց ճաշկերույթ ՉՍՍՀ-ի կառավարության կողմից:

Հուլիսի 9-ին սովետական պատվիրակությունը վերադարձավ Մոսկվա:

Խաղաղության Քրիստոնեական Համաժողովի վեցերորդ նստաշրջանը մեկ անգամ ևս արտահայտեց աշխարհի ողջ մարդկության անկեղծ ձգտումը՝ մեր գեղեցիկ երկիր-մոլորակը խաղաղ, առանց պատերազմի և անկործան տեսելու: Նստաշրջանը ցույց տվեց, որ կուռ են շարքերը այն ազնիվ մարդկանց, որոնք պատրաստ են վճռական պայքար մղելու համաշխարհային արդար և հարատև խաղաղության համար:

Թ.ԹԱԿԻՑ





ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԼՈՒՐԵՐ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

Սույն թվականի մարտի 13-ին, չորեքշաբթի օրը, հետ Միջինքի խաղաղական և Հանգստյան ժամերգությունների, Բաղդադի հայոց ծերանոցի Ս. Կարապետ եկեղեցում, ձեռամբ Իրաքի հայոց թեմի բարեխնամ առաջնորդ գերաջնորի Ս. Ավագ եպիսկոպոս Ասատուրյանի, տեղի ունեցավ կիսասարկավագների ձեռնադրություն՝ խարտավիակությամբ արժանապատիվ Ս. Օջական քահանա Գլըճյանի:

Հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ երեք երիտասարդներ՝ Պաղտասար Ավետիսյան, Սիմոն Հովհաննեսյան և Սարգիս Հովհաննեսյան, ծնկաչոք մոտեցան առաջնորդ սրբազան հորը՝ ստանալու համար բազկուրար կրելու արտոնություն:

Սույն հոգեպարար արարողությանը մասնակցեցին Իրաքի հայոց եկեղեցու քահանայից, սարկավագաց ու դպրաց դասերը, նորընծաների ծնողները, հարապատներն ու հավատացյալների խումբներում բազմություն:

Ձեռնադրության արարողության ավարտին առաջնորդ սրբազան հայրը տվեց իր հայրական պատգամն ու խրատականը:

Ս. ԱՎԱԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻ ԽՈՍՔԸ

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

Սիրելի հավատացյալներ,

Ահավասիկ Ձեր առաջ այս երեկո, խաղաղական և Հանգստյան հոգեշեն ժամերգությանց ավարտին, կատարեցինք կիսասարկավագներու ձեռնադրություն, որով մեր եկեղեցւոյ երիտասարդ և ուսյալ պավակներեն երեքը կոչեցինք կիսասարկավա-

գության աստիճանին, զանոնք արժանի գտնելով այդ կոչումին:

Իհարկե երբ եկեղեցին Աստուծոյ անհաս ողորմածության ջնորհիվ կտնօրինե բաշխումը ձեռնադրության ճանապարհով, խորին խորհուրդով մը կշնորհվի, կտրվի Ս. Հոգիի կենարար մխիթարանքը և օրհնությունը: Այս ջնորհաբաշխումով Ս. Հոգին կիջնե բոլորիս վրա հավասարապես, անոնց՝ որոնք կձեռնադրեն, անոնց՝ որոնք կձեռնադրվին և անոնց՝ որոնք ներկա կըլլան ու իրենց «ամէն»-ներով կմասնակցին ձեռնադրության:

Սույն հանդիսության սկիզբը երգեցինք «Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի» սրտաշարժ շարականը, որով երկրայիններուս վրա ավետիս իջավ: Իրապես ցնծալի ու օրհնալ է ամեն պահ, երբ երիտասարդ անձինք մանավանդ, ինչպիսիք են նորոգ ձեռնադրալ մեր երեք կիսասարկավագները, իրենց մատղաշ տարիքը, իրենց գարուն կյանքը կպարգենն եկեղեցւոյ, կնվիրաբերեն մեր ազգի հոգևոր մշակույթի առավել ամրապնդման և մատակարարման:

Անցյալ քանի մը տարիներու ընթացքին, մենք այսպիսի այլ ձեռնադրություններ կատարեցինք, դպրաց, կիսասարկավագաց, սարկավագաց և ապա երկու քահանայական ձեռնադրություններ: Դուք ալ ներկա եղաք այդ հոգեպարար արարողությանց: Եվ ահա այս երեկո կրկին անգամ ձեր ներկայության կատարեցինք կիսասարկավագներու ձեռնադրություն: Այսպիսով, եկեղեցւոյ տարբեր նվիրական պաշտոններու ծառայության կոչած եղանք տասնհինգ անձեր: Ինչպես գիտեք, կան երեք այլ երիտասարդներ, որոնք այս և հաջորդ երեք տարիներին մեր անմի-

ջական հսկողության ներքո կհետևին Առաջնորդարանի սահմանած դասընթացներուն, կպատրաստվին քահանայական բարձր ու վեհ կոչումին: Ու ես կհավատամ, որ այս իրադրությունը նշան մըն է՝ մեր Մայր եկեղեցվո կենսունակությունը հաստատող:

տարիներու հերոսական պատմությունը մը ունի և 350 տարիներու փորձառություն ունի այստեղ՝ Սուրբ Գրական Տիգրիսի և Եփրատի ափերուն վրա, ահավասիկ հեղ մը ևս երիտասարդացավ քիչ առաջ կենսագործված ձեռնադրության խորհուրդով:



Տ. Ավագ եպիսկոպոս Ասատուրյանը երեք կիսասարկավագների հետ

Մենք հույժ ուրախ ենք, որ այս երեք երիտասարդները, տարիներով ծանոթ և՛ մեզի, և՛ ձեզի, իրենց դալար տարիքը և իրենց ստացած բարձրագույն ուսումը ի սպաս կդնեն մեր Մայր եկեղեցվո պայծառության: Ահա թե ինչպես և ինչ հիման վրա հայոց եկեղեցին ալ, նման այլ ավանդական եկեղեցիներու, դարերու հողովությով մնացած է երիտասարդ, թեև 2000 տարիներ սահած են անոր հիմնադրության օրերեն: Ամեն անգամ երբ երիտասարդ մը իր անձը կնվիրաբերե Աստուծո ծառայության, եկեղեցին նոր ավիշ ստանալով կվերանորոգվի ու կերիտասարդանա: Երեք ձեռնադրյալներեն մին քանի մը ամիսներե ի վեր վկայալ բժիշկ է արդեն, երկրորդը՝ ճարտարապետ է, իսկ երրորդը՝ այս տարի ընթացավարտ պիտի ըլլա Էլեկտրագիտական ճյուղեն:

Այս րոպեին ներքին հրճվանք մը կպարուրե հոգիս, քանզի այս երեկո ևս Հայաստանայոց Առաքելական Եկեղեցին, որ 1700

Մենք, սիրելի կիսասարկավագներ՝ Պաղտասար, Սիմոն և Սարգիս, ձեր վրա հրավիրեցինք աստվածային և երկնային օրհնությունը, քահանայից դասի մասնակցությամբ և ձեր հարապատներու ներկայությամբ: Այս նվիրական պահուն ընդունեցեք մեր հայրական սերն ու համակրանքը ձեր անձերուն հանդեպ, ինչպես նաև մեր ժողովուրդի աղոթքներն ու բարեմաղթությունները: Ու մեր ինքնաբույս ապրումները՝ ծրարված ապագայի լավատեսությամբ, պահեցեք ձեր ազնիվ սրտերուն մեջ, որպեսզի հաջորդող տարիներու ընթացքին այսօրվա շնորհները ձեզի տաքուկ պահեն հավատքի մեջ և ձեզի ընդմիջտ հիշեցնեն 13 մարտ, 1985-ի Միջինքի նվիրական օրը:

Ես վստահ եմ, որ մեր ժողովուրդը սույն հանդիսության ավարտին պիտի մոտենա ձեզի շնորհավորելու և դուք անոնց սրտեն ու հոգիեն բխած մաղթանքները պիտի ընդունիք իբրև մեծագույն պարգևը, որը կտրվի



որևէ մեկուն: Իսկ փոխարենը՝ դուք պարտիք փառք տալ Աստուծո, հավատարիմ մնալ մեր եկեղեցվո որպես դաստիարակ մայրը ձեր, հավատարիմ մնալ մեր մշակույթին ու ավանդությանը և երախտապարտությամբ ծառայել մեր ժողովուրդին: Ձեր կարողությունները ի գործ դնելով անոր վերելքին համար:

Ձեզի նորանոր ներշնչանքներ կցանկանք Տիրոջ անդաստանին մեջ: Ամեն:

Այնուհետև սրբապան հայրը հրավիրեց բոլոր ներկաներին՝ շնորհավորելու նորընծա կիսասարկավագներին:

Ի պատիվ նորընծաների ազգային ծերանոցի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ մտերմիկ ընդունելություն:

ԼՈՒՐԵՐ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

Առաջին անգամ հայերը ոտք են դրել Բուլղարիայի հարավային տարածքի վրա (Թրակիա) դեռևս Ե դարում: Դրանք եղել են փնվորական զնդեր, որոնք Վարդանանց պատերազմից հետո խույս տալով պարս-

ձածին եկեղեցին հիմնադրվել է ԺԷ դարում և հիմնական վերանորոգման ենթարկվել 1805 թվականին: Իր պատմական պարզաման ընթացքում Ս. Աստվածածին եկեղեցին, իր հոգևոր դասով և եկեղեցու վարչության



Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիրոսյանը, Տ. Հակոբ քին. Խաչիկյանը և Ռուսեի հայոց Ս. Աստվածածին եկեղեցու վարչության անդամները

կական հալածանքներից, 460-ական թվականներին ապաստան են գտել այս հյուրընկալ հողում: Այնուհետև հետագա դարերում (մինչև ԺԺ դար) հայերը պարբերաբար գաղթել են Բուլղարիա՝ այնտեղ հիմնելով իրենց մշակույթը, եկեղեցին և ազգային-եկեղեցական բուռն կյանքը:

Բուլղարիայի Ռուսե քաղաքի Ս. Աստվա-

նդամներով, մեծ դեր է խաղացել հայապահպանության նվիրական գործում:

Վերջերս տեղի ունեցավ Ս. Աստվածածին եկեղեցու վարչության կազմի վերընտրությունը՝ նախագահությամբ Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսյանի և մասնակցությամբ նորընծա

արժանապատիվ Տ. Հակոբ քահանա խաչիկյանի:


Ս. Աստվածածին եկեղեցու վարչության

նորակալման նշաններին մաղթենք հաջողություն՝ իրենց ապգանվեր և եկեղեցաշեն շնորհակալ գործունեության մեջ:

ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ • ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՖԻԱՅՈՒՄ

Սույն թվականի մայիսի 26-ին, կիրակի օրը, առավոտյան, Սոֆիայի հայոց Ս. Աստվածածին եկեղեցում Հոգեգալստյան տոնի

առթիվ ս. պատարագ մատուցվեց, որից հետո կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ 1922 թվականից հետո բուլղարահայ թեմում



Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյանի տապանաքարը

պաշտոնավարած երեք առաջնորդների՝ երջանկահիշատակ Ս. Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանի, Ս. Երվանդ արքեպիսկոպոս Փերտահճյանի և Ս. Գրիգոր եպիսկոպոս Կարապետյանի հիշատակին:

Հոգեհանգստյան արարողությունից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Ս. Գարեգին ավագ քահանան, որն իր խոսքի մեջ ի մասնավորի վեր հանեց երեք առաջնորդների կատարած կարևոր դերը բուլղարահայ գաղութի կյանքում:

Այնուհետև եկեղեցու հոգևոր դասն ու հոգեհանգստյան արարողությանը ներկա հավատացյալների բազմությունը ուղղվեց քաղաքի հայոց գերեզմանատուն, որտեղ մասնավոր արարողությամբ ծաղկեպսակներ պետեղվեցին երեք հոգեվույս առաջնորդների շիրիմներին:

Ապա Հոգեգալստյան տոնի առթիվ տրվեց ճաշկերույթ:

Երջանկահիշատակ այս երեք առաջնորդների ջարքում իր ուրույն տեղն ունի Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանը, որի մահվան 50-ամյակը լրացավ ապրիլին:

Նիկոմիդիայի նախկին առաջնորդ Ստեփաննոս սրբազանը Մեծ եղեռնի ջարդերից հետո, 1922 թվականին, իր հոտի հետ գաղթեց Բուլղարիա և առաջնորդական պաշտոնը ստանձնեց՝ ձեռնհասորեն և իմաստուն կերպով սատար կանգնելով իր ժողովրդի հոգսերին ու ձգտումներին:

Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանը վախճանվել է 1934 թվականի ապրիլի

10-ին: Այնքան մեծ են Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանի ծառայությունները բուլղարահայ (և ոչ միայն բուլղարահայ) թեմում, որ նա այժմ էլ ապրում է իր ժողովրդի հոգում: Նրա շիրիմը այսօր էլ ուխտատեղի է իր հարապատ հոտի համար: Հանգուցյալ սրբազանի գերեզմանին կա հետևյալ տապանագիրը.

«Հանգչին ոսկերք

Ս. Ստեփաննոս սրբազան արքեպիսկոպոսի Յովակիմեան
Ծն. 12 յունիս 1846 ի Տաղ գիւղ
Չեռնադրեալ վարդապետ 1873
Ու եպիսկոպոս 1886 յամին
Վախճանեալ 10 ապրիլ 1934

Մեծ վարդապետս այս մեր պգօս
Գերահռչակ և պգաստ
Ծնեալ յերկիրն Նիկոմիդիոյ
Իննսունամեայ հանգեաւ աստ
Յովակիմեան համեստ պարմէն
Մաքրածնունդ բարեբաստ
Դեռ մանկութեան սուրբ հաւատովն
Բնաւորեալ ճոխիմաստ
Ստեփաննոս արհիապանծս
Մեծ շինարար Բիւթանիոյ
Հռչակեցաւ յոյժ ապգասեր
և առաջնորդ Պովկարիոյ»

«Յիշէք, եղբարք, պլաստական մեր և պջան, պի պցայգ և պցերեկ գործէաք վասն չծանրանալոյ ումեք ի ձէնջ, և քարոպէաք ձեպ պաւետարանն Աստուծոյ» (Ա Թեսաղ. Բ 9):

ՀԱՄԱՐԱՐՁՄԱՆ ՏՈՆԸ ՓԱՐԻԶՈՒՄ

ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՕՐ

Փարիզի հայոց եկեղեցու հաստատման առաջին իսկ օրից գեղեցիկ ավանդություն է եղել, որ Համբարձման տոնին հայ մանուկները Ս. Հաղորդություն ստանան:

Ինչպես ամեն տարի, այս տարի նույնպես Մայր եկեղեցու Դիվանի հայտարարությամբ Փարիզի և շրջանի բոլոր դպրոցների աշակերտներն ու մանուկները հրավիրվեցին Ս. Պատարագի և Ս. Հաղորդության:

Սույն թվականի մայիսի 16-ին, Համբարձման տոնի օրը, հայ մանուկներն ուրախ տրամադրությամբ, իրենց ծնողների և ավագ ընկերների ուղեկցությամբ, կրկին լցրեցին Փարիզի հայոց Ս. Հովհաննես Սկրտիչ Մայր եկեղեցին:

Պատարագից առաջ եկեղեցու հոգևոր հովիվներ Ս. Ասողիկ արեղա Արիստակեսյանն ու Ս. Ավետիս քահանա Պալըզյանը, հրապարակային խոստովանությունից հետո, մանուկներին հրավիրեցին ս. պատարագի ունկնդրության:

Օրվա հանդիսադիր պատարագիչն էր Ս. Ներսես Ժ. վրդ. Բապունձյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց Ս. Գյուտ եպիսկոպոս Նագազյանը: Իր գեղեցիկ քարոզի սկզբին առաջնորդ սրբազանը նախ տվեց Քրիստոսի Համբարձման աստվածաբանական բացատրությունը, ապա վեր հանեց Հաղորդության խորհրդի կենսական նշանակությունը, շեշտեց, որ մանուկների կյանքում Հաղորդությունն ունի քրիստոնեական դաստիարակչական դրական մեծ նշանակություն:

Այնուհետև բացատրեց Քրիստոսի խոս-

քը՝ «Թույլ տվեք այդ մանուկներին և մի արգելեք, որ նրանք ինձ մոտ գան, որովհետև երկնքի արքայությունը այդպիսիներին է» (Մատթ. ԺԹ 14):

Ապա սրբազան հայրը կոչ արեց մանուկների ծնողներին, որ նրանք հետ այսու էլ

ավելի պորացնեն Քրիստոսի լույսը մանուկների սրտերում:

Հավարտ ս. պատարագի տեղի ունեցավ հյուրասիրություն՝ Մայր եկեղեցու Տիկնանց Հանձնախմբի կողմից:

ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ





ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՂՈԹՔԸ՝ ԽԱՂՈՂՆ ՕՐՀՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ով Տեր Աստված, անսկիզբ Հայր, անստեղծ և անմահ բնություն, Դու, որ ինքնագո ես և չգոյությունից գոյացնում ես բոլոր եղածները, Դու, որ Քո արարչության երրորդ օրում հրամայեցիր, որ հողը տուրկեր և վանապան պտղաբերության բույսեր աճեցնի՝ զգայական և շնչավոր կենդանիների կարիքների համար: Նրանց հետ նաև Քո վայելչության դրախտի ծառը տնկեցիր՝ ի վայելումն և ի բնակություն բանական արարածներին, որ և օրհնեցիր ըստ աստվածային խոսքի, թե «Աստված տեսավ, որ շատ լավ են, և Աստված օրհնեց նրանց»:

Իսկ երբ մարդը խախտեց Քո պատվիրանը՝ ճաշակելով արգելված պտուղը, Քո օրհնությունը, որ կար երկրի և նրա պտուղների վրա, անեծքի վերածեցիր Ադամին ասելով. «Թող երկիրը անիծված լինի քո գործերի պատճառով»: Եվ սա արդար դատաստան էր, որովհետև ինչպես որ գլխի մահից հետո անկարելի է, որ անդամները ապրեն, այնպես էլ, անկարելի է, որ արարածների գլուխ՝ մարդու մեռնելուց հետո, երկրի ծառայական բնությունն անփոփոխելիորեն ենթակա մնար Քո կենդանարար օրհնության խոսքին:

Իսկ հետո Քո հայրական թաքուն սերը հայտնեցիր մարդկային ցեղին՝ ուղարկելով Քո Միածին Որդուն, որպեսզի մարմնով գավազան բխեցնի Հետուի արմատից և վայելուչ և անուշահոտ ծաղիկ աճի անարատ կույս Մարիամից: Եվ մահկանացու բնությունը կենաց և անմահության պտուղ դառնա: Նրանով խաչի վրա դարձյալ օրհնեցիր համայն տիեզերքը Քո անսուտ խոստումով, որ տրվեց հավատքի հայր Աբրահամին, թե «Քո վավակի միջոցով պիտի օրհնվեն աշխարհի բոլոր ազգերը»: Եվ եթե

անեծքի դատապարտությունը տիրեց բոլորի իշխանին (մարդուն—Ե. Մ.) և նրա իշխանության տակ գտնվածներին, որքան առավել մարդկային բնության օրհնության հետ՝ զգայական բնություն ունեցող արարածները վերստին պիտի հաղորդվեն աստվածային օրհնություններին. բոլորից առավել՝ ողկույզի պտուղը, որից խաղողի արյունը արժանի դարձավ մեծագույն շնորհների օրհնության՝ Քո Միածին Որդու փրկական արյան նյութը լինելով: Որով գտնվելով ազատվեցինք մեղքի և մահվան ծառայությունից: [Եվ] Խորհուրդի վերնատանը այն իր ձեռքն առնելով օրհնեց ասելով.

«Այս է Իմ արյունը», [այս գինին] և նրա բոլոր համասեռները նույն պտուղով ստացան կատարյալ օրհնությունը: Եվ արդ, ով Տեր, նույն օրհնությամբ, որով առաջին և երկրորդ արարչության ժամանակ օրհնեցիր Քո կողմից բարի ստեղծված արարածներին:

Օրհնիր և այժմ, Ահարոնի վաղեմի քահանայության պես, Քեզ նվիրվող այս տարվա նոր պտուղի առաջնեկը՝ խաղողի այս ողկույզը: Ինչպես Իսրայելի տոհմում Մովսեսի ձեռքով օրենք սահմանեցիր, որ վրկայության խորանի առջև Քեզ նվիրեն բոլոր պտուղների առաջին բերքը, որպեսզի այս հատուկ ընծաներով բոլոր պտուղներն ստանան Քո օրհնությունը, այնպես էլ այս նվիրված պտղին խառնելով միացրու Քո աստվածային և հոգևոր օրհնությունը: Եվ թող այս նյութականը ճաշակելով Քո օրհնության իմանալի շնորհը միանա ճաշակողների հոգիներին՝ ստանալով մաքրություն և մեղքերի թողություն այս ճաշակումով, որով և արժանավոր դառնանք ճաշակելու կենաց ծառի պտուղը, որ հրեշտակ-

ների դասին հրամայեցիր պահել բոցեղեն սրով: Եվ մենք անմահանալով անմահների դասի հետ միշտ փառավորենք Քեզ՝ Որդուդ և Ամենասուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս, ամեն.

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Օրինյալ ես, ով Որդի և Հոր Խոսք, Դու, որ անբացատրելի առաջին լույսի ճառագայթն ես, աներևույթ Աստուծո կերպարանքն ես ու պատկերը, գոյակից ես նրան և արարչակից՝ արարածներն ստեղծելիս, Դու, որ խոսքով ասացիր՝ և եղան, հրամայեցիր՝ և հաստատվեցին, որովհետև Քո իմանալն ու կամենալը կատարյալ գործ է: Դու փայտյա տունկերից տկարը՝ որթատունկը, պտղի օգտակարության պատճառով, ստեղծեցիր ավելի զորավոր, քան բարձրագույն ծառերը, այլև Քեզ գերագույնիդ օրինակ դարձնելով պատվեցիր այն, Քեզ անվանեցիր որթատունկ, Քեզ սիրով կապվածներին՝ ուռ և Քո Հորը՝ խնամող և մշակ, որպեսզի արդարության գործի պտղաբերումը մաքրի հատողների օրենքով, նրանցից անպտուղները կտրի և դեն նետի՝ որպես ճերմակ հավիտենական կրակի:

Մարգարեների միջոցով ցույց տվեցիր, որ խաղողը ցրում է տրամությունը և ուրախություն է պատճառում. «Գինին ուրախացնում է»,—ասաց ըստ մարմնի Քո Հայրը: Արդ, նրա Որդին հրամայում է գինի տալ նրանց, որոնք տխրության մեջ են: Դու, վերնատանը տվեցիր կրկնակի ուրախարար բաժակը՝ Քո քավիչ արյունը և հոգու իմաստությունը, որով և նշանակեցիր այս խորհուրդը: Եվ իբրև օրինակ՝ Մեքսիկեղեկը հաց և գինի մատուցեց Աբրահամին: Նույնը և Նոյի միջոցով հայտնեցիր, որ տխրել էր աշխարհի ջրհեղեղով ապականության պատճառով՝ տալով նրան սա իբրև մխիթարություն, որովհետև, ինչպես Գիրքն է ասում, Նոյը տրեկեց առաջին այգին, խմեց գինուց և սքանչացավ արդարը:

Թեպետ Քո կողմից տրվեց իբրև բարի պարգև, սակայն սրա հետ ոչ խելացի վար-

վողների համար արբեցությունը պատճառ է դառնում նրանց անձերի չարության, ինչպես Քո բարի ստեղծածներից շատ բաների պարագային:

Եվ արդ, ով Տեր, Քո փառքի անվան տաճարին նվիրված ողկույվների այս բերքը օրինիր սկզբնական օրհնությամբ, ինչպես օրհնեցիր ապոխը, որ կար ողկույվների մեջ: Եվ նրանց, որ ճաշակում են այս օրհնյալ բերքից, Քո կողմից շնորհիք մեղքերի թողություն, հոգու և մարմնի առողջություն: Սրանից հավատքով ճաշակողներին հնարավորություն տուր ավազակի հետ ճաշակել դրախտի անմահական պտուղից:

Օրհնիր, ով Տեր, այս նոր պտուղը ընծայող նվիրատուներին և նրանց այս անցավոր պտուղի փոխարեն անմահ կենաց վախճություն պարգևիր:

Օրհնիր, ով Տեր, և որթատունկերը, և այն այգիները, որոնցից կտրվեցին օրհնության ողկույվները և նվիրվեցին սուրբ եկեղեցուն, և արա այնպես, որ նրանք պտղաբերությամբ լինեն առատաբեր և բավաբերուն՝ պարարտ և բարեբեր հողի նման:

Եվ այգեստանների դաշտերը, որտեղից բերված են այս ընծաների պտուղները, անփորձանք պահիր, ով Տեր, բոլոր պատուհասներից, որոնք, մեր մեղքերի պատճառով վերևից են իջնում. կարկուտից, ցրտահարող սառնամանիքից, խորշակահար քամիներից և վնասակար ճիճուներից, որպեսզի այս աշխարհում վայելելով Քո նյութեղեն բարիքները, որ շնորհեցիր մեզ ի վայելումն՝ Քո փառքի համար, Քեզ հետ ուտելով և խցմելով արժանի լինենք ամենալի որթատունկի բերքին՝ Քո Հոր արքայության սեղանին ըստ անսուտ խոստումի, որ տրվեց Քո կողմից, ի պատիվ և ի փառք հալմագո Երրորդությանդ՝ Հոր, Որդու և Ամենասուրբ Հոգու, որին վայել է փառքը, իշխանությունը և պատիվը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

Թարգմանությունը՝ Ե. ՄԵԼԲՈՆՅԱՆԻ

(«Ճաշոց», Վաղարշապատ, 1872, էջ 595—597)



ՀԱՅՈՑ ՊԱՏԱՐԱԳԸ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԹԱՇՉՅԱՆԻ ԳՐԱՌՄԱՄԲ

Հայոց Պատարագը, որի անմիջական պոետիկության տակ կապմակերպվել է Գրիգորյան խորալը՝ կաթոլիկական ժամերգության, և դրանով իսկ վաղ միջնադարյան Եվրոպայի ողջ մասնագիտացված երաժշտության հիմքը¹, հանդիսանում է երաժշտական արվեստի համամարդկային գանձարանի, կարևորագույն արժեքներից մեկը: Լինելով պաշտամունքային երաժշտության արտահայտություն, Պատարագը, շնորհիվ իր գեղարվեստական բարձր արժանիքների, կիրառական նշանակության հետ միասին ունի նաև գեղագիտական մեծ արժեք, ինչպես հայոց միջնադարի պաշտամունքային կառույցները կամ մանրանկարչության և եկեղեցական գրականության ստեղծագործությունները: Միաժամանակ Պատարագը գիտական հետազոտության անսպառ նյութ է բովանդակում: Ստեղծվել են Պատարագին նվիրված մի շարք աշխատություններ, այդ թվում և երաժշտագիտական²: Սակայն առ այսօր վերջինիս երաժշտական բովանդակությունը մանրամասնորեն չի ուսումնասիրված: Սույն հոդվածում մենք կփորձենք քննության առնել Պատարագի երաժշտական հորինվածքը, լադային կառուցվածքը, մեղեդիական ոճը և այլ բաղադրամասերը:

Պատարագը (Литургия, месса, обедня), ինչպես հայտնի է, քրիստոնեական եկեղեցու ամենահանդիսավոր ծեսն է, սուրբ հաղորդության արարողությունը, որը նվիրված է Քրիստոսի և նրա աշակերտների խորհրդավոր ընթրիքի հիշատակին: Դրա հետ մեկտեղ Պատարագ է կոչվում նաև նշված ծեսին ուղեկցող հոգևոր երգերի շարքը³: Տվյալ իմաստով Հայոց Պատարագը քրիստոնեական Արևելքի մասնագիտացված գրավոր երաժշտության հնագույն կոթողներից է: Միաժամանակ այն իր տեսակի մեջ առավել վաղ նմուշներից մեկն է համամարդկային երգարվեստում:

¹ В. Дж. Конен, Значение внеевропейских культур для профессиональных композиторов XX века («Советская музыка», 1971, № 10, с. 51.).

² Արսեն քահ. Թորոսյան, Աստվածային պատարագամատույց կամ խորհրդատետր սըրբական պատարագի, Սյու-Յորք, 1933, Սպ. Մելիքյան, Մակար Եկմայանի դերը և տեղը հայ երաժշտության պատմության մեջ, («Էջմիածին» 1977, № 7, էջ 33—39), Մ. Մուրադյան, Հայկական պատարագը և նրա մշակումները («Հայկական արվեստ, ժողովածու, Երևան, 1984, № 2, էջ 149—164) և այլն:

³ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Երևան, 1980, հ. 4, էջ 168:

Հայոց Պատարագը ծնունդ է առել IV դարի վերջում, երբ Հայաստանում քրիստոնեության հաստատման և հայոց գրերի գյուտի շնորհիվ իր ձևավորման առաջին փուլն էր թևակոխում հայ հոգևոր երգաստեղծությունը, ազգային երաժշտական մշակույթի մասնագիտացված ճյուղը, որը փոխարինեց հեթանոսական տաճարի երաժշտությանը⁴։ Իր ստեղծման ժամանակից Պատարագը, ինչպես և ողջ հայ հոգևոր երաժշտությունը⁵, անցել է վարգացման երկարատև ճանապարհ, որի մի քանի ոլորտները ներկայացնում ենք ստորև։ Այդ վարգացման գլխավոր ուղղվածությունն էր Պատարագի ակներև «հայացումը», քանի որ Պատարագը ներմուծվել էր Հայաստան հույն և ասորի կրոնավորների կողմից։ Պատարագի «հայացման» միտումն իրականացվում էր ժողովրդական ծագման սաղմոսների օգտագործման, հայկական ութ ձայնի վրա հիմնված, ինչպես նաև ժողովրդական և գուսանական երաժշտության տարրերով հագեցած յուրօրինակ հոգևոր երգերի ստեղծման և այլ ճանապարհներով⁶։ Ժամանակի ընթացքում զգալիորեն մեծացավ Պատարագի ծավալը՝ ի հաջիվ նոր հոգևոր երգերի ներառման և նոր մասերի ձևավորման։ Ձևափոխվեց և նրա մեղեդիական ոճը։ Հնում առկա էր սիլաբիկ՝ սաղմոսների մեղեդիական ոճը, որը հիմնված է վանկ-հնչյուն հարաբերության վրա⁷։

Երաժշտական բաղադրամասի խորացման շնորհիվ Պատարագի հոգեվոր երգերում հետպիտե գոյանում ու վարգանում են խմբերգային և մենակատարման երգեցողության ավելի երգային ձևեր⁸, որոնցում աստիճանաբար կազմակերպվում է մեղիվմատիկ (վարդհնչյունային) մեղեդիական ոճը։

Պատարագի վարգացման առավել կարևոր փուլերը կապված են հայոց երեք կաթողիկոսների՝ Ներսես Մեծի (IV դար), Հովհան Մանդակունու (V դար) և Ներսես Շնորհալու (XII դար) անվան հետ⁹։ Հատկապես մեծ դեր խաղաց Ներսես Շնորհալին։ Շնորհիվ նրա բեղմնավոր բարենորոգչական գործունեության, Հայոց Պատարագը հասավ գեղարվեստական կատարելության և մտավ համաշխարհային մոնոդիկ երգարվեստի լավագույն էմուլների շարքը։ Շնորհալու գործունեության հետ են կապված, մասնավորապես, տաղի ներմուծումը Պատարագի մեջ¹⁰, ինչպես նաև հայ աշխարհիկ երաժշտության տարրերի (ռիթմերի) լայն և համարձակ օգտագործումը հոգևոր երգերում, որ լիարյուն «երկրային» հնչողություն հաղորդեց Պատարագին¹¹։

Պատարագի գրառումը սկզբնապես կատարվել է խաչային համակարգի միջոցով։ Վերջինիս կորստի հետևանքով Պատարագը որոշ ժամանակ բանավոր կերպով էր փոխանցվում սերնդից-սերունդ։ XIX դարում, շնորհիվ հայ-

⁴ Ն. Թահմիզյան, Բնական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության (ՀՍՍՀ ԳԱ «Լրագրեր», 1971, № 1, էջ 44, 46)։

⁵ Հարկ է նշել, որ Պատարագում հայ մոնոդիկ (միաձայն) մասնագիտացված երաժշտության ամենամեծ և նշանակալից երկում ավելին, քան այլուր ընդհանրացել և արտահայտվել են հայ հոգևոր երգարվեստի առավել բնորոշ առանձնահատկությունները և՛ վարգացման կարևորագույն միտումները։ Այդ պատճառով մեր ասածը Պատարագի մասին հավասարապես վերաբերում է նաև հայ հոգևոր երաժշտությանը ընդհանուր առմամբ։

⁶ А. Шавердян, Очерки по истории армянской музыки XIX—XX веков, М., 1959, с. 32. Ն. Թահմիզյան, նշվ. հոդվ., էջ 46, 47։

⁷ Ю. Евдокимова, История полифонии. Многоголосие средневековья X—XIV века, М., 1983, с. 13.

⁸ Н. Тагмизян, Музыкальная энциклопедия, т. 4, с. 205.

⁹ Արսեն քահ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 28։

¹⁰ Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973, էջ 41։

¹¹ Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհալին..., էջ 44։

կական նոտագրության (Լիմոնջյանի սխտեմի)¹² ստեղծման և հայերի շրջանում եվրոպական նոտագրության տարածման, վերականգնվեց հայ երաժշտության նմուշների գրառման հնագույն ավանդույթը: Որպես հետևանք, ի թիվս այլոց, նորից գրառվեց Պատարագը, այս անգամ հայկական նոտագրության միջոցով՝ Լիմոնջյանի աշակերտների և հետնորդների, կոստանդնուպոլսեցի երաժիշտներ Արիստակես Հովհաննիսյանի, Գաբրիել Երանյանի, Եղիա Տընտեսյանի և ուրիշների կողմից: Դրա հետ մեկտեղ Պատարագը գրառվեց նաև եվրոպական նոտագրությամբ՝ Վիեննայում, Վենետիկում (մխիթարյանների ջանքերով), Կալկաթայում և այլուր¹³:

Պատարագի երաժշտական բովանդակության ուսումնասիրության նպատակով նրա՝ այժմ գոյություն ունեցող ընթերցների խմբագրություններից որպես սկզբնաղբյուր նախընտրեցինք Նիկողայոս Թաշչյանի գրառումը (հայկական նոտաներով): Այս գրառումը կատարվել է անցյալ դարավերջին: Թաշչյանի Պատարագը նմանօրինակ աղբյուրների՝ այսինքն Պատարագի XIX դարում գրառված տարբերակների մեջ, առանձնակնում է իր նյութերի առավել լիարժեքությամբ և ռճական մաքրությամբ¹⁴: Նիկողայոս Թաշչյանը, որ կոստանդնուպոլսեցի երաժիշտ էր, Լիմոնջյանի աշակերտի աշակերտը, Պատարագը գրառել և հրատարակման է նախապատրաստել Վաղարշապատում¹⁵: Թաշչյանի գրառմամբ «Երգեցողությունը սրբոյ Պատարագի» լույս են տեսել երկու անգամ՝ 1874 և 1878 թվականներին: Մեր հետապնդման առարկան վերջին հրատարակությունն է:

Թաշչյանի «Երգեցողությունը սրբոյ Պատարագի» մեջ գետնդրված են Պատարագի չորս տարբերակներ, որոնք նախատեսված են հայ եկեղեցական օրացույցի որոշակի օրերին կատարվելու համար: Այդ տարբերակներն են «Վասն Կիրակեից և այլոց հանդիսաւոր աւուրց», «Վասն լուր աւուրց», «Վասն Տաղաւարաց» և «Վասն Մեծի Պահոց», որոնց բնագրերն ու ծավալը ընդհանուր առմամբ համընկնում են¹⁶:

Այդ տարբերակների ինքնուրույնությունը, որ կանխորոշված է եկեղեցական օրացույցով, բխում է գրական նույն բնագրի երաժշտական տարբերմարմավորման սկզբունքից: Վերջինս հայ հոգևոր երաժշտության՝ դարերի խորքից մեզ հասած ավանդական առանձնահատկություններից է¹⁷: Դրա հետևանքով առաջացած նույն հոգևոր երգի մեղեդիական զանազան տարբերակները մեծ մասամբ ներկայանում են իրենց ուրույն բնույթով, ինտոնացիոն բովանդակությամբ, մեղեդիական ռճով և այլն: Համեմատենք «Նորիհուրդ խորինի» երկու տարբերակները¹⁸:

¹² Լիմոնջյանի սխտեմ՝ այսպես է կոչվում հայկական նոտագրությունը նրա ստեղծողի՝ կոստանդնուպոլսեցի երաժիշտ Համբարձում Լիմոնջյանի անվամբ:

¹³ Մ. Մուրադյան, նշվ. հոդվ., էջ 152—153:

¹⁴ Н. Тагмизян, Теория музыки в Древней Армении, Ереван, 1977, с. 8.

¹⁵ Պատարագի հետ միաժամանակ Թաշչյանը Վաղարշապատում գրառեց նաև (նույնպես Լիմոնջյանի սխտեմով) հայ երաժշտության երկու կարևորագույն ժողովածուներ՝ «Շաբակները» և «Ժամագիրքը», որոնք լույս տեսան համապատասխանորեն 1875 և 1877 թվականներին:


¹⁶ Բացառություն են կազմում. «Սուրբ Աստուած»-ի և «Տէր ողորմեա»-ի բնագրերի որոշ անհամապատասխանությունը Պատարագի զանազան տարբերակներում, ինչպես նաև «Նորիհուրդ խորին»-ի և «Բարեխօսութեամբ»-ի բացակայությունը Դ տարբերակում:

¹⁷ Ն. Թանմիզյան, Ներսէս Շնորհալին..., էջ 77:

¹⁸ Հոդվածում ներկայացված բոլոր երաժշտական օրինակները հայկական նոտագրությունից եվրոպականի են փոխադրել Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի տեսական-կոմպոզիտորական բաժնի ուսանողները՝ հույլվածի հեղինակի ղեկավարությամբ:



Առաջինը խստաշունչ է: Ունի պարզ և անպաճույճ երաժշտական լեզու: Երկրորդ տարբերակը քնարական բնույթի է: Այն հիմնված է երգեցողության լայնաշունչ կանտիլենային եղանակի վրա: Նշենք նաև «Սուրբ Տէր պօրութեանց», «Միայն սուրբ», «Օրինութիւն» և այլ հոգևոր երգերի տարբերակները¹⁹: Ելնելով այս հանգամանքից, կարծում ենք, որ Թաշչյանի գրառած Հայոց



¹⁹ Դրա հետ մեկտեղ նշենք նույն հոգևոր երգի մեղեդիական տեսակետից մոտ տարբերակների գոյությունը, օրինակ՝ «Բարեխօսութեամբ» Պատարագի I և II տարբերակներում: Որոշ հոգևոր երգեր՝ «Սուրբ Աստուած», «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», մեղեդիական անփոփոխ կամ աննշան փոփոխված ձևով են հանդես գալիս Պատարագի բոլոր տարբերակներում:

Պատարագի չորս տարբերակները, հենվելով գրական նույն հիմքի վրա, մեղեդիական տեսակետից ներկայանում են որպես հոգևոր երգերի ինքնուրույն շարքեր: Ավելացնենք նաև, որ մի շարք հոգևոր երգեր մեղեդիական այլապի հանդերձներ ունեն ոչ միայն Պատարագի պանապան տարբերակներում, այլև մեկի սահմաններում: Օրինակ՝ առաջին տարբերակի «Սուրբ Աստուած»:

Նույն տարբերակի «Տէր ողորմեան» և այլն:

Հայոց Պատարագի ծեսը բազմամասն է²⁰: Համապատասխանորեն բազմամասն է և նրա երաժշտական կառուցվածքը²¹.

1. Խորհուրդ խորին
2. Բարեխօսութեամբ
3. Սուրբ Աստուած
4. Սուրբ սուրբ
5. Հայր մեր
6. Միայն սուրբ
7. Օրհնութիւն
8. Քրիստոս պատարագեալ
9. Լցաք, Գոհանամք

Պատարագի մասերի կառուցվածքային հիմքը բաղկացած է երկու միավորներից: Առաջինը ծավալուն հոգևոր երգերն են՝ «Գոհանամքը», «Հայր մերը», «Քրիստոս ի մեջ մեր յայտնեցաւ», «Բարեխօսութեամբ», «Լցաք», «Յայս յարկ» և այլն: Երկրորդը՝ մեղեդիական ոչ մեծ ֆրազներն ու նախադասություններն են, որոնց դերը Պատարագում կայանում է կրօնական տարբեր բացականչությունների երաժշտական մարմնավորման մեջ. «Ալելուիա», «Ամեն», «Օրհնեա Տէր», «Ողորմեա Տէր», «Յիշեա Տէր», «Կեցո Տէր», «Պօսխում» և այլն: Պատարագի նշված կառուցվածքային միավորները սովորաբար իրար կից են հանդես գալիս մեկ մասի սահմաններում: Դրա հետ մեկտեղ Պատարագի առաջին մասը՝ «Խորհուրդ խորինը», ամբողջապես բաղկացած է հոգևոր երգից: Նշենք նաև միայն մեղեդիական բացականչություններից կազմված բաժնի²² գոյությունը Պատարագում: Այն գտնվում է «Սուրբ Տէր պօրութեանց» և «Հայր մեր» մասերի միջև:

Պատարագի երաժշտական կառուցվածքում հիմնական տեղը գրավում են անշարժ, Պատարագի բոլոր տարբերակների համար «պարտադիր» մասերը: Դրանց հակառակ, Պատարագի շարժական մասերը, որոնց թվին են պատկանում «Խորհուրդ խորինը», «Բարեխօսութեամբը», մտնում են միայն եկեղեցական որոշ տոների ժամերգության մեջ²³: Հոգևոր երգերի և մեղեդիական

²⁰ Սպ. Մեյիքյան. նշվ. հոդվ.:

²¹ Պատարագի այս կամ այն հատվածը մաս ենք համարում, նրանում հոգևոր երգի՝ Պատարագում գաղափարական կերպարային բովանդակության գլխավոր արտահայտչի առկայության դեպքում: Պատարագի մասերն անվանելիս օգտագործել ենք տվյալ մասերի երգերի սկզբնական բառերն ու բառակապակցությունները:

²² Պատարագի այն հատվածը, ուր բացակայում է հոգևոր երգը, ի տարբերություն մասի, անվանում ենք բաժին:

²³ Պատարագի անշարժ և շարժական մասերի վերաբերյալ տե՛ս. Ն. Թախմպյան, Ներսես Շնորհալիս..., էջ 40: Պատարագի շարժական մասերից նշենք նաև Ա տարբերակում «Խորհուրդ խորին»-ին նախորդող «Ողորմեա ինձ Աստուածը» և «Օրհնեմք պքեզը», որոնց շնորհիվ Պատարագի տվյալ տարբերակն ունի 11 մաս: Դրա հետ մեկտեղ Դ տարբերակում մասերը հիմնվ են, որովհետև այստեղ, ինչպես նշվեց, բացակայում են առաջին երկու մասերը («Խորհուրդ խորին» և «Բարեխօսութեամբ») և միաժամանակ մեկ մասի են համարվում «Միայն սուրբ» ու «Օրհնութիւնը» և «Քրիստոս պատարագեալն» ու «Լցաք, Գո-

բացականչությունների համախմբումը ինքնուրույն մասերի, տեղի է ունենում նրանց լադա-ինտոնացիոն բովանդակության ընդհանրության հիման վրա: Տվյալ առումով հատկապես նշենք հոգևոր երգերի և մեղեդիական բացականչությունների կադանսային կառուցվածքները, որոնք Պատարագի յուրաքանչյուր մասի ներքո «գործում են» որպես լեյտմոտիվներ և միաժամանակ հանդես գալիս տվյալ մասերի յուրօրինակ երաժշտական խորհրդանշանների նշանակությամբ: Ստորև ներկայացնում ենք կադանսային կառուցվածքների մի քանի օրինակներ²⁴:



Պատարագի յուրաքանչյուր մաս ունի իր ինքնուրույն կերպարային-հուլական և լադա-ինտոնացիոն նկարագիրը: Վերջինիս գլխավոր կրողը հանդիսանում է հոգևոր երգը: Որոշ մասեր մեկական երգ են պարունակում: Մյուսների հիմքը կազմում են երգերի խմբեր: Երրորդ մասում այսպիսի խումբը ներկայացված է «Սուրբ Աստուած», «Մի ոք յերախայից», «Մարմին Տերունական», «Սաղմոս ասացեք» երգերով, չորրորդում՝ «Սուրբ Տեր պորութեանց», «Հայր երկնաւոր», «Յամենայնի», «Որդի Աստուծոյ», «Հոգի Աստուծոյ» երգերով և այլն:

Հոգևոր երգերը շրջապատված են «արբանյակներով»—մեղեդիական բացականչություններով, որոնք երգերի նկատմամբ գործում են որպես նախանվագներ (պրեյլուդիա), կապեր (ինտերլուդիա) և վերջանվագներ (պոստլուդիա): Այդպիսին են «Սուրբ Աստուած» երգին նախորդող մեղեդիական բացականչությունները (I, 14)²⁵:

հանամքը»: Այդ պատճառով Պատարագի Ա և Դ տարբերակների մասերի համարակալումը տարբերվում է վերը ներկայացված ցանկի համարակալումից: Տվյալ ցանկը կազմել ենք Պատարագի Բ և Գ տարբերակների հիման վրա և այն համարում ենք առավել ընդհանրացված:

²⁴ Կադանսային կառուցվածքները Պատարագի այս կամ այն մասում որոշ դեպքերում մեղեդիական տեսակետից համընկնում են, իսկ ավելի հաճախ իրար մոտ մեղեդիական տարբերակներ են հանդիսանում:

²⁵ «Հայր մեր» մասում կադանսային կառուցվածքները երկուսն են. նրանցից մեկը հաստատում է տերթային հիմք ունեցող e լուրիական լադի նիկական ոլորտը, մյուսը նույն լադի օժանդակ հենակետի ոլորտը:

²⁶ Այբուբենով նշում ենք Պատարագի տարբերակը, արաբական թվերով՝ հրատարակության էջը:

Մեղեդիական բացականչություններ - սկավաճիներ

1) *Adagio*
 Կո - - - - - խո - - - - - ՏԶ

2) *Andante*
 Եւ ընդ հո - գ - Լո - յդ խոմ

3) *Adagio*
 Օրի - նեա ՏԶ - ր

Սուրբ Աստուած

Սուրբ Աստուած սուրբ եւ ինչ որ սուրբ
 կարգանք արեւ խորհրդիս արեւակ Զ

Դրանք կապմուն են տվյալ երգի սկավաճքների շղթա: Սկավաճքների ավելի երկար շարք է նախորդում «Հայր մեր» երգին (Ա, 30—32): Նույն երգի լադային կառուցվածքի օկտավայնությունը Պատարագի Բ տարբերակում նախապես «գուշակվում» է «Կեցո Տէր և ողորմեա» մեղեդիական բացականչությամբ (64): Ա տարբերակի «Սուրբ սուրբ» մասի եզրափակիչ «Հոգի Աստուծոյ» երգում տեղի ունեցող շեղումը տվյալ մասին գլխավոր լադից՝ Բ մաժորից դեպի մեծացրած սեկունդայով Ը լադը նույնպես նախապատրաստվում է երգին նախորդող մեղեդիական բացականչությամբ («Օրինեա Տէր», I, 23): Մյուս օրինակներն են. «Օրինեալ է Աստուած» մեղեդիական բացականչությունը՝ «Քրիստոս պատարագեալի» սկավաճքը (Ա, 44), նույնը՝ տվյալ երգի մեկ այլ տարբերակում (Ա, 45) և այլն:

Հայր մեր

Moderato

Հայր մեր որ յեր-կինս ես սուրբ ե - ղի - ցի ա - Նոն իո

Մեղեդիական բացականչությունները որպես կապեր հանդես են գալիս Պատարագի այն մասերում, որոնք պարունակում են մի խումբ երգեր: Կապերի դերը կայանում է մեկ մասի սահմաններում տարբեր երգերի միջև լադախնայանցիտն կամրջի ստեղծման մեջ: Որպես օրինակ նշենք «Օրինեա Տէր» և «Ամեն» բացականչություն-կապերը, որոնք միացնում են Պատարագի Ա տարբերակի 2 մասի «Սուրբ Տէր Կօրուքեանց» և «Ամեն: Հայր երկնաւոր», երգերը (21): Նշենք նաև Պատարագի մասերում առկա մեղեդիական բացականչություն-վերջանվագները, որոնք հաջորդում են երգին: Օրինակ՝ «Բա-

րեխօսութեամբ»-ին (Ա, 13), «Հոգի Աստուծոյ»-ին (86) և այլն և ամփոփում այս երգերի լադա-ինտոնացիոն բովանդակությունը: Երբեմն երգին հաջորդում է վերջնանվագների մի ամբողջ շարք, որն ամփոփում է ոչ միայն տվյալ երգը, այլև Պատարագի այս կամ այն մասը: Օրինակ՝ «Լցաք, Գոհանամք» մասի վերջնանվագները (Ա, 48—50): Ավելացնենք նաև, որ մեղեդիական բացականչությունների նշված գործառնությունները հաճախ հանդես են գալիս միաժամանակ: Այսպես՝ «Օրինեա Տէր», «Եւ ընդ հոգւոյդ քում», «Աստուծոյ երկրպագեսցուք» (Բ, 62) մեղեդիական բացականչությունները ներկայանում են և՛ որպես վերջնանվագներ «Յամենայնի» երգի նկատմամբ, և՛ որպես կապեր «Յամենայնի»-ի, և՛ նրան հաջորդող «Որդի Աստուծոյ»-ի միջև, և՛ որպես նախանվագ «Որդի Աստուծոյ»-ի համար:

Բազմապիսի է Պատարագի լադային հիմքը: Այն գլխավորապես կազմում են մոնոտոնիկալ լադերը: Վերջինների թվում ամենից շատ հանդիպում են մեծացրած սեկունդայով լադային համակարգերը և հատկապես C տոնիկայով և վերևի բարձր մեղիանտայով լադը²⁷: Օրինակներ՝ «Սուրբ Աստուածը» բոլոր տարբերակներում, «Հայր մերը» Դ տարբերակում, «Միայն սուրբը» Ա և Բ տարբերակներում: Տվյալ լադի հնչյունաշարն է.

$$f^1 - g^1 - a^1 - b^1 - \boxed{c^1} - de^1 - e^1 - f^2 - g^2$$

Նշենք նաև, առաջինին համանման, նույն բարձրության վրա գտնվող, էնծացրած սեկունդայով ևս երկու լադեր. տերցիային հիմք ունեցող և իջեցրած Դ աստիճանով a փոյուզիականը Ա տարբերակի «Քոխտոս պատարագեալ»-ում, որի հնչյունաշարն է.

$$g^1 - \boxed{a^1} - b^1 - \boxed{c^1} - de^1 - e^1 - f^2 - g^2$$

Կվարտային հիմք ունեցող, իջեցրած Ե աստիճանով g էղականը առաջին տարբերակի «Օրինութիւն»-ում: Հնչյունաշարն է²⁸.

$$f^1 - \boxed{g^1} - a^1 - b^1 - \boxed{c^1} - de^1 - e^1 - f^2 - g^2$$

Մեծացրած սեկունդայով հաջորդ լադն ունի G տոնիկա: Օրինակներ՝ Դ տարբերակի «Միայն սուրբը», «Օրինութիւնը» և այլն: Լադի հնչյունաշարն է.

$$d^1 - e^1 - f^1 - \boxed{c^1} - a^1 - h^1 - \boxed{e^1} - d^2 - a^2 - f^2$$

²⁷ Ըստ լադի թեքման, նրա տոնիկական հնչյունը նշում ենք մեծատառով (մաժորի դեպքում) կամ փոքրատառով (մինորի դեպքում): Դրա հետ մեկտեղ տոնիկան եզրագծում ենք քառակուսիով, օժանդակ հենակետը՝ շրջանով:

²⁸ Մեծացրած սեկունդայով նշված լադային երեք համակարգերը մտնում են արևելյան մոնոդիկ երաժշտության մեջ լայնորեն տարածված և Պատարագի համար առավել բնորոշ «խոսրովային» ձայնեղանակի կազմի մեջ, Ն. Թահմիպյան, Ներսես Շնորհալիս..., էջ 24—25:

Նույնքան հաճախակի Պատարագում հանդիպում է տերցիային հիմք ունեցող և ցածր Դ աստիճանով ց էոլական լադը: Օրինակներ՝ «Բարեխօսութեամբ»՝ բոլոր տարբերակներում, մեղեդիական բացականչությունների բաժինը՝ «Սուրբ սուրբ» և «Հայր մեր» մասերի միջև, նույնպես բոլոր տարբերակներում: Հնչյունաշարն է.

$$d^1 - e^1 - f^1 - \boxed{g^1} - a^1 - \textcircled{b^1} - c^2 - d^2 - \omega^2$$

Էոլական խմբի լադերից նշենք նաև տերցիային հիմք ունեցող, բնական Դ աստիճանով և ներքևի բարձր մեղիանտայով ց-ն, Բ և Դ տարբերակների «Քրիստոս պատարագեալ»-ում.

$$e^1 - f^1 - \boxed{g^1} - a^1 - \textcircled{b^1} - c^2$$

Կվարտային հիմք ունեցող ց-ն. բոլոր տարբերակների «Խորհուրդ խորին»-ում, Գ «Միայն սուրբ»-ում, Բ «Օրհնություն»-ում.

$$f^1 - /f^1/ \boxed{g^1} - a^1 - b^1 - \textcircled{c^2} - d^2$$

Կվինտային հիմք ունեցող ց-ն, Բ տարբերակի «Օրհնություն» մասում և այլն.

$$f^1 - \boxed{g^1} - a^1 - b^1 - c^2 - \textcircled{d^2} - \omega^2 - f^2 - g^2$$

Էոլական լադերի հետ մեկտեղ Պատարագի միևնույն լադային համակարգերի խմբի մեջ է մտնում նաև տերցիային հիմք ունեցող և փոփոխակվող է և Բ աստիճաններով e լոկրիականը Ա ու Գ տարբերակների «Հայր մեր»-ում: Լադի հնչյունաշարն է.

$$c^1 - d^1 - /d^1/ \boxed{e^1} - f^1 - /f^1/ \textcircled{g^1} - a^1 - b^1 - c^2$$

Մինորների հետ միասին Պատարագի լադային դիմագիծը կապմում են և մաժորային լադերը, մասնավորապես Բ իոնականը տերցիային հիմքով Բ և Դ տարբերակների «Սուրբ սուրբ»-ում²⁹:

$$c^1 - d^1 - e^1 - \boxed{f^1} - g^1 - /g^1/ \textcircled{a^1} - b^1 - c^2 - d^2$$

Պատարագի Ա տարբերակի երկրորդ մասում («Օրհնեմք ըզքեզ Հայր») տվյալ լադը երրորդ աստիճանի փոփոխակման շնորհիվ հանդես է գալիս որ-

²⁹ gis-ը տվյալ լադում հանդես է գալիս որպես օժանդակ հենակետի նկատմամբ ներածական հնչյուն:

Մասերի անվանումը	Ա տարբերակ	Բ տարբերակ	Գ տարբերակ	Դ տարբերակ
1. խորհուրդ, խորին	g էոյ. 4	g էոյ. 4	g էոյ. 4	—
2. բարեխոսություն	g էոյ. 3	g էոյ. 3	g էոյ. 3	—
3. Սուրբ Աստուած	C հնմիոյ ³⁰ (բ—գ)	C հնմիոյ (բ—գ)	C հնմիոյ (բ—գ)	C հնմիոյ (բ—գ)
4. Սուրբ սուրբ	F իոն. 5	F իոն. 3	F իոն. 5	F իոն. 3
ա. Ամեն և ընդ հոգուդ քուս ³¹	g էոյ. 3	g էոյ. 3	g էոյ. 3	g էոյ. 3
5. Հայր մեր	e լով. 3	e լով. (օկտավային)	e լով. 3	C հնմիոյ (բ—գ)
6. Միայն սուրբ	C հնմիոյ (բ—գ)	C հնմիոյ (բ—գ)	g էոյ. 4	G հնմիոյ (բ—գ)
7. Օրհնություն ³²	1) g էոյ. 4—5— հնմիոյ (ե—զ) 2) g էոյ. 5 3) G հնմիոյ (բ—գ) 4) g էոյ. 4,6	g էոյ. 4	G հնմիոյ (բ—գ)	G հնմիոյ (բ—գ)
8. Քրիստոս պատարագեալ	1) a լով. 3—4— հնմիոյ (յ—ն) Es իոն. (օկտավային)	g էոյ. 4	սոն'ս I տարբերակը	g էոյ. 3
9. Լցաք, Գոհանամք	Es իոն. (օկտավային)	Es իոն. (օկտավային)	սոն'ս I տարբերակը	g էոյ. 3


³⁰ Հնմիոյ կոչվում են այն լարերը, որոնք պարունակում են մեծացրած սեկունդա: Հնմիոյ լարերի դեպքում, լարի նշանակման կողքին, փակագծերում հռոմեական թվերով ներկայացվում ենք այն աստիճանները, որոնց միջև տվյալ դեպքում գտնվում է մեծացրած սեկունդան:

³¹ Բաժինը, ի տարբերություն մասերի, նշանակում ենք տասով:


³² «Օրհնություն» մասն այս դեպքում ունի չորս տարբերակ: Նրան հաջորդող «Քրիստոս պատարագեալ» երկու:




Նշենք նաև Պատարագում առկա մեղիզմառիկ հոգևոր երգերը, որտեղ վանիկները երգվում են ծավալուն մեղեդիական ֆրազներով, և որոնց մեջ առավել վառ կերպով է դրսևորվել կատարողական ոգին հայ մասնագիտացված մոնոդիկ երաժշտության ասպարեզում: Օրինակներն են Բ տարբերակի «Յայս յարկը», Ա, Բ և Գ տարբերակների «Ամեն: Հայր սուրբը»:



Մեղեդիական ոճի նշված տարատեսակները հավասարապես բնորոշ են Պատարագի ոչ միայն երգերին, այլ նաև մեղեդիական բացականչություններին: Այսպես օրինակ սիլաբիկ բացականչություններից են. «Փառք քեզ Տէր Աստուած մեր» (Ա, 16), «Կեցո Տէր և ողորմեա», «Առաջի քո Տէր» (Բ, 58, 59), «Յիշեա Տէր և ողորմեա» (Բ, 63) և այլն:



Նմանառիկ բացականչություններից. «Կեցո Տէր և ողորմեա» (Ա, 31), «Եւ ընդ հոգւոյդ քում» (Բ, 62) և այլն:



Մեղիզմառիկ. «Օրհնեա Տէր» բացականչությունների շարքը Ա տարբերակից (21, 23, 34, 37), «Տէր ողորմեա» և «Առաջի քո Տէրը» նույն տարբերակից և այլն:

ՎՄԵՆ: Հայր երկնաւոր

Վ - - - մեն: Էա - յր ե - րկ -

նա - - - ւոր որ ԿՊ - - - ր դի - ր

իւ ե - րուր ի մահ վա - սըն մեր

Հարկ է նշել, որ մի շարք դեպքերում նույն երգի կամ մեղեդիական բացականչության տարբերակները հանդես են գալիս մեղեդիական տարբեր ոճերի ներքո: Դրա օրինակներն են «Սուրբ Աստուած» երգի տարբերակները, որոնք ներկայանում են սիլաբիկ և մելիզմատիկ ոճերում (Ա, 14), «Լցաք»-ի՝ նևմատիկ և սիլաբիկ ոճերում (Ա, 46, Դ, 191): Մեղեդիական բացականչությունների օրինակներն են. «Փառք քեզ Տէր Աստուած»-ի (Ա, 16) և «Պոսւխումէ»-ի (Ա, 14, 16) սիլաբիկ ու մելիզմատիկ տարբերակները: Պատարագում տեղ են գտել նաև մեղեդիական ոճի բաղադրյալ ձևերը, որոնք գոյանում են վերը նշված պարզ ձևերի միացման արդյունքներով: Դրանք են՝ նևմո-սիլաբիկ ոճը Ա տարբերակի «Խորհուրդ խորին»-ում, նևմո-մելիզմատիկը Գ տարբերակի «Մարմին տէրունական»-ում, բոլոր տարբերակների «Սուրբ սուրբ»-ում, Ա «Հոգի Աստուծոյ»-ում և «Գոհանամք»-ում:

Պատարագը շարադրված է մոնոդիկ եղանակով: Վերջինիս հետ մեկտեղ Պատարագում հատվածաբար հանդիպում է նաև բազմաձայնությունը: Մասնավորապես երկձայն են Պատարագի Ա տարբերակի «Սուրբ սուրբ» մասի երգերից շատերը. «Սուրբ Տէր պօրութեանց», «Ամեն: Հայր երկնաւոր», «Յամենայնի», «Որդի Աստուծոյ» (20—23):

Այս երկձայնությունն իր տեսակով հարում է հետերոֆոնիայի պարզագույն ձևերին: Երկձայն են նաև «Ամեն» (Ա, 21) և «Փառք քեզ Տէր Աստուած մեր» (Գ, 78) մեղեդիական բացականչությունները: Պատարագի Գ տարբերակի «Սուրբ Տէր պօրութեանց» երգի վերջում (84) խմբերգային միաձայնությունը վերածվում է եռաձայնության:

Պատարագը նախատեսված է վոկալ ա կապելլա (առանց նվագակցության) կատարման համար: Վերջինս հանդես է գալիս երգեցողության տար-

³⁶ Ю. Евдокимова, նշվ. աշխ., էջ 15:


³⁷ Նույն տեղում:


բեր ձևերով՝ միայնակ (սոլո), խմբերգային (ունիսոն), երկու երգչախմբերի հաջորդականությամբ³⁶ (անտիֆոն), մենակատարի, կամ մենակատարների խմբի և երգչախմբի հաջորդականությամբ³⁷ (ռեսպոնսորային)։ Նշենք, որ երգեցողության ձևերը Պատարագում մեծ մասամբ պայմանավորված են **մոնոդիաների** մեղեդիական ոճով։ Այսպես օրինակ. **սիլաբիկ** հոգևոր երգերն ու մեղեդիական բացականչությունները «հնչյունավորում է» երգչախումբը։ Դրան հակառակ **մելիզմատիկ** հատվածներն իրենց դժվարին **ռիթմո-ինտոնացիոն** կառուցվածքով կատարվում են միայնակ։

Պատարագը՝ հայ մասնագիտացված երաժշտության կոթողային արտահայտությունը, պարունակում է հայ հոգևոր երգաստեղծության գրեթե բոլոր, մեծ ու փոքր **«կամերային»** ժանրերը. ավետիսները, ալելուիաները, շարականները, մեղեդիները, տաղերը։

Պատարագի երգերի երաժշտական ձևերը բազմապիսի են։ Հատկապես մեծ տեղ է գրավում մեկմասնի կառուցվածքը։ Այս կառուցվածքն ունեն Ա, Բ, Դ տարբերակների «Սուրբ Աստուածը», «Մի ոք յերախայից», «Մարմին Տերունականը», «Սաղմոս ասացեք», Ա տարբերակի «Ողջոյն տուքը», Դ «Օրինությունը»։ Մեկմասնի որոշ երգերի հատուկ է քառյակային-վարիացիոն ձևի տարրերի առկայությունը, ինչպես, օրինակ, Ա տարբերակի «Յամենային», «Որդի Աստուծոյ» և այլն։ Մի շարք մեկմասնի երգեր հանդես են գալիս նախաբանով։ Դա Գ տարբերակի «Ամեն։ Հայր երկնաւորն է», «Հոգի Աստուծոն»։ Նշենք, որ մեկմասնի են նաև Պատարագի բոլոր մեղեդիական բացականչությունները։ Պատարագում բազմիցս հանդիպում են քառյակային և քառյակային-վարիացիոն ձևերը, որոնք բնորոշ են ծավալուն Լրգերի համար։ Քառյակային ձևով է ընդլայնվում մասնավորապես Ա տարբերակի «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»-ը, քառյակային-վարիացիոն՝ Ա և Բ տարբերակների «Նորիհուրդ խորին»-ը, «Բարեխօսութեամբը», բոլոր տարբերակների «Հայր մերն» ու «Քրիստոս պատարագեալը» և Բ տարբերակի «Յայս յարկը»։

Թաշյանի գրառած «Երգեցողությունք սրբոյ Պատարագի» երաժշտական հորինվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայոց Պատարագի տվյալ խմբագրությունը անսպառ նյութ է պարունակում հետազոտողների համար։ Դրա հետ մեկտեղ Պատարագը գեղարվեստական բարձր արժեք է ներկայացնում երգահանների և կատարողների համար։ Պատահական չէ, որ այն հայ կոմպոզիտորական երաժշտության երկու կոթողների՝ Մակար Եկմալյանի և Կոմիտաս վարդապետի բազմաձայն Պատարագների մեղեդիական հիմքը հանդիսացավ։





ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՈՍԿԵՓՈՐԻԿ ԳՐԻՉԸ

Միջնադարյան Հայաստանի հռչակավոր մայրաքաղաք Անիի գրչության կենտրոնը սկզբնավորվեց քաղաքի ծննդով, իսկ նրա կործանմամբ ու ամայացմամբ դադարեց գոյություն ունենալուց: Անիի գրչության դրպրոցի մեկ հայտնի թերևս վերջին գրիչն է Հովհաննես եպիսկոպոսը, որը ժամանակի հարկադրանքով, իր կյանքի ու գործունեության պայմաններում անց է կացրել հարավատ քաղաքից հեռու, սակայն միշտ մնալով Անիի եպիսկոպոս և կրելով «եպիսկոպոս Անույ» պատվանունը:

Հովհաննեսը եղել է պարզացած և բազմաշնորհ անձնավորություն, դրա շնորհիվ ժամանակակիցների կողմից «Ոսկեփորիկ» մականունն է ստացել: Անիի եպիսկոպոսը նաև ուսուցիչ և հմուտ գրիչ էր: Դատելով հիշատակարաններից, նա բազմաթիվ ընդօրինակությունների հեղինակ է եղել, սակայն այժմ հայտնի են Հովհաննեսի գրած միայն երեք ձեռագրեր, որոնք պահվում են Երևանում, Երուսաղեմում և Վիեննայում¹:

Բացի Հովհաննես Ոսկեփորիկի ինքնագիր ձեռագրերում եղած հիշատակարաններից, նրա մասին տեղեկություններ են պահպանվել և այլ ձեռագրերում:

¹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1587, Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 253—260 (ձեռ. № 55), Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սյրոց Յակոբեանց, Կ. Վ. Երուսաղեմ, 1971, էջ 288—290 (ձեռ. № 1534):

1418 թ. գրիչ Մկրտիչը Վրաստանի Օթայ գյուղում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում խնդրում է հիշել իր վարպետ ուսուցչին. «...վարպետն իմ պտեր Յովհաննես, որ մականունն կոչի Ոսկեփոր...»²:

1432 թ. Կարապետ Աղթամարցի գրիչը Տփղիսում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում գրում է. «Յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս պարոն Զալաբէն և յետ Խ (40) աւուր փոխեցաւ ի Քրիստոս արիեպիսկոպոսն տէր Յովանէս՝ եղբայր նորին, որդիք պարոն Փաշի, երիտասարդական մահուամբ և թողին սուք անբժշկելի իւրոցն և աւտարաց»³:

1442 թ. գրիչ Ռհաննէ Թմոքեցին Արարատյան երկրի Սերկևիլի գյուղում (Հովհանավանքի և Սաղմոսավանքի միջև գտնվող) գրած Տոնականի հիշատակարանում, ի թիվս այլոց, խնդրում է հիշել գրչության իր ուսուցչին. «...աղաչեմ յիշել ի տէր Յովանէս եպիսկոպոս՝ մականունն Ոսկեփոր, որ է ուսուցիչ մեր այսմ գործոց»⁴:

1447 թ. Մաթնոս գրիչը Այրիվանքում ընդօրինակած Հարակնոցի հիշատակարանում, ձեռագրի նախօրինակի մասին գրում է. «Արդ գրեցաւ սա... ի լաւ և յընդիր աւրինակէ առաջին իմաստնոց և վարժապետացն Սիսոյ,


² Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, Երևան, 1955, էջ 222:

³ Նույն տեղում, էջ 420—421:

⁴ Նույն տեղում, էջ 534:

վոր էր գրեալ ձեռամբ Յովհաննէս Եպիսկոպոսի Անոյ, մականուն Ոսկեփոր վերածայնելո...»⁵:

մի կենսագրական մանրամասն չի նշում: Եւր առումով վերը բերված հիշատակարանները շատ արժեքավոր են:



Մատենադարան, ձեռ. № 1587, էջ 55ա


Եպիսկոպոս Յովհաննէս Ոսկեփորիկը իր գրած ձեռագրերի հիշատակարաններում խիստ սակավախոս է և իր վերաբերյալ ոչ

⁵ Նույն տեղում, էջ 604:

Յովհաննէսի գրչական գործունեության մասին եւ վկայում նրա ընդօրինակած ձեռագրերը: Դրանցից մեկի (Աստվածաշունչ) միայն անթվական հիշատակարանն է պահպանվել. «Չստացող սուրբ գրոցս ՎՍԻՄԷՅՆ

րաբունի՝ պաշակերտ մեծին Գրիգորի, և պանիմաստ ծրող սորին՝ ՎՅովհաննես եպիսկոպոս Անույ, աղաչեմ զձեզ դասք լուսերամից

1426 թ. գրած վերջին ձեռագրի հիշատակարանից հետո⁶: Փորձենք մոտավորապես որոշել ձեռագրի և հիշատակարանի գրչության



Մատենադարան, ձեռ. № 1587, էջ 67ա

լիշման առնել զմեզ արժանի...»⁶: Լ. Խաչիկյանը հիշատակարանի անթվական լինելու հանգամանքը նշելով, այն, որպես Հովհաննես Ոսկեկորիկի գործ, տեղադրել է՝ սրա

ժամանակը: Աստվածաշնչի ստացող Սիմեոն րաբունին սուրբել է Հերմոնի համալսարանում, նշանավոր Գրիգոր րաբունու մոտ, ապա ղեկավարել Մոկաց Սարի Ս. Գևորգ վան-

⁶ Լ. Խաչիկյան, Նույն տեղում, էջ 355:

⁷ Նույն տեղում:

քի դպրանոցը: Միմեոնը ծնվել է 1317 թ., առաջին անգամ հիշատակվում է 1350 թ., իսկ 1377 թ. գրած ձեռագրի հիշատակարանում իրեն կոչում է. «նկար և ծերացեալ, վաթսւրնամենին»: «Միմեոն վարդապետը վերջին անգամ հիշվում է 1386 թվականին Հակոբ Լիշտունեցու կողմից, իսկ 1390 թվականին նա Սարի վանքում այլևս չի հիշատակվում: Հետևաբար վախճանվել էր արդեն»⁸: Միմեոն րաբունու վերաբերյալ պահպանված այս տեղեկությունները թույլ են տալիս նրա համար Հովհաննես Ոսկեփորիկի գրած ձեռագիրը առնվազն XIV դարի վերջին տասնամյակների գործ համարել: Դրանով իսկ, այդ ձեռագիրը Հովհաննես եպիսկոպոսից հայտնի ամենավաղ ձեռագիրն է, որի գտնվելու տեղը, ցավոք առայժմ անհայտ է⁹:

Հովհաննես Ոսկեփորիկի ձեռքով գրված և մեզ հասած ձեռագրերից է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 55 ձեռագիրը, որի հանգամանակից նկարագրությունը տեղ է գտել Հ. Տաշյանի կապած ձեռագրացուցակում, իսկ մանրանկարներին անվադարձել են Հայդե և Հելմուտ Բուշխաուսենները¹⁰: Ձեռագիրը բավական լավ պահպանված Աստվածաշունչ է, գրված նուրբ թղթի վրա: Ունի 588 թերթ (28×18,5 սմ), գրությունը երկպուրակ, տողերի քանակը՝ 47, «գրչությունը բոլորգիր» Հ. Տաշյանի բնութագրությամբ. «բոլորգիր մանր, մաքուր, կանոնավոր եւ գեղեցիկ»¹¹: Տեսագրությունը գրված են ոսկեգույն տողով կամ կարմրագիր: Բնագիրը քաղված է բավական հին և ընտիր օրինակից: Աստվածաշունչը հարուստ գեղարվեստական հարդարանք ունի: Չգալի թիվ են եւսմունք տեղումնական մանրանկարները, ավետարանիչների և այլ սրբերի պատկերները, բազմաթիվ նրբառձ վարդապետները, գլխավորներն ու լուսանցավարդները: Ձեռագրի մանրանկարիչն է Մելքիսեդեկ քահանան, ստացողն է Արարատյան նահանգի և Բշնո դիտապետ Մանուել եպիսկոպոսը:

Գրիչ Հովհաննեսը ձեռագրի էջերում մի շարք հիշատակագրություններ է թողել, որոնցում խնդրում է հիշել ստացողին և իրեն,

լայց չի նշում ո՛չ գրչության ժամանակը, ո՛չ էլ տեղը: Ահա հիշատակագրություններից մի քանիսը, էջ 51բ «Չստացաւդ սուրբ գրոցս Կարիի եւ Կերջանիկ դիտապետն Բշնոյ մեծ նահանգին Կտէր Մանուէլ աղաչեմ յիշել ի Տէր: Ընդ նմին եւ Կանայէտ գրիչս ԿՅովհաննէս եպիսկոպոս Անոյ վիճակիս, եւ Աստուած Կձեպ յիշեսցէ», էջ 529բ «Չեղկելի ծրոդս ԿՅովհաննէս եպիսկոպոս Անոյ աղաչեմ յիշել ի Տէր», էջ 365ա «...ԿՅովհաննէս եպիսկոպոս անպէս գրիչ Անոյ նահանգիս»¹² և այլն:

Ձեռագրի գլխավոր հիշատակարանը հավանաբար ընկած է: Գրչի հիշատակարաններից բացի ձեռագրում պահպանվել են հետագայի հիշատակարաններ¹³ և մասնավորապես մանրանկարչի հիշատակարանները, որոնք մի շարք կարևոր տեղեկություններ են սլարունակում: Նախ այնտեղ նշվում է Մելքիսեդեկի կողմից կատարված նկարապարտումների ավարտման տարին: Պատմվում է այն մասին, որ ձեռագրի գրչությունից հետո պատվիրատու Մանուելը մահացել է, իսկ Աստվածաշունչը մնացել է առանց նկարապարտման և ընկել է օտարների ձեռքը: Որոշ ժամանակ անց, երիտասարդ կրոնավոր Հովհաննեսը փրկագնել է այն. և տվել ծաղկելու: «...Կստացող գրոցս Կտէր Մանուէլ, որ ստացաւ Կսայ հայալ յարդեանց... եւ ի կատարել գրոցս գրելով ինքն փոխեցաւ առ Քրիստոս եւ մնաց Աստուածաշունչս ծաղկելի... տէր Յովհաննէս, մանուկ գոյով հասակաւ... բազում աշխատանք եւ ընչիւք ԿԿատեաց Կգիրքս ի ձեռաց անօրինաց եւ ետ ծաղկել Կսա...»¹⁴: Այսպիսով ձեռագրի նկարապարտումը տեղի է ունեցել գրչությունից բավական ժամանակ անց: Մելքիսեդեկը իր

¹² Նույն տեղում, էջ 259:

¹³ Ուշագրավ է ձեռագրի հետագայի (1653 թ.) մի հիշատակարանը, որից իմանում ենք, որ 1631 թ. Բշնո եպիսկոպոս ձեռնադրված Փիլիպոսը նորոգել է տեղի Ս. Աստվածածին եկեղեցին, ժամատունը, կից շինությունները և տեղեկանալով սույն Աստվածաշնչի գերության մեջ գտնվելու մասին, փրկագնելով Բշնի է վերադարձրել ձեռագիրը: «Հիշատակարանում նշվում է, թե որքան ժամանակ է ձեռագիրը գերության մեջ մնացել. «գտաք Կգանձս Կայս անգին ի հին քաղաքն Երևան, բազում ժամանակաւ գերի արարեալ, ամօք իբրեւ եօթանասնօք, եւ մեք... բազում աշխատութեամբ եւ երթեւեկութեամբ. ձԺԲ (112) թուման տուաք եւ ապառնեցաք Կսա...»: Ձեռագրի փրկագնումը կատարվել է 1653 թ., այն գերի է տարված եղել դրանից 70 տարի առաջ, այսինքն 1583 թ.: Հ. Տաշյան, էջ 260:

¹⁴ Նույն տեղում, էջ 259:

⁸ Ա. Մաթևոսյան, Մոկաց Սարի Ս. Գեորգ վանքի գրչության կենտրոնը XIV—XV դարերում, Բաքեր Մատենադարանի, № 6, 1962, էջ 211:

⁹ Լ. Նաչիկյանը հիշատակարանը վերցրել է Մ. Բարխուդարյանից գրքից: Արցախ, Երկասիրեց Մալար եպս. Բարխուդարեանց, Բագու, 1895, էջ 78:

¹⁰ Հ. Տաշյան, Ցուցակ, էջ 253—260, Heide und Helmut Buschhausen, Die Illuminirten Armenischen Handschriften der mechtaristen-congregation in Wien, Wien, 1976. s. 64—68, taf 41—42.

¹¹ Հ. Տաշյան, Ցուցակ, էջ 253:

հիշատակարաններում չի նշում գրչի՝ Հովհաննես եպիսկոպոսի անունը:

Տեսնենք, թե երբ է Մելքիսեդեկը երկրորդ ստացող Հովհաննեսի պատվերով նկարապարդել ձեռագիրը: Այդ մասին մանրանկարչի գրած չափածո հիշատակարանը հետևյալն է.

«ՁՄելքիսեդեկ վաթարս մեղօք ի լի
Որ եմ ծաղկող այսմ տառի:
Նայ եւս էր թիւն տումարին
Ըձ հալկեան ազգին
Տինայ Էժ յաւելուածին
Այլ եւս եաւթն շարամանին»¹⁵:

Ըստ հիշատակարանի՝ Հ. Տաշյանը որոշում է նկարապարդման տարին. «=1368, էթե «Է.Ժ» կարդանք՝ 1375»¹⁶: Լ. Խաչիկյանը ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում այս հիշատակարանը դրնում է 1368 թ. տակ, ծանոթագրելով. «Եթե «տասն»-ից առաջ եղող «Է»-ն թիվ համարենք, որ քիչ հավանական է, ապա կստանանք ոչ թե 1368, այլ 1375 ($800+17+7+551=1375$) թվականը»¹⁷: Սույն թվականը սակայն տարակուսանքի առիթ է տվել դեռ Հ. Տաշյանին, որը նկատում է, թե XIV դարում Մանուել անվամբ Բջնո մեծ նահանգի դիտապետ չի հանդիպում. «Միտ դրուի որ այս միջոցին Բջնոյ Մանուել եպիսկոպոս մը չենք գտներ նոյն տեղոյ եպիսկոպոսաց ցանկին մէջ»¹⁸: Բջնո նահանգի դիտապետ Մանուել եպիսկոպոսը բազմիցս հիշատակվում է 1405—1414 թվականներին¹⁹, մինչդեռ ըստ Մելքիսեդեկի հիշատակարանի նա պետք է 1368 կամ 1375 թվականից առաջ մահացած լիներ: Սյուս կողմից Հովհաննես Ոսկեփորիկն էլ, ինչպես տեսանք, հիշվում է XV դարում և դժվար է ենթադրել, թե նա այնքան երկարակյաց է եղել, որ եպիսկոպոսի սլաշտոնում է գտնվել և ստեղծագործել XIV դարի կեսերին և XV դարի 20—30-ական թվականներին:

Սակայն կրկին վերադառնանք Մելքիսեդեկի հիշատակարանին: Այստեղ հեղինակը ծաղկման տարին հայտնելու համար երեք թվական է հիշատակում՝ հարյուրավոր, տասնավոր, միավոր: Ընդ որում 800 գրելու համար ոչ թե պարզապես «Պ» (800) է նշում,

այլ Ըձ ($8 \times 100 = 800$): Կարծում ենք, որ նա նույն սկզբունքով է գրում նաև տասնավորը Էժ ($7 \times 10 = 70$) և այդ նույն պատճառով միավորը նշելիս ոչ թե «Է» (7), այլ «Եաւթն» է գրում: Հիշատակարանի թվականը նման մեկնաբանմամբ այսպիսին է. Ըձ ($8 \times 100 = 800$) + Էժ ($7 \times 10 = 70$) + 7 + 551 = 1428 թ.: Այսինքն հիշատակարանը պետք է կարդալ.

«Նայ եւս էր թիւն տումարին
Ութարիւրին հալկեան ազգին
Տինայ յոթ տասն յաւելուածին
Այլ եւս եաւթն շարամանին»:

Կարծում ենք, որ սա է հարցի ճիշտ լուծումը, տրամաբանական է, որ Մելքիսեդեկը հենց այդպես հիշեր թվականը ($800+70+7$) և ոչ թե այս ($800+7+10+7$) ձևով: 1428 թվականն արդեն միանգամայն համապատասխանում է Հովհաննես գրչի ապրած և Մանուել դիտապետի նորավախճան լինելու ժամանակին: Այդ թվականը, ինչպես ասվեց, ձեռագրի նկարապարդման տարին է, իսկ Հովհաննես Ոսկեփորիկը այն գրել էր դրանից առաջ, հավանաբար 1420-ական թվականների սկզբին, եթե ոչ ավելի վաղ: Ինչ վերաբերում է նկարապարդման տեղին և ծաղկողին, ապա պետք է նկատել, որ 1423 թ. Հովհաննես Ոսկեփորիկի Սանահինում գրած Ծարակնոցի հիշատակարանում նշվում է մի «Մելքիսեդեկ ծաղկող»: Սակայն հիշյալ Ծարակնոցը նկարապարդել է Հովհաննես Սանահինեցին, իսկ Մելքիսեդեկը նրան միայն օգնել է, ուստի դժվար է Ծարակնոցի և Վիեննայի № 55 ձեռագրի նկարապարդման համեմատությամբ որոշել երկու Մելքիսեդեկների նույնության հարցը: Բայց այդ նույնությունը չի բացառվում, մանավանդ եթե նկատի ունենանք այն, որ այդ ջրջանում Արարատյան երկրամասում քիչ թվով գրչության կենտրոններ էին գործում, և քիչ նկարիչների անուններ են հայտնի:

Ձեռագրի գրչության տեղի վերաբերյալ Հ. Տաշյանի և Լ. Խաչիկյանի հայտնած կարծիքների համաձայն, այն, որոշ վերապահությամբ, Անին է²⁰: Դրա օգտին են խոսում Հովհաննես Ոսկեփորիկի գրած մանր հիշատակագրությունները: Ինչպես ստորև կտեսնենք, 1423 և 1426 թթ. Սանահինում և Թմուզլիում գրած, ստույգ թվագրվող ձեռագրերում, գրիչն իրեն կոչում է. «Յովհաննես եպիսկոպոս Անոյ» կամ «Անոյ եպիսկոպոս

¹⁵ Հ. Տաշյան, Ցուցակ, էջ 259:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 485:

¹⁸ Հ. Տաշյան, Ցուցակ, էջ 260:

¹⁹ Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Ա, էջ 51, 162, 731, մասն Գ, Երևան, 1967, էջ 316:

²⁰ Հիշյալ գիտնականները ձեռագրի գրչության վայրի մասին գրում են. «(անշուշտ) Անի (Բջնի)», Հ. Տաշյան, Ցուցակ, էջ 253, «Անի» Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 484:

տեր Յովհաննես»։ Վիեննայի № 55 ձեռագրում, նա տեղագրման առումով ավելի որոշակի է նշում իր պաշտոնը. «Յովհաննես եպիսկոպոս Անոյ վիճակիս», իսկ մեկ այլ հիշատակագրության մեջ ուղղակի հայտնում է գրչությամբ պաշտոնը վայրը. «Յովհաննես եպիսկոպոս, անպետ գրիչ Անոյ նահանգիս»։ Այս հիշատակությունը, կարծում ենք, թույլ է տալիս ձեռագրի գրչության ստույգ վայր համարել Անին։ Լինելով Անիի եպիսկոպոս, Հովհաննեսը պետք է որ առժամանակ ապրած լիներ իրեն վստահված եպիսկոպոսության կենտրոնում։ Հիրակը այդ շրջանում բն՝ քաղաքական ու տնտեսական, թե՛ մշակութային առումով կորցրել էր իր նախկին առաջատար դերը, պակասել էր նաև գրչության պաշտոնների թիվը, և Հովհաննեսն իրեն համարելով «գրիչ Անոյ նահանգիս» ակնարկում է Անիում և նրա մերձակայքում իր գրչությամբ պաշտոնը։

Այսպիսով, ըստ բերված փաստարկների, հիշյալ Աստվածաշունչը, որը Վիեննայի հայերեն ձեռագրերի մեջ «ամենէն ընտիրներէն է»²¹, Հովհաննես եպիսկոպոսի կողմից գրվել է Անիում, XV դարի սկզբներին, իսկ նրա կարագարդվել է 1428 թվականին։

Հովհաննես Ոսկեփորիկից հայտնի հայորդ ձեռագիրը Շարակնոց է, գրված 1423 թ. Սանահինի վանքում, Հովհաննես Սանահնեցու պատվերով։ Ձեռագիրը փոքրածավալ է, գրված մագաղաթի վրա, ունի 344 թերթ (12,2×8), գրությունը՝ միասյուն, գրչությունը՝ մանր բոլորգիր, տողերի քանակը՝ 21։ Բնագիրն աչքի է ընկնում ընտիր գրչությամբ, խազագրված է։ Մանրանկարիչ և ըստացող Հովհաննես Սանահնեցին ու ծաղկող Մեքսեդեկը, ելնելով ձեռագրի փոքր չափերից, գրքի պատկերավարման մեծ վարպետությամբ, նկարել են բազմաթիվ կիսախորաններ, գլխավարդեր, վարդագրեր, թեմատիկ լուսանցապատկերներ և լուսանցապարդեր։ Շարակնոցում տեղ է գտել նաև տեքունական երկու տեսարան ներկայացնող մի էջ (131բ). վերևում պատկերված է «հըրեշտակի հայտնությունը յուղաբեր կանանց», իսկ ներքևում՝ «դժոխքի ավերումը» հորինվածքը։ Պատկերների տակ, ստորին լուսանցքում, մանրանկարիչ Հովհաննեսը մի հիշատակագրություն է թողել.

«Եւ զիս հանցես Տեր ընդ դմին

Բանտէ մեղաց աղջամոջին։ Աստուած իմ Յիսուս»։

Շարակնոցում պահպանվել են գրչի և մանրանկարչի հիշատակարանները. «Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուաբերութեանս Հայոց ՊԷԲ (1423), ձեռամբ ախմար և փըցուն գրչի Յով[հաննես] եպիսկոպոսի Անոյ,

յիշեսջիք ի Քրիստոսս զստացող սորին՝ ՎՅՈ-հ[անն]էս զկուսակրան քահանայս... և զիս... զծրող սորին»²²։ Հետաքրքրական է, որ եթե գրիչն իր հիշատակարանում նվաստացուցիչ մակդիրներ է կցում իր անվանը, ապա ստացողն արդեն, իր հիշատակարանում, փառաբանում է նրան. «Ես.. Յոհ[անն]էս մեղապարտ ոգի... ետու գրել Յով[հանն]էս արքեպիսկոպոսի, մականունն Ոսկեփորիկ վերաձայնելոյ՝ շնորհապարդի և ճարտար գրչի, որոյ յիշատակ նորին արինութեամբ եղիցի»²³։

Դրանից հետո Հովհաննես եպիսկոպոսին հանդիպում ենք 1426 թ., Գուգարքում Թըմոզի (Թմոք) անառիկ ամրոցում, մեկ այլ Շարակնոց ընդօրինակելիս։ Սա ևս փոքրածավալ ձեռագիր է, թղթի վրա, ունի 355 թերթ (14×9), գրությունը՝ միասյուն, գրչությունը՝ կանոնավոր բոլորգիր, տողերի քանակը՝ 21։ Մանրանկարիչն է Հովհաննես կրոնսվորը, ստացողը՝ Աստվածատուրը։ Հարուստ նկարապարդում ունի, որից հիշարժան են հատկապես թեմատիկ լուսանցապատկերները²⁴։

Հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ եղանակաւոր տառս, ի թուականութեանս Հայոց ՊԷԲ (1426) ի հոչակաւոր եւ յանառիկ դղեակս Թմոք, ընդ հովանեաւ Սբ. Աստածածնիս, ձեռամբ մեղապարտ գրչի Անոյ եպիսկոպոսի տէր Յովանիսի... ի լաւ եւ ընտիր արինակէն մեծ եւ քաջ քարտուղարին Սիսոյ Գրիգոր Դպրի՝ մականունն Խուլ կոչեցելոյ»²⁵։

Ինչպես այս ձեռագիրը, այնպես էլ Հովհաննես Ոսկեփորիկի կատարած նախորդ ընդօրինակությունները, աչքի են ընկնում ճշգրիտ գրչությամբ, որը պայմանավորված է ոչ միայն կանոնավոր ու հստակ գրով, այլև կարմրագիր և ոսկեգիր տողերի ու տառերի կիրառությամբ, բոլորգրի և երկաթագիր սկզբնատողերի համադրությամբ, վարդագրերի ու լուսանցապարդերի տեղին և ներդաշնակ տեղադրությամբ, էջի մակերեսի նպատակահարմար և կուռ կազմակերպմամբ։ Անիի եպիսկոպոսը պաշտոնը է միայն գրչությամբ և ըստ քննված երեք ձեռագրերի, ձեռք չի պարկել ծաղկողի արվեստին, սակայն իր գործում գրչության արվեստի մեջ, հասել է

²¹ Հ. Տաշյան, Յուցակ, էջ 253։

²² Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Ա, էջ 302։

²³ Նույն տեղում, էջ 303։

²⁴ Ն. Պողարյանը գրում է, որ լուսանցապատկերներից «ոմանք շահեկան եւ արտասովոր» են, տե՛ս Ն. Պողարյան, Յուցակ, էջ 288։


²⁵ Նույն տեղում, էջ 289։


բարձր վարպետության և նշանակալից արդյունքի: Բազմաժանր գրիչը ժամանակակիցների շրջանում մեծ հեղինակություն է վայելել և գրչության արվեստ է ուսուցանել երիտասարդ գրիչներին:

Անիի եպիսկոպոսին վիճակված չէր անխռով կյանքով ապրել: Ամայացած հայրենի բաղաքից տարագիր, նրան տեսնում ենք մերթ Սանահինում, մերթ Թմոզվիում ապաստանած: Սակայն գրիչը չի ընկճվել շփոթ ժամանակի անբարվոք կացությունից, այլ ամենուր շարունակել է իր գործը, հայ գիրն ու գրչությունը տարածելու առաքելությունը: Եվ եթե թշնամին գերի է տարել մեծաջան եռանդով հենց նոր ավարտած նրա ձեռագիրը, ապա գրիչը ձեռնարկել է մեկ ուրիշ

մատյանի գրչություն՝ բռնությանը հակադրելով հոգևոր վեհություն և այդպե՛ս պայքարելով իր հայրենիքը վավթողների դեմ:

Հովհաննես Ոսկեփորիկի գործունեությանը ծանոթանալով, տեսնում ենք, որ Անի քաղաքի գրչության կենտրոնի պատմությունը հասնում է մինչև XV դարի սկզբները: Դա Անիի պատմության ամենաողբերգական ժամանակն էր, երբ երբեմնի հրաշակերտ ու բազմամբոխ մայրաքաղաքը վեր էր ածվում անմարդաբնակ ավերակների թագավորության: Եվ սակայն անհական ոգին շատ ավելի երկար ապրեց, քան ինքը՝ Անին: Այդ ստեղծագործ ոգով էր տոգորված նաև Անիի թերևս վերջին եպիսկոպոս Հովհաննես Ոսկեփորիկ գրիչը:





ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ՇԱՄԱԽՈՒ ԳԱՐԴՄԱՆ ԳԱՎԱՌՈՒՄ (Ուշտալ, Ղալակա, Նորշեն գյուղեր)

Պատմական Բուն Աղվանքի Գարդման գավառը չափապանց հարուստ է հայկական պատմա-ճարտարապետական հուշարձաններով: Գավառի բազմաթիվ գյուղերում պահպանվել են դրանց վաղեմի բնակիչների՝ հայերի թողած նյութական մշակույթի հետքերը. եկեղեցիներ, մատուռներ, գերեզմանոցներ, բերդեր ու ամրոցներ և այլն: Սույն հոդվածով ներկայացնում ենք գավառի արևմտյան կողմում, գոգավոր բարձրադիր սարահարթի վրա փռված ցարդ հայաբնակ երեք գյուղերի տարածքում պահպանված պատմա-ճարտարապետական հուշարձանները: Նշված գյուղերից ամենից հայաշատը Ղալական է: Գյուղը 1861 թվականին ուներ 111 տուն հայ բնակչություն¹: Դանիել արքեպիսկոպոսի այցելության ժամանակ՝ 1865-ին այն կապմել էր 170 տուն², իսկ 1890 թվականին գյուղն ուներ շուրջ 298 տուն՝ 1591 բնակչով³: Գրեթե նույն

թիվն է արձանագրել եպիսկոպոս Բարխուտարյանցը՝ 1893 թվականին, այն է 298 տուն՝ 1593 մարդ (864 արական, 729 իգական): Ղալական մեծ կորուստներ է տվել 1918—20 թվականներին: Սովետական կարգերի հաստատումից հետո զանազան վայրեր ցրված ղալակեցիները վերստին համախմբվել են հայրենի գյուղում ու շենացրել այն: 1978 թվականին գյուղն ուներ 731 բնակիչ⁴: 1984 թվականին գյուղն ուներ 460 հայ (121 տուն) և 196 լեզգի բնակչություն, միասին 656 մարդ⁵: Գյուղի դպրոցում սովորում են 135 հայ երեխաներ:

Գյուղում և շրջակայքում պահպանվել են բազմաթիվ հնագիտական, պատմա-ճարտարապետական հուշարձաններ: Գյուղի հին թաղամասում կանգուն է սբ. Աստվածածին եկեղեցին (նկ. 1, 2): Վերջինիս մասին ամենահին հիշատակությունը պատկանում է Դանիել արքեպիսկոպոսին: Սա նշում է, որ եկեղեցին 1865 թվականին փայտա-

¹ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Ստեփանոսի վանաց Սաղիսի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից, որք ի Շամախիոյ թեմի, Տփլիս, 1896, էջ 139:

² Դանիել արքեպիսկոպոս, Այցելութիւն եկեղեցեաց գիւղօրէից վիճակին Հայոց Շամախիոյ, Արարատ, 1870, էջ 319:

³ Մ. արքեպս. Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 139:

⁴ Մ. եպիս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 209:

⁵ Աղբրեջանական Արվեստական Հանրագիտարան (աղբրեջաներեն), հ. 3, Բաքու, 1979, էջ 14:

⁶ Տեղեկությունները մեզ տրամադրել է Ղալակ գյուղի պատմության ուսուցիչ Կարեն Զառայանը:

ծածկ էր և ուներ երեք քահանա⁷: Մինչև 1893 թվականը եկեղեցին մնացել է անփոփոխ: Այդ մասին վկայում է Մ. Բարխուտարյանը, նշելով. «Եկեղեցին Ս. Աստվածածին, ընդարձակ, ձեղուն փայտաշեն, որ ունի երկու քահանայ,...»⁸: Բարեբախտաբար Բարխուտարյանը արտագրել է նաև եկեղեցու շինությանը վերաբերող արձանագրությունը. «Կառուցաւ տաճարս այս արդեամբք և ջանիւք Հայոց հասարակութեան



Նկ. 1. Ս. Աստվածածին եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից

Ղալակա գեղջ, իսկ ծեփն ներքին և արտաքին աշխատութեամբ Միքայելի Ծատուրեան 1867»⁹: 1893 թվականի հոկտեմբերին Ղալակա գյուղում բռնկված հրդեհին պոհ են գնացել սբ. Աստվածածին եկեղեցին, դպրոցը և շուրջ 90 բնակելի տներ: Դեպքից հետո բաքվեցի ու թիֆլիսեցի հայերի շրջանում կապակերպված դրամական հանգանակության շնորհիվ վերաշինվեցին բազմաթիվ շենքեր, և որ կարևորն է սկսեց կառուցվել նոր, այս անգամ արդեն ցարդ կանգուն եկեղեցին: Վերջինս եռանավ

գմբեթավոր բազիլիկ է, կառուցված համակ սրբատաշ գորշ գույնի քարերով: Եկեղեցին հավանաբար կառուցվել է հին փայտածածկ եկեղեցու տեղում: Միակ արձանագիր քարը ագուցված է հարավային ճակատի վերին մասում: Այն ունի հետևյալ բովանդակությունը.

Ա/ՍՏՈՒԱ/Ծ ՈՂՈՐՄԻ ՂԱԼԱԿԱ-
ԲՆԱԿ ԳՐԻԳՈՐ ԲԱՐԴԱՆ-
ԵԱՆՑԻ ՀՈԳԻՈՅՆ, ՈՐ ՆՈ-
ԻՐԵՑ Ս/ՈՒՐ/Բ Ա/ՍՏՈՒԱ/ԾԱԾՆԱՅ
ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ՇԻՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԶԳԵՍԻ 300 ՐՈՒԲԼԻ:

Եկեղեցին ունի երեք դուռ, բացված՝ մեկական հյուսիսային, հարավային և արևմտյան ճակատներից: Ութանիստ գմբեթը ներքուստ պահում են չորս սրբատաշ սյուները (խաչաձև կտրվածքով): Տաճարի արեւելյան կողմում կիսաշրջան եպրագծով ավագ խորանն է, որից դեպի արևելք բացվում է մեկ դեպի ներս լայնացող լուսամուտ, իսկ դեպի հյուսիս և հարավ կան մեկական խորհրդարաններ: Ավագ խորանը սրահի հետ հաղորդակցվում է երկու քառաստիճան սանդուղքների միջոցով, որոնք իրականացված են ավագ խորանի հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան անկյուններից: Խորանից հարավ և հյուսիս կան մեկական համարյա քառակուսի հատակագծով ավանդատներ: Սրանց մուտքերը բացվում են արևմտյան պատերից՝ սրահի մեջ: Յուրաքանչյուր ավանդատնից բացվում են երկու լուսամուտներ: Ավանդատների թաղերը իրականացված են կիսաշրջանաձև: Եկեղեցու հարավային ճակատից բացվում են յոթ լուսամուտներ (դրանցից մեկը ավանդատնից, մյուսները՝ սրահից), նույնքան և նույն կերպ նաև հյուսիսային ճակատից: Արևմտյան ճակատից բացվում են երեքը, որոնցից կենտրոնականը փոքր է և շրջանաձև: Ութանիստ թմբուկից բացվում են թվով ութ լուսամուտներ (մեկական յուրաքանչյուր նիստից): Ծածկերը իրականացված են բարակ սալիկներով:

Ըստ տեղագիտների վկայության, եկեղեցին կառուցել է ոմն Ղարաբաղցի Սարգիս վարպետը 1890-ական թվականների վերջերին¹⁰:

⁷ Դանիել արքեպիսկոպոս, Նշվ. հոդվածը, նույն տեղում:

⁸ Մ. Բարխուտարեանց, Նշվ. աշխ., էջ 207:

⁹ Նշվ. աշխ., նույն տեղում:

¹⁰ Գյուղում մեր կատարած աշխատանքներից ցույց տրված օգնության համար շնորհակալություն ենք հայտնում ղալակեցիներ Վաղիմիր Բաղդասարյանին, Արթուր Թամրապետյանին և միջնակարգ դպրոցի պատմության ուսուցիչ Կարեն Զառայանին:

Ղալակա գյուղի տարածքում պահպանվել են մի քանի հնավայրեր, որոնց մեջ ուշագրավ է գյուղից հարավ տարածված ընդարձակ գերեզմանոցը, ուր պահպանված բազմաթիվ տապանաքարերի մեջ կան նաև այնպիսիները, որոնք ունեն արձանագրություններ: Գերեզմանատան տապանագրերից երկուսը իր ժամանակին ընդօրինակել է Մ. Բարխուտարյանը: Ցավոք դրանք մենք տեղում չենք գտել և վերահրատարակում ենք անփոփոխ:


ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԵՍԻՆ
ԹՎ. ԼԴ (585 թ.):

Մեկ ուրիշի վրա.

ԱՅ ՈՂՈՐՄԻ ՄԱԹՈՍԻՆ ԹՎ. Հ
(621 թ.):

Մեկ թվում է, որ այս տապանագրերում գրիչները բաց են թողել հարյուրավորները, որոնք կարող են հիմք ծառայել այն ենթադրության, թե դրանք վերաբերում են 6—7-րդ դարերին: Թեև գերեզմանոցում իրոք որ կան խոր հնության կնիքը կրող տապանաքարեր, բայց դրանք առանց բացառության անարձանագիր են: Գերեզմանատանը կան վաղ միջնադարից մինչև 19—20-րդ դարերին վերաբերող տապանաքարեր: Գերեզմանոցի վերին մասում ցայսօր շարունակվում են թաղումները: Տապանաքարերի արձանագրությունները իրենց զորչական, լեզվա-ոճական առանձնահատկություններով որոշակիորեն բաժանվում են երկու հիմնական խմբերի: Առաջինները վերաբերում են հնագույն ժամանակներից մինչև 1710-ական թվականների վերջերին, մյուսները՝ դրանցից հետո, ընդհուպ 20-րդ դարի սկզբները: Առաջիններում օգտագործվում են բազմաթիվ անսովոր բառեր, դարձվածքներ, Կուտ տեղական քիչ տարածված անձնանուններ: Այդպիսի տապանաքարերը տարբերվում են նաև գրչության, քանդակների ու վարդանախշերի ձևերով: Դրանցում տառերը փորված են խորը և խոշոր-խոշոր, որոշ դեպքերում ուռուցիկ քանդակումով: Մինչև 18-րդ դարի սկզբներին վերաբերող գերեզմանաքարերի մեջ կան նաև խոյաձև տապանաքարեր (նկ. 3): Այլ կերպ ասած, տեղացի, բնիկ հայերի և եկվոր արցախեցի վերաբնակիչ հայերի տապանաքարերում առկա են որոշակի տարբերություններ: Մ. Բարխուտարյանը նշում է, որ Ղալակա գյուղի «բնակչաց նախնիքն գաղթած են Խաչենի Դաջբուլաղ, Ղջուղ, Առաջածոր, Խանձք և Խնձրիստան գիւղերից և Ջրաբերդից և մի քանի ծուխ Հղորդի և

Նախջուռանիկ գիւղերից»¹¹: Այս հավաստի պետք է համարել, քանի որ նույնն են ասում նաև գյուղի ներկայիս բնակիչները: Ուշագրավ է նաև այն փաստը, որ, ինչպես Ղալակայի, այնպես էլ հարևան այլ գյուղե-



Նկ. 2. Ս. Աստվածածին եկեղեցու տեսքը հարավարևմուտքից

րի գերեզմանոցներում (Վանք, Ռուշան, Գիրք, Կյուլոռան և այլն) նկատվում է միևնույն տարբերությունը և, որ կարևոր է, միևնույն գերեզմանոցներում թաղումները չեն ընդհատվել ու պարբերաբար կատարվել են դարեր շարունակ: Տվյալ դեպքում Ղալակայի գերեզմանոցում թաղումները շարունակվում են ցայսօր: Պարզ է նաև, որ 18-րդ դարի սկզբներին Արցախում սովից ու հիվանդություններից ստիպված զանգվածային գաղթի ճամփան բռնած հայ բնակչությունը իր համար բնակության վայրեր է ընտրել այն գյուղերը, որոնք հնագույն ժամանակներից ի վեր հայաբնակ են եղել և գաղթականների՝ գյուղերում հաստատվելու պահին էլ ունեցել են հայ բնակչություն: Այսպիսով՝ 18-րդ դարի առաջին կեսին Բուն Աղվանքի հայաբնակ գյուղերը միայն համարվել են ի հաշիվ արցախահայ գաղթականների:

Ուղղանկյուն ձգված մի տապանաքարի

¹¹ Մ. Բարխուտարյան, նշվ. աշխ., էջ 207:

վրա (երկարությունը՝ 137 սմ, լայն.՝ 24,5 սմ, բարձրությունը՝ 31 սմ) քանդակված են խաչ, նետ ու աղեղ և թվականը.

ԹՎ/ԻՆ/ ԶԺԾ (1601):

Մեկ այլ տապանաքարի վրա հինգ տողով փորագրված է (չափերը՝ 132 սմ երկարություն, 32 սմ լայն., 50 սմ բարձր.).

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԿԱԶՄԵԱԼ ԴԱՊԱՆ
ՈՐՊԷՍ ԵՏԵԱԼ Ի ՄԷԶ ԶՆՏԱՆ ՈՐ
ԺԱՄՆ ՏԻՏՐ
ԳԱՏԱԴՆ Է ՀԱՐԿԱՑՆ ԶՆԱԶՆԱ
ՏԻՊԻՐ ՂԱ-
ԶԱՐՍ Է ԱՆՊԻՏԱՆ Ծ... ԾՆԾՂ ՍՈՐԱ
ՄՕՍԷՍ
Ք/Ա/Հ/Ա/ՆԱՆ, ԹՎ/ԻՆ/ ՌԵՃԵՆ ՎԱՆ-
ՃԱՆԵՑԱԻ ԿԵ/ՍԱ/ԻՐԵԻԵԱՆ (1651):

Տապանաքարի վերնամասն ունի երկթեք հորինվածք: Սրա մոտ, նույնատիպ մեկ այլ գերեզմանաքարի վրա, փորագրված է չորս տող (չափերը՝ 113 սմ երկ., 31 սմ լայն., 49 սմ բարձր.).

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԵՂԻԱԶԱՐԻՆ
ՌՃԿԷ (1718) ԹՎԻՆ ՀԱՆԳԵԱԻ Ի
ԴՈՔ-
ՆԱՀԱՑ ՊԵՏԻՆ, Ա/ՍՏՈՒԱ/Ծ ՈՂՈՐՄԻ
ԱՍ-
ԷՔ Տ/Է/Ր ՄՕՍԷՍ ՈՐԴԻ ԵՂԻԵԱ-
ԶԱՐԻՆ:

Մեկ այլ ուղղանկյունաձև ձգված տապանաքարի վրա պահպանվել է ևս չորս տող (չափերն են՝ 146 սմ երկ., 35 սմ լայն., 32 սմ բարձր.).

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍԱՆԱՄԻՆ, ԿԱՏԱ-
ՐԵՑԱԻ ԿԱՄՔՆ
ԱՐԱՐԶԻՆ ՌՃԿԷ (1718) ԹՎԻՆ,
ԳՐԵՑԱԻ ԶԵՌԱՄԲ Տ/Է/Ր
ՅՈՀՎԱՆՆԻՍԻՆ. ՕՎ ՈՐ ԿԱՐԴԱՅ
ՄԷԿ ԼԻԱՅ ԲԵՐԱՆ ՈՂՈՐՄԻ ԱՍԷՔ
ԵՂՔԵԼՈՅՍ:


Վերը նշված գերեզմանաքարերից քիչ բարձր տարածվում են համեմատաբար նոր տապանաքարերը: Սրանք բոլորն էլ ունեն ուղղանկյան ձև, իսկ արձանագրություններն էլ, որպես կանոն, ամնված են նույնաձև շրջանակի մեջ: Դրանցից մեկն ունի երկտող արձանագրություն.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՍՐԱԹԻՆ, ՈՐ Է
ՈՐԴԻ
ԲԵՃԱՆԻՆ, ՌՄԾԶ (1807) ԹՎԻՆ:

Նույնաձև մեկ այլ տապանաքարի վրա ևս կա երկտող արձանագրություն.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԻՐԶԱԲԵԿԻՆ, ՈՐ Է
ՈՐԴԻ
ՍԱՐԳԻՍԻՆ, Թ/ԻՎ/Ն ՌՄԶԲ (1833):

Գերեզմանատանը մեծ թիվ են կապմում 19-րդ դարի արձանագիր տապանաքարերը, որոնք սույն հոդվածով նպատակ չունենք



Նկ. 3. Ղալակայի գերեզմանոցի խոյաձև տապանաքար

ներկայացնելու: Գերեզմանոցի հին մասում պահպանվել են նաև երկու խոյաձև տապանաքարեր: Այս կապակցությամբ նշենք, որ գավառի հայկական գյուղերից շատերի գերեզմանոցներում սովորական տապանաքարերի կողքին հանդիպում են նաև այդօրինակ գերեզմանաքարեր: Խոյաձև տապանաքարեր պահպանվել են հարե՛վան Վանք, Ուշտալ գյուղերի ներկայիս գերեզմանոցներում, Ծաքու կամ Ծաքուլու հին գյուղատեղի գերեզմանոցում և այլն: Ցավոք, ինչպես Ղալակայի, այնպես էլ թը՛վարկված մյուս հնավայրերում պահպանված խոյերի գլուխները ջարդոտված են: Խոյաձև գերեզմանաքարերից ոչ մեկի վրա չկան արձանագրություններ: Դրանցից միայն մեկի վրա քանդակված է խաչ:

Ամփոփելով Ղալակայի գերեզմանոցում պահպանված արձանագիր հին տապանաքարերի նկարագրությունը, նշենք, որ գյուղի սահմաններում Մ. Բարխուտարյանցը հիշատակում է ևս մի հին գերեզմանոցի գոյությունը, որը հայտնի է եղել Կեով¹² անունով: Այս գերեզմանոցից եպիսկոպոսն հրատարակել է միայն երկու տապանագիր:

¹² Կեով գերեզմանոցը անհայտ է ներկայիս Ղալակեցիներին: Կարծում ենք, որ այն վաղուց անցել է հողի տակ կամ ծածկվել անանցանելի մացառներով:

1. ԹՎ. ՊՀ (1421):


2. ԱԾ. ՈՂՈՐՄԻ ՔԱՐԱՄԻՆ:

Ղալակա գյուղից 2 կմ արևելք, միննույն գոգավոր սարահարթի շարունակության վրա, տարածվում է գավառի հինավուրց ու ցայսօր հայաբնակ Ուշտալ գյուղը: Գյուղը 1861 թվականին ուներ 60 տուն հայ բնակչություն¹³: 1890 թվականին այն կազմել էր 139 տուն (1071 բնակիչ)¹⁴: 1984 թվականին գյուղն ուներ 294 բնակիչ, որից 291-ը հայեր (125 արական, 166 իգական), մնացածը՝ ադրբեջանցիներ:

նեղ տուած է պ. Յովհաննէս Պետրոսեան Մայիլեանցն»¹⁵:

Ուշտալ գյուղի հարավային ծայրում, թեք լանջի վրա, տարածվում է գյուղի հին գերեզմանոցը, ուր թաղումները այժմ էլ շարունակվում են: Գերեզմանոցի հին մասում պահպանվել են մի քանի տապանաքարեր, որոնցից սակայն միայն մեկն ունի արձանագրություն:

ԱՅՍ Է ԴԱՊԱՆ ԳՈՒԼՆԱԶԱՐԻՆ, ՈՐ ՄԱՀՕՔՆ ՓՈՆԵՅԱԻ ԱՌ Ա/ՍՏՈՒԱԾ, ՌՃԿԶ (1717) ԹՎԻՆ Ա/ՍՏՈՒԱԾ/ ՈՂՈՐՄԻ ԱՍԷՔ, ԱՄԷՆ:



Նկ. 4. Հայագիր տապանաքար

Գյուղի սր. Աստվածածին եկեղեցին այժմ գոյություն չունի: Ըստ Մ. Բարխուտարյանցի հիշատակության, եկեղեցին՝ «...ս. Աստվածածին, հոյակապ, կառուցեալ 6 սեան վերայ բնակչաց տրօք. որ ունի մի քահանայ և 300 րուբ. իսկ կաթուղիկէն (նկատի ունի գմբեթը կամ պանգակատունը—Ս. Կ.) և տանեաց թիթեղամածը իւր ծախքով շի-

Տապանաքարն ունի ձգված ուղղանկյան ձև (չափերն են՝ 178 սմ երկ., 33 սմ լայն. 75 սմ բարձր.): Տապանաքարից մի քանի մետր լանջով վեր, կանգուն, բայց շարդված գլխով պահպանվել է մի խոյան տապանաքար (նկ. 4): Այս տապանաքարը մյուս բոլոր թվարկված խոյան գերեզմանաքարերից տարբերվում է ոճական ու գեղարվեստական առումով: Վերջինիս տարբերիչ

¹³ Մ. Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 139.

¹⁴ Նշվ. աշխ., նույն տեղում;

¹⁵ Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 206—207:

հիմնական առանձնահատկությունն է թամբի հատվածը, որն այստեղ քանդակված է ամենայն մանրամասնությամբ: Գերեզմանոցում մեծ թիվ են կապում 19-րդ դարի տապանաքարերը, որոնք բոլորն էլ արձանագիր են:

Ուշտալ գյուղում գործում է Ուշտալի գյուղական Հանրակրթական Աշխատանքային Պոլիտեխնիկ Արտադրական Ուսուցմամբ միջնակարգ դպրոցը: Ներկայումս (1984) Ուշտալի հայկական դպրոցում աշակերտների թիվը, բոլոր դասարաններում միասին, կապում է շուրջ 70 երեխա:

Ուշտալ և Ղալակա գյուղերի միջև ձգվող ասֆալտապատ գլխավոր խճուղուց փոքրինչ ցած գտնվում է Ալայի շեն կամ Նորշեն գյուղը: Սա ևս փռված է նույն գոգավոր սարահարթի շարունակության վրա: 1861 թվականին գյուղն ուներ 55 տուն, իսկ 1890 թվականին՝ 83 տուն (693 բնակիչ)¹⁶: 1984 թվականին գյուղն ուներ 265 հայ բնակիչ (127 արական, 138 իգական): Եկեղեցին ըստ Բարխուտարյանցի հիշատակության, կոչվել է սբ. Աստվածածին ու դեռևս 1893 թվականին եղել է անխնամ վիճակում: Այն եղել է կիսով չափ փայտաշեն, որի տեղն իսկ այժմ չի նկատվում:

Ալայի շենի (Նորշեն) գերեզմանոցը ևս, ինչպես Ուշտալում, տարածվում է գյուղի ծայրում: Այստեղ ևս այժմ թաղումները շարունակվում են: Սակայն այս գերեզմանոցում արձանագիր հին գերեզմանաքարեր չգտանք: Տեղում պահպանված ամենահին տապանաքարը 1796 թվականից է:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄՌԱՎԱՋ ԵՎԱՆԻ
ՈՐԴԻ ԴԱՆԷԼ, ՌՄԽԵ (1796) ԹՎԻ/Ն/:

19-րդ դարի արձանագիր տապանաքարերի մեջ մեծ թիվ են կապում այնպիսիները, որոնց վրա նշված են հանգուցյալների ծա-

գումով դարաբաղցի լինելը: Ստորև ներկայացնում ենք դրանցից մի քանիսը:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՐԱՊԱՂՅԻ
ՀՐԱՊԵՏԻ ՈՐԴԻ ՅԱՐՈՒԹԻՆ, ՌԲ
ՄՀԴ ԹՎԻՆ/, (1825):

Մեկ ուրիշ գերեզմանաքարի վրա փորագրված է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՐԱՊԱՂՅԷ
ԵՏԻԼՅԷ ՀԱ/Ն/ԳԵԱԼ ՏԱՎԿԻԹԻՆ
ՈՐԴԻ ՏԵՐՓՈՒՆ ԳԻՐՔՈՐԻՆ, ՌԲԿԱ
(1812):

Գերեզմանոցում պահպանվել է 1865 թվականին Ալայի շեն գյուղի հոգևոր առաջնորդ տեր Սարգսի տապանաքարը, որ հիշատակում է Դանիել արքեպիսկոպոսը.

Ա/ՍՏՌԱ/Ծ ՈՂՈՐՄԻ ՏԵՐ ՍԱՐԳԻՍ
ՍԻՆ ՅԱՐՈՒԹԻՆ
ԵԱՆՅ 1875 Թ:

Ալայի շենում ուշագրավ է 1907 թվականին կառուցված դպրոցի շենքը, որի պահպանված միակ արձանագրությունը խիստ արժեքավոր է ու հապվագյուտ նմուշ իբրև հայկական դպրոցի շինարարության վկայագիր: Սրբատաշ քարի վրա, որն ագուցված է շենքի ճակատին, փորագրված է երկտող հակիրճ, բայց իմաստալից արձանագրություն.


ԱՅԻԲ, ԲԵՆ / ԱՋԱՅ ՇԵՆ 1907:

Դպրոցում պահպանվել է Ալայի շենի սուրբ Աստվածածին եկեղեցու վանդը (շունի արձանագրություն):

Ամփոփելով հոդվածը՝ ավելորդ չենք համարում նշել, որ վերոհիշյալ Ալայի շեն կամ Նորշեն գյուղում 1984 թվականին կար ութամյա հայկական դպրոց՝ 6 աշակերտով:

¹⁶ Մ. Մմբառեանց, նշվ. աշխ., էջ 139:





ԼԻԼԻԹ ՉԱՔԱՐՅԱՆ

(Արվեստաբանության թեկնածու)

ԱՎԱԳ ԾԱՂԿՈՂ*

Երբեմն նույն պատումը օգտագործվում է տարբեր խմբագրություններով, նայած թե ինչ նախօրինակից է օգտվել վարպետը: Մայր Հայաստանի մանրանկարչության մեջ «Ծնունդը» և «Մոգերի երկրպագությունը» սովորաբար հանդես են գալիս միացյալ: Կիլիկիայում այս պատկերը տրոհվում է և երկու դրվագները վրադնշվում են ինքնուրույն տեղեր: Ավագի մոտ առկա է և՛ ավանդական հայկական խմբագրությունը, և՛ կիլիկյանը: Պատկերագրությունը ընդհանրապես այն ոլորտն է, ուր բացահայտվում են մեր վարպետի աստվածաբանական լուրջ կրթությունը, գիտելիքները և հակումները: Կիլիկյան վարպետների մշակած տիպերից օգտվելիս Ավագը ցուցաբերում է ճկուն միտք, ինքնուրույնություն, այնպես, որ ուրվանկարների թեթևակի վերափոխման միջոցով կարողանում է բացահայտել իր ըմբռնումը, իր տեսակետը պատումի գաղափարական առանցքի նկատմամբ: Հորինվածքը համառոտվում է, հիմնականը պատվում է երկրորդականից, գրեթե միշտ անվերապահորեն ընդգծվում Քրիստոսի առաջնակարգ դերը: Օրինակ «Հիտուը Սիմոն բորոտի տանը» նկարում ի տարբերություն կիլիկյան օրինակների, պատկերվում են միայն գլխավոր անձինք՝ Քրիստոս և նրան նարդոսի յուղով օծող կինը, այսինքն՝ նկարիչը ներկայացնում է իրադարձության հենց

բարձրակետը, տեղի ունեցող երկխոսությունը և սրանով հասնում հոգեբանական մեծ ներգործության: Դիտողի ուշադրությունը կենտրոնացած է այս երկուսի վրա, որոնց միջև նկարչի հուժկու ավյունի շնորհիվ ստեղծված դաշտը ներթափում է նաև դիտողին ու ականայից ստեղծում իրադարձությանը մասնակից դառնալու պատրանք:

«Ղապարոսի հարության» մեջ կիլիկյան վարպետները ներմուծում են իրապաշտական մի մանրամասն—Ղապարոսի ընկերը դիակի տարածած գարշահոտությունից ծածկում է քիթը: Ներկա է նաև հրեաների բալությունը, որ բացակայում է վաղ Հայկական ձեռագրերում: Այս պատկերագրական հորինվածքը իր ընդհանուր գծերով կրկնվում է Ավագի մանրանկարում. բաց է թողնվում միայն ընկերոջ կերպարը, որ կենցաղային երանգ է հաղորդում տեսարանին, և այսպիսով շեշտվում Քրիստոսի ու Ղապարոսի միջև տեղի ունեցող խորհրդի պահը:

«Կանաչի հարսանիքում» կիլիկյան վարպետները Քրիստոսին հատկացնում են գլխավոր դեր, տեղավորելով նրան հարսի ու փեսայի մեջտեղը: Ի տարբերություն վաղ հայկական օրինակների, ուր Քրիստոսը պատկերվում է իրադարձության երկու տարբեր պահերի: Հետևելով խմբագրական կիլիկյան տարբերակին, Ավագը նույնպես Փրկչին մեկ անգամ է պատկերում, բայց այս անգամ արդեն ջրով լի անոթների կողքին, որոնց հետ էլ անմիջականորեն կապված է հրաշքի խորհուրդը, «նա ջուրը գինի

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1985 թվականի № Է-ից:

դարձրեց, որպեսզի հայտնի լինի նրա Աստվածությունը, թե նա որ ոչնչից ջրին տվեց ջրի բնությունը, նույն ջուրը գինի դարձրեց, ինչպես և կամեցավ»¹⁵: Եվ այսպես, ամենուրեք, ուր տեղի է ունենում հրաշք, հորինվածքները համառոտված են գործող անձանց կրճատման հաշվին, հիմնականը միշտ Քրիստոսն է, պատմությունից պատմություն փոփոխվող դեմքի, ոչ միանշանակ արտահայտությամբ, բայց միշտ կարեկցանքով ու համամարդկային սիրո անխորտակելի ուժով լի: Այդպիսի իմաստային հագեցվածությամբ են ներկայանում Կույրերի, Անդամալույծի, Տեռատես կնոջ, Պետրոսի զոքանչի և այլ ապաքինումներ, բոլորն էլ համույժ, ու ճշմարտապատում, քանի որ կրում են նկարչի խորը ապրումների անջնջելի կնիքը:

Թվում է, թե Քրիստոսի աստվածային էության շեշտման հետ է կապված և «Վերջին դատաստանի» Ավագի պատկերագրական խմբագրությունը: Ըստ էության, այն հիշեցնում է կիլիկյան վարպետների և հատկապես Թ. Ռուպինի կողմից մանրամասն մշակված օրինակը, որի մեջ Ավագը որոշ փոփոխություններ է մտցնում: Երկու ձեռագրերում էլ (հ. 212, հ. 7650) այս պատկերները հետևում են Մատթեոսի ավետարանին: Ռուպինի բավականին լայնածավալ, բավաթիվ դրվագներ ընդգրկող «Վերջին դատաստանը» ամբողջադիր է (հ. 539, 1262 թ.): Մինչդեռ Ավագը տրոհում է այն երկու հանդիպադիր էջերի վրա, առավելագույնս ընդգծելով Քրիստոսի երկնային դատավոր լինելու հանգամանքը. «Արդ, երբ մարդու որդին գա իր փառքով և բոլոր հրեշտակները իր հետ, այն ժամանակ նա պիտի նստի իր փառքի աթոռի վրա...» (Մատթեոս ԻԵ—31): Մի դեպքում Քրիստոսը որպես երկնային դատավոր մի էջի վրա հանդես է գալիս Աստվածածնի հետ, մյուս դեպքում նա նորից հանդես է գալիս Աստվածածնի, Հովհաննես Մկրտչի և առաքյալների հետ: Հանդիպադիր էջերին ներքևի դաշտերում պատկերվում են Վերջին դատաստանի մյուս դրվագները, մեղավորների և անմեղների հարության տեսարաններով: Նույն սեղմ ու կարճառոտ եղանակով են կատարված «Անառակ որդու վերադարձը», «Դու ես Պետրոսը», «Նաչի Գողգոթա տանելը» պատկերները: Վերջինս բառացիորեն կրկնօրինակում է տեքստը՝ «Եվ դուրս ելնելով՝ գտան կյուրենացի մի մարդ Սիմոն անունով, ու նրան ստիպեցին, որ նա խաչը կրի» (Մատթեոս ԻԵ—32):

Ինչ վերաբերում է «Դու ես Պետրոսը» մանրանկարին, ապա այն համաձայն Ս.

Տեր-Ներսեսյանի, apriori կարող է համարվել արևմտյան ապոկեոլոգիայի արդյունք կիլիկյան մանրանկարչության վրա, քանի որ լատինական աշխարհում էր, որ հատկապես ընդգծվում էր Պետրոս առաքյալի առաջնությունը մյուսների նկատմամբ¹⁶: Թեև, որքան էլ որ այդ տարօրինակ թվա, արևմուտքում այն պատկերվում է ծայրահեղորեն հապավադեպ:

Այսպիսով, Ավագը ստեղծագործում էր մի ժամանակաշրջան, երբ արևմտյան աշխարհի և հատկապես հռոմեական եկեղեցու ապոկեոլոգիանը Կիլիկիայում նկատելի էր: 14-րդ դարի առաջին կեսին նույն երևույթը դիտարկվում է բուն Հայաստանում: Միարարական գործունեությունը, որ վարում էր Հռոմի եկեղեցին թե Կիլիկիայում, թե՛ Հայաստանում ուներ իր պաշտպաններն ու հակառակորդները: Միարարության դեմ պայքարի հիմնական կենտրոնն էր Գլաձորի Համալսարանը, ուր իր հոգևոր կրթությունն էր ստացել Ավագ ծաղկողը: Թվում է, թե Քրիստոսի դերի խիստ շեշտադրումով, հատկապես հրաշքներ պատկերող տեսարաններում և մանավանդ հրաշքներին հսկայական տեղ հատկացնելով իր ստեղծագործություններում Ավագը հետապնդել է հատուկ նպատակ—ընդգծել Փրկչի Աստվածային բնությունը տուրք տալով հայոց եկեղեցու միաբնակ ուղղությանը: Սա նկարչի համար ազգային ինքնարտահայտման ուղի էր, հայ եկեղեցու հինավուրց դավանաբանական հիմքերը պաշտպանելու մի ձգտում: Դժվար թե այնպիսի մի ավանդապահ ոլորտում, որպիսին էր միջնադարյան գրքի նկարազարդման պատկերագրությունը, նախատիպից կատարվող շեղումները պատահական բնույթ կրեին: Ապաքինումների նկարազարդումներում բաց թողնելով մանրամասներ, նկարիչը կարծես շեշտում է հրաշքի պահը. վեր հանում դրա աստվածային բնույթը: Ուրեմն և նրա ստեղծագործության մեջ երևան է գալիս մի նոր շերտ, զուտ գաղափարական ոլորտին վերաբերող մի երանգ, որն ինչ-որ չափով օգնում է լրացնելու նկարչի անհատականության մասին մեր ունեցած պատկերացումները:

Ավագ ծաղկողը իր ժամանակի հայ իրականության ամենակրթված, լայնախոհ ու հետաքրքիր անհատականություններից մեկն էր: Այդ է վկայում նրա մեծ իմացությամբ ու նրբին ճաշակով կերտված գեղանկարչությունը, խորախորհուրդ գրությունը, և վերջապես, ժամանակակիցների մեջ վայելած մեծ հեղինակությունը, որը նա պարտական էր, անշուշտ, ոչ միայն իր նկարչական տա-

¹⁵ Der-Nersessian, Freer Gallery, p. 51.

¹⁶ Der-Nersessian, Freer Gallery, p. 51.

ղանդին, այլև անհատականության ուժին ու հմայքին: Այլապես դժվար է բացատրել այն խանդավառ ընդունելությունը, որ նա գտավ Կիլիկիայում ոչ միայն իր արվեստակիցների շրջանում, այլև ամենաբարձր խավի ներկայացուցիչների մոտ: Թանկարժեք թագավորական ընծան, նրա նկատմամբ Կիլիկիայում եղած վերաբերմունքի ամենալավ ապացույցն է:



«Հովհաննես Մկրտչի գլխատումը», Մատ., ձեռ. № 212 (1337 թ.)

Այսպիսի լայնախոհ, մեծ արվեստագետը, իհարկե, չէր կարող ամբողջովին անտեսել արտաքին աշխարհում ծավալվող գեղարվեստական գործունեությունը: Նախապես ասենք, որ արտաքին ազդեցությունները Ավագի մոտ ի տարբերություն իր շնորհալի գործընկեր Թորոս Տարոնացու, հանդես են գալիս խիստ միջնորդավորված ձևով: Բացառիկ դեպքերում պագցվում է անմիջական կապ բյուզանդական արվեստի հետ: Սա վերաբերում է 1337 թ. նկարազարդված հ. 212 ձեռագրի Աստվածամոր ու մանկան պատկերին: Ավելի ճիշտ, այդ պատկերը պարզապես կարելի է անվանել մանրանկար սրբապատկեր մագաղաթի վրա:

Լատինական աշխարհը նույնպես թողել է իր աննշան կնիքը Ավագի ստեղծագործու-

թյան վրա, և նույնպես միջնորդավորված: Աշխարհիկ, կամ պինվորական հագուստներ, գլխարկներ, պրահներ—ահա այն բնագավառը, ուր Կիլիկիայի միջոցով ի հայտ է գալիս Եվրոպան:

Ավագի ստեղծագործության մեջ յուրահատուկ տեղ է գրավում դիմանկարը: Իր հիմքում ունենալով Կիլիկյան ավանդույթը, այն ստանում է նորովի մեկնաբանում, օժտվում անհատական գծերով: Պատվիրատուներ պարոն Սորխաթմիշի ու նրա տիկին Բեկի խաթունի, պարոն Ասլանի ու հենց իր՝ ծաղկողի դիմանկարները շահեկանորեն տարբերվում են նախորդ շրջանի նկարներից: Հ. 7650 ձեռագրում, «Վերջին դատաստան» մանրանկարի ներքին լուսանցքի մոտ պատկերված է Ասլանը, գրկած մանուկին Բրիստոսին մատուցելու պահին: Դատելով հիշատակարանից, դա նրա՝ մանկամարդ վաղամեռիկ որդին է: Նման կենդանի, իրապաշտական շնչով տոգորված ու, նույնիսկ, փոքր-ինչ կենցաղային բնույթի դիմանկարներ չեն հանդիպում ո՛չ բյուզանդական, ո՛չ Կիլիկյան արվեստների մեջ, և ինչ-որ տեղ մտնում են յուրահատուկ Ավագի արվեստին:

Խորանների պարզարվեստը և ավետարանիչների պատկերները Ավագի ստեղծագործության նվազ ինքնուրույն մասն են կազմում: Նրանք մեծապես հետևում են Կիլիկյան օրինակներին:

Ավագի՝ և ընդհանրապես միջնադարի որևէ նկարչի ստեղծագործության գեղարվեստական արժեքի բացահայտումը պայմանավորված է նախ և առաջ՝ միջնադարի գեղարվեստական խնդիրների պարզաբանմամբ: Սա խրթին, բայց թերևս այդ արվեստը հասկանալու միակ ուղին է: Որո՞նք էին նկարչի ստեղծագործության շարժիչ ուժերը, ներշնչման աղբյուրները, ինչպիսի՞ն էին հոգևոր նախադրյալները:

Խնդիրը, որ դրված էր Ավագի առջև—Քրիստոսի կյանքի դրվագների պատկերումը—շատ հին էր և համընդհանուր իր ժամանակի քրիստոնյա աշխարհի բոլոր նկարիչների համար: Հարցը, որ գեղարվեստական տեսակետից ենթակա է քննարկման, այն է, թե միջոցները, որով նա աշխատում էր լուծել այդ խնդիրը, կրո՞ւմ են անհատական ստեղծագործական գործընթացի կնիք, թե ոչ: Հենց սկզբից կարող ենք այս հարցին դրական պատասխան տալ, այլապես Ավագի ստեղծագործության ինքնուրույն քննարկումը կլիներ անիմաստ, իսկ նրա ժառանգությունը կտարրալուծվեր այն բազմաթիվ մանրանկարչական ձեռագրերի մեջ, որոնք իրենց քանակով անշուշտ հարստացնում են ազգային արվեստի շտեմարանը, բայց ոչ

երբեք պարզեցում նրան ճշմարիտ ստեղծագործական անհատականություններ:

Ավագը, որ ռոսլինյան ավանդույթների միակ հավատարիմ հետևորդն էր ԺԴ դարում, կարողացավ թափանցել նաև նրա գեղարվեստական համակարգի հոգեբանական շերտերի մեջ, ըմբռնել նրա արվեստի ներքին սկզբունքները, լիովին մարտել կրած ազդեցությունը և առաջարկել իր սեփականը: Այստեղ, իհարկե որոշիչ դեր էր խաղում նրա նկարչական տաղանդի առկայությունը. գեղանկարչությունը—մեր վարպետի ինքնարտահայտման հիմնական միջոցն էր, նրա անհատականության անքակտելի մասը: Որպես նկարիչ Ավագը գեղագետ էր, նրա նկարները լի են այն նրբագեղ, անորսալի բանաստեղծականությամբ, որը հիանալի հաղորդվում է ձևի ու գույնի միջոցով: Իսկ կերպարների հոգեբանական տարբերակումը, նրանց ներաշխարհի խորքերը բացահայտելու կարողությունը, բացահայտում է մի ուժեղ ու նրբագաց անհատականություն, որը միաժամանակ ի վիճակի է բացարձակապես վերանայ անձնականից, և ներհուն ապրումների ու խոկումների ճանապարհով թափանցել բարձրագույն հոգևոր ոլորտներ: Եվ ահա գերիրականի հետ շփման այդ պահերին «ներքնածին» պատկերները ստանում են ձև, շուկե ու հոգի և հանձնվում մագաղաթին: «Ներքին աչքի» առկայությունը, որ հատուկ էր միջնադարյան ամեն մի նկարչի, իր դերն է կատարում Ավագի նկարներում և ապահովում ստեղծագործական պրոցեսի անմիջականությունն ու կերպարների ճշմարտացիությունը: Օժտված նկարչի հուժկու ավյունով՝ նրա կերպարները այսօր էլ պահպանում են զգացմունքային ուժը և ներգործում դիտողի վրա, հուլում նրան մարդկային բարոյական արժեքների չխամրող պոռությամբ: Ի դեպ, ավետարանական բնագրերը, մանավանդ Տիրոջ գործած հրաշքները իրենց բազմապատկան նկարիչներին տարբեր հորինվածքային մեկնաբանումների հնարավորություն էին տալիս: Այստեղ է, որ քիչ թե շատ դրսևորվում են նկարչի անհատականության հոգեբանական շերտերը: «Հրաշքի խորհուրդը՝ իր ողջ մետաֆիզիկական բնույթով ու բարոյական արժեքով այնպես է համակում նկարչին, որ ներշնչանքի պորությունը հասնում է բացարձակի ու տեսիլները վավերականի ուժ ստացած, փոխադրվում են մագաղաթի վրա, ներդաշնակելով հավատքի ու արվեստի զգայությունները: Այսպիսին է միջնադարյան նկարչի հավատամքը և այս հավատամքի գոյությամբ է, որ մենք արժեքավորում ենք նրա արվեստը: Այս հենքի վրա է, որ կերտվում են Քրիստոսի անսլուզական կեր-

պարներ, քանի որ հենց Քրիստոսն է, որ հաճախ իր վրա է կրում իրադարձության ողջ իմացաբանական ծանրությունը: Ավագի վրձնած քրիստոսներ դադարում են «անիմանալի», «անըմբռնելի» պորության կամ ամենակալության ընդհանրացված խորհրդանիշ լինելուց: Այնքան խորն ու այնքան բազմաշերտ են նրանք իրենց ներաշխարհով, որ արտաքին տպավորության բնական չափերի խախտման կամ ձևերի



«Ղապարոսի հարությունը», Մատ., ձեռ. № 6230
(1358 թ.)

մակերեսային ազդեցության անհրաժեշտությունը միանգամայն բացառվում է: Չափերով Քրիստոսը չի տարբերվում մյուս գործող անձանցից. համամասնությունները ներդաշնակ են, ֆիզիկական նյութը՝ թեթև, կարծես անկշիռ, հայացքը լարված, որոշակի նպատակադրվածությամբ: Նուրբ դրվագավորված, կենդանի դեմքը վերծ է որևէ ճնշող կամ վերացական երանգից ու չի համապատասխանում ընդունված պատկերագրական կանոնին: Այստեղ գերակշռում է միտքը. սա իմաստուն, ամեն ինչ հասկացող ու ներող, անհունորեն մարդկային ու սիրող Քրիստոսն է, մեր նկարչի իդեալը: Ապաքինումների ժամանակ նա մերթ համակ բարություն է, ինչպես արյունահոսող կնոջ դեպքում, մերթ անառիման կարեկ-

ցանք ու բարի կամք—ինչպես բեթսայիդացի կույրի հետ, մերթ էլ սեր ու ըմբռնում կույր Բարտիմեոսի նկատմամբ, որին նա դիմում է «Գնա՛, քո հավատը քեզ փրկեց» խոսքերով:

Եվ այսպես, պատմությունից պատմություն փոխվում է Փրկչի դեմքի արտահայտությունը, հարստանում նոր հոգեբանական երանգներով: «Ղապարոսի հարության» մեջ նա պատկերված է կտրուկ շարժման պահին. աչքերի սևեռուն հայացքով, թափանցելով տարածության խորքերը, Փրկիչը նայում է, բայց ոչ Ղապարոսին, ոչ էլ նրա շուրջը, այլ դեպի Ասիունը: Կարծես նա տեսնում է մի բան կամ մեկին, որ ոչ ոքի տեսանելի չէ. այդ «անիմանայի», «անտեսանելի» հետ երկխոսության, այդ հպոր հայացքի ուժով է, որ մեռյալը վերակենդանանում է: Ամբոխը քարացած է: Փրկչի դեմքի ուրվագիծը հստակ է, խիստ ընդգծված այտուկներով. հստակ գծագրված երկար, բարակ ողնուցով քթով: Սակայն մեր հայացքը նորից ու նորից վերադառնում է մութ ստվերներով շրջանակված աչքերին ու հոնքերի հատման այն կետին, դեպի ուր առաջնորդվում են թե՛ ճակատի, թե՛ դեմքի ծալքերի ուղղությունները. այդ է դեմքի կենտրոնաձիգ մասը, այդտեղ է տեղավորված Փրկչի «հոգևոր աչքը» Աստվածային իմաստությամբ լի: Եվ հենց այդ՝ «տեսողական» ողջ հատվածն է, որ հաղորդում է կերպարին տիրակալի շունչ: Այս պատկերը ինքնին իր հոգեբանական հարուստ գույներով, ներդրված անկրկնելի խորհրդով, մի ինքնամփոփ աշխարհ է:

Այդպիսին է և «Քրիստոսին նարդոսի յուղով օծող կինը» մանրանկարը: Ավետարանական ընդարձակ պատմությունից Ավագը վերցնում է միայն ամենաէականը, ընտրում է միայն երկու ամենակարևոր անձանց—Քրիստոսին և կնոջը: Մինչդեռ Ռոսլինի մոտ այս պատմությունը ներկայացված է ամենայն մանրամասնությամբ. ներկա են և Սիմոն Բորոտը, որի տանը տեղի է ունենում դեպքը, և աշակերտները: Ավագը իր միտքը ավելի ցայտուն դարձնելու համար կրճատում է երկրորդական անձանց ու թողնում միայն գլխավորներին, ստեղծելով թե՛ հոգեբանական, թե՛ գեղանկարչական առումով մի կատարելություն: Այս պատկերի գործողության տրամաբանական հիմքը երկրային կյանքի օրինաչափությունները չեն. Մարիամ Մագդաղենացու և Քրիստոսի դեմքերը ունեն վերացած, օտարոտի արտահայտություն, ոչինչ աշխարհական նրանց այլևս չի հուշում, երկուսն էլ գիտեն ճակատագրի մասին ու ենթարկվում են նրան. «Իմ մարմնի վրա

այդ յուղը թափելով նա իմ թաղվելը կանխանշեց: Բայց ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ամբողջ աշխարհում, ուր էլ այս Ավետարանը քարոզվի, պիտի պատմվի դրա հիշատակին նաև ինչ որ դա արեց» (Մատթեոս ԻԶ-13): Սա երկու մարդու միջև եղած հոգևոր կապի մի խորախորհուրդ, բարձրագույն սիրտ և հավատարմության մի վկայություն է: Նրբագեղ, անոքալի բանաստեղծականություն կա այս փոքրիկ նկարում:

Այսպիսով, հրաշքների նկարաշարը օգնում է Քրիստոսի կերպարի առավել ամբողջական բացահայտմանը: Այնքան կենդանի ու ուժգին է վերապրում նկարիչը հրաշքների հետ կապված պատմությունները (այսինքն այնքան հիմնավոր էին նրա կյանքում քրիստոնեական բարոյագիտության դրույթները) և այնպես վարպետ է կատարման մեջ, որ ի վերջո այդ պատկերները օժտվում են ԺԴ դ. համար բացառիկ մի ոգեղենությամբ: Սա հոգևոր կատարելության, մաքրագործման հասած ստեղծագործական մի վիճակի արդյունք էր, երբ արարվում են իրենց անաղարտությամբ ու վեհությամբ գերիրական կերպարներ: Եվ այսպես, ոգեղեն լիցք հաղորդելով ֆիզիկականին, նկարիչը կարողանում է բացահայտել մարդկային հոգեբանության ամենանրբին շերտերը, իմաստավորելով դրանք որպես բարձրագույն բարոյականության դրսևորումներ. հենց սրանով է, որ Ավագ ծաղկողի ստեղծագործությունը առնչվում է արվեստի հավերժական հմայքի գաղտնիքների հետ: Կարծես թե Ավագը իր առաջ խնդիր էր դրել այդ դառը և անհանգիստ ժամանակներում ժողովրդին նվիրաբերել կերպարներ, որոնք հակառակ գոյություն ունեցող ցածր կրթերին ու դժման իրադարձություններին, մարմնավորեին լավագույնն ու անաղարտը, ներդաշնակ մարդկային հարաբերությունները:

Ավագի ստեղծագործություններում Աստվածամոր կերպարը հայ մանրանկարչության ամենավեհ, ամենականացի ու քնքուշ կերպարներից է. Քրիստոսը մարդկային ճակատագրով տառապող, մեղքն ու քավությունը իր վրա վերցրած մի էակ, առաքյալները՝ հավատի փնտրողներ:

Ավագի ստեղծագործության ողջ գեղարվեստական համակարգի ձևաբանական տարրերը՝ գծանկարի ու հարթության հարաբերությունները, շարժմաների ու դիրքերի համադրումները, խորինվածքային անկաշկանդությունը—ըստ էության ժամանակի գեղագիտական պրպտումների սահմաններում էին, սակայն դրանք, հավանաբար գալիս էին ոչ թե իրականության անմիջական ընդօրինակումից, այլ նկարչի ներաշխարհի հետ

կապված, խորապես ապրված ու գիտակցված մտապատկերներից: Այլապես, դժվար թե միջնադարյան նկարչի գիծը, գույնը կամ այլևայլ ոճական հատկանիշներ ունենային այն գրավիչ անկեղծությունը, այն ոգեղեն լիցքը, որ բացահայտվում է Ավագ ծաղկողի ստեղծագործության գործող անձանց ֆիզիկական կերպարներում:

Այսպիսով, Ավագը հասնում է քրիստոնյա նկարչի բարձրագույն նպատակին. նրա վրձնած պատկերները նորից ու նորից օգնում են պզալու, հարաբերվելու «անիմանեյի», «անտեսանելի» հետ, խորհրդածելու Մարդու ու Աստծո հարաբերությունների շուրջ:

Մարդու հոգևոր աշխարհը ավելի բազմակողմանի արտացոլելու խնդիրը ուղեկցվում է գեղանկարչական-ոճական փոփոխություններով: Անձինք ձեռք են բերում ֆիզիկական շոշափելիություն. սա ոգեղենությունը բացահայտելու մի օժանդակ միջոց է՝ անկենդան, խորհրդանշական մարմիններին կենդանություն հաղորդելու համար: Ավագը խուսափում է «հոգեբանական վիճակների» պարզունակ ցուցադրումից: Նա ձգտում է «կերպարայնության»՝ հոչակելով ու հաստատելով քրիստոնեական բարոյականության սկզբունքներ: Յուրահատուկ հետաքրքրություն են ներկայացնում «Թաղում», «Խաչելություն» կամ «Խաչից իջեցնելը» պատկերները, որոնք թեև իրենց պատումով անսահման հնարավորություն են ընձեռում գիրծող անձանց հուսկական վիճակների պատկերման համար, բայց խորհրդավոր են իրենց ամբողջության մեջ, ներապրում մթնոլորտով, տպավորիչ՝ կերպարներով: Ավագը արտակարգ մեծ վարպետություն է դրսևորում «Խաչից իջեցնելը» նկարում, որը մի բացառիկ օրինակ է թե՛ իր գծանկարով, թե՛ տարածության կազմակերպմամբ: Անձերի համամասնությունների աննախադեպ խախտումներն այստեղ հանգեցնում են հայ մանրանկարչությանը մինչ այդ անհայտ շատ համույիչ ձևաբեկման: Մարիամի և Սաղոմեի մարմինները ձգված են, երկարացված. պարզ է, նկարիչը մտածել է անձերին մանրանկարի՝ շրջանակի ներսում կանոնական օրենքներով դասավորելու պահանջից: Բացարձակ վարպետությամբ, մարմնակազմության կատարյալ իմացությամբ, միջնադարի համար ոչ սովորական, բարդ ռափուսային հաշվումներով է կատարված խաչին հետևի կողմից հենված Հովսեփի Արիմաթեացին: Նկարը պարուրող մթնոլորտը մեղմ է, տխրությամբ լի, բայց ոչ լարված: Հետաքրքիր է դրվագավորված Քրիստոսի դեմքը: Գույնը դառնում է կատարողական եղանակի հիմնական տարրերից մեկը, օգ-

նում կերպարի ընդգծմանը: Կանաչի աստիճանական անցումներով նկարիչը կարողանում է ստեղծել բարդ, ոչ ամենևին միատարր արտահայտությամբ մի դեմք, որի նյութեղեն պատյանին հպվել է մահը: Վրձնահարվածները մանր են, թեթև, տեղ-տեղ սպիտակի օգտագործմամբ, այնպես որ գունային կապը ինքնին դառնում է լուսաբեր, կիսատոներով հարուստ: Կատարողական նման եղանակը հոգեբանական բարդ երանգներ արտահայտելու հնարավորություն է ստեղծում:

Ավագ ծաղկողի արվեստի էական հատկանիշներից է վառ գունեղությունը, պայծառ, բայց ներդաշնակ ներկայակալը: Նրա ներկայակալի հիմնական տարրերն են մաքուր, լայնահիստ կապույտը (որը դժբախտաբար տեղ-տեղ կորցրել է իր նախնիին թարմությունը), շքեղ, երբեմն նույնիսկ ծանրակշիռ ոսկին, պատկերներին չխամրող թարմություն հաղորդող հիանալի, խորը կարմիրը, թանձր, բազմերանգ կանաչը: Կա, սակայն, մի հատկանիշ, որը նրան տարբերում է Մայր Հայաստանի ինչպես նախորդ շրջանների, այնպես էլ իր ժամանակակից վարպետներից և մոտեցնում գույնի ու ձևի կրիկյան ըմբռնմանը: Գույնը նրա ներկայակալում հավասար հարթություններով չի հանդես գալիս: Մեկ տոնի սահմաններում, այն հետպիտես ուժեղանում է կամ թուլանում, համապատասխանեցվելով մարմինների առաձգականությանը, լուսավորվածությանը: Նման մոտեցումը տվյալ որակի սահմաններում վերջիվերջո հանգեցնում է ուրույն «գունաստվերի», որը, ըստ էության, շատ հեռու է իրական լուսաստվերից, բայց արդյունավետ է ձևաստեղծման տեսակետից: Այս հարցում Ավագը կրիկյան վարպետների հավատարիմ աշակերտն է: Չկա այլևս երբեմնի անշարժությունը, խորհրդանիշ-կերպարների միմյանց նկատմամբ ունեցած անհաղորդականություն ու մեկուսացվածությունը: Ընդհակառակը, հրեշտակների հուժկու թևերից կարծես ժայթքում է մի հախուռն հոսանք, որ համակում է իրադարձության մասնակիցներին (ծնունդ, ավետում). կա գործողության մի ընդհանուր մթնոլորտ, շարժման մի վիճակ, որ առկա է գրեթե բոլոր մանրամասներում:

Մատենադարանում պահվող չորս առատորեն նկարապարզված ձեռագրերը, թեև ոչ վերջնական, բայց բավականին լուրջ պատկերացում են տալիս Ավագի արվեստի պարզացման ժամանակահատվածների մասին: 1337 թ. հ. 212 ձեռագիրն ունի ավելի քան 100 մանրանկար, ուր գերակշռում են Քրիստոսի հրաշքները պատկերող տեսարաններ: Այս ձեռագրի վարդապետի ոճը

վուտ գեղանկարչական է. գծանկարի չորությունը, որ առկա է դեռևս նախորդ 1329 թ. ձեռագրում, այստեղ անհետանում է: 1337 թ. ավետարանի մանրանկարները իրենց թե՛ պատկերագրությամբ, թե՛ ոճով առավելագույնս հարուցում են Վուգորդումների արդեն նշված կիլիկյան ձեռագրի հետ: Բավական է հիշել հորինվածքային լուծումով անկաշկանդ, տոնական տրամադրությամբ ներշնչված «Մուտք Երուսաղեմ»-ը:


Ավագի ստեղծագործության, մեկ հայտնի ամենահետաքրքիր նմուշը, սակայն, նրա գլուխգործոցը՝ 1356—58 թթ. նկարապարդված Աստվածաշունչն է: Այս ձեռագրի նկարապարդումները բացահայտում են գեղագիտական սկզբունքները վերջնականապես մշակած, հասուն մի նկարչի, որը թե՛ իր տաղանդով, թե՛ փորձով ստեղծագործական ուժերի ծաղկման բարձրակետն է: Նկարչի վարպետությունը հասել է այնպիսի մի մակարդակի, որ ինչպես ոճական առանձին խնդիրների, այնպես էլ շատ ավելի բարդ հարցերի լուծման մեջ (օրինակ՝ էջի կապակերպումը) զգացվում է մի անկաշկանդ ու թեթև կատարում, ինչ որ ԺԴ դ. բացառիկ նկարիչներին էր հատուկ: Նրա հորինվածքները երբեմն մի այնպիսի սահունությամբ տարածվում են հանդիպադիր էջերի վրա, որ մի պահ մոռանում ես, որ

նկարիչը միջնադարի մարդ է, պատկերագրական խիստ կանոններով սահմանափակված: Այս ձեռագրում առավել քան մյուսներում Ավագի տաղանդը դրսևորվում է իր հասունության ու մշակվածության ողջ փայլով:

Այսպիսով, Ավագ ծաղկողի ստեղծագործության ողջ գեղարվեստական համակարգը թե՛ պատկերագրության, թե՛ ոճի ոլորտում հարուստ է ավանդական, բուն հայկական ձևերով, նոր ճաշակի արտահայտություններով և երբեմն ինքնուրույն, հետաքրքիր ու լուրջ պրպտումներով: Այդ արվեստը բնորոշվում է որպես Մայր Հայաստանի ու Կիլիկիայի արվեստների մի ներդաշնակ, յուրատիպ համադրում: Սակայն այն ոգեղինությունը, որ կրում են իրենց մեջ Ավագի կերտած կերպարները, համապարփում են իրենց ո՛չ Կիլիկիայի, ո՛չ Մայր Հայաստանի ԺԴ դ. արվեստներում, այլ միայն ու միայն նրա՝ արվեստագետի զգայնության ու մեծ անհատականության դրսևորման արդյունքն է:

Եվ որքան կենդանի մնան մեր մեջ Ավագ ծաղկողի ստեղծած անպուգական կերպարները, այնքան կամրապնդվի մեր հավատը ավելի ու բարձրագույնի, մարդկային մաքուր ու անկեղծ հարաբերությունների, լավագույն սպասումների իրականացման նրկատմամբ:





Յ Ո Ւ Յ Ա Կ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 610
ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թերթերը՝ 193:— **Պրակները՝ 12:**— **Մեծությունը՝ 20.5×13.1×2.2 սմ:**— **Նյութը՝** դիմացկուն մաքուր սպիտակ թուղթ:— **Կազմը՝** կապույտ մոմաթուվ ծածկված բարակ ստվարաթուղթ, որի երեսին ոսկեգույնով գրված է հետևյալը **„LETTS DIARY 1961 With the compliments of B. I. SURMEYAN Stationer-Printer, Ad. is Ababa“:**— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական միաբաժան թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 2ա—2բ, 44բ—45ա, 186ա—193բ:— **Տողերը՝ 30:**— **Գծումները՝** թուղթի ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Ձարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Ասողիկ Եպիսկոպոս Դավարյան (1909—1978):— **Ժամանակը՝** 1961 թ.:— **Վայրը՝** Կալկաթա:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն առաջված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

* Ըարունակված «Էջմիածին» անսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից, 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի № № Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից, 1981 թվականի № № Ա—Դ-ից, Է-ից, Թ—ԺԲ-ից, 1982 թվականի № № Ա-ից, Գ-ից, Ժ—ԺԲ-ից, 1983 թվականի № № Բ—Գ-ից, Է—Ժ-ից, 1984 թվականի № № Բ—Գ-ից, Ե—Զ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1985 թվականի № № Բ—Գ-ից և Է-ից:

Ստորև տրվում է հեղինակի կողմից նոթագրված հետաքրքիր տեղեկությունները միայն:

Թ. 3ա.— Պոմպեյ, Կիր. 1 յունուար 1961:

Տեր Սահակը պատարագեց և ես քարոզեցի Նոր Տարւոյ առթիւ, պատարագէն ետք ունեցանք եկեղեցիի խորհրդատանը պատիկ հիւրասիրութիւն մը:

Թ. 5բ.— Պոմպեյ, Ուր. 6 յունուար 1961:

Մեր Ծննդեան տօնին առթիւ պատարագեցի և քարոզեցի Պոմպեյի մեր եկեղեցիին մէջ: Պատարագէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն տեղւոյն վրայ: Գաղութի գրեթէ բոլոր անդամները ներկայ էին:

Թ. 8ա.— Պոմպեյ, Դշ. 11 յունուար 1961:

Աստուծով վաղը պիտի երթանք Կալկաթա, տեսնենք թէ այնտեղի վարչութիւնը և ժողովուրդը ինչպէս պիտի ընդունին մեզի: Այս մասին շատ մտաւոգ եմ:

Թ. 8բ.— Կալկաթա, Եշ. 12 յունուար 1961:

Ժամը 6-ին օդանաւը ելանք, գիշերուան ժամը 9.45-ին հասանք Կալկաթայի օդակայանը: Դիմաւորութեան համար ոչ ոք չէր եկած. մինակս եկայ տուն:

Թ. 10ա.— Կալկաթա, Կիր. 15 յունուար 1961:

Առտուն ժամը 7.30-ին ճամբայ ելանք դեպի Չինսուրա և հոն հասանք ժամը 9-ին: Պատարագը հոն Ս. Յովհաննէս եկեղեցիի մէջ էր ըստ սովորականին. պատարագեց Տեր Պօղոսը, ես քարոզեցի. ետքէն խաջալուայ ըրինք և հանգստեան:

Ժողովուրդ քիչ եկած էր այս տարի, հոն ծաղիկի հիւանդութեան համաճարակին պատճառաւ:

Թ. 13ա.— Կալկաթա, Եթթ. 21 յունուար 1961:

Առտուն ժամը 3-ին ելայ, ժամը 3.30-ին զացինք կայարան: 23 հոգի, մարդիկ և կանայք, զացինք Ալյուտայատ. հոն մեր աւերակ եկեղեցիի մէջ պատարագ ըրինք, գրեթէ բոլոր ներկաները հաղորդունցան, պատարագէն ետք ընդհանուր հոգեհանգիստ մը կատարեցինք:

Հայ տիկիները, ըստ իրենց բարի սովորութեան, հետերնին բաական ուռելիքներ բերած էին, հոն ձաջեցինք ու իրիկուան ժամը 5-ի թրկնով վերա-

դարձանք: 118 քիլոմետր է Կալկաթայեն Ալյուտայատ, որ շուրջ 5.30 (ժամ—Ն. Մ.) երթալը, նոյնչափ ալ վերադարձը կառնէ:

Թ. 15բ.— Պոմպէյ, Եշ. 26 յունուար 1961:

Առտուն երբ պառկած էի, Տէր Պողոսը ներս մըմաւ և գուժեց Պոմպէյի մեր Տէր Սահակ քիյի մահուան լուրը և հաղորդեց որ Բոմբէյէն կուպեն մեզ, թաղման կարգը կատարելու համար: ...Յաջողեցանք տոմսակ ձարել ու կէսօրուան 12-ի օդանաւով ճամբորդել, մեզ հետ առած տրց. Պողոսը և հանգուցեալին պաակը՝ Ջաւէն, որ Մարդասիրաց ձեմարանէն էր: Ժամը 4-ին հասանք, մեզի դիմաւորութեան եկած էին օդակայան քանի մը հայ տիկիներ:

Թ. 16բ.— Պոմպէյ, Եթ. 28 յունուար 1961:

Առտուն ժամը 7-էն սկսեալ կատարեցինք հանգուցեալ Տէր Հօր լուացման, օծման, յուղարկաւորութեան ու թաղման կարգերը ըստ պատշաճի: Գաղութին բոլոր անդամները գրեթէ ներկայ եղան թաղման ու յուղարկաւորութեան արարողութեան:

Թ. 19ա.— Կալկաթա, Եշ. 2 փետրուար 1961:

Իրիկուան եօթի օդանաւով վերադարձանք Տրց. Պողոս Յարութիւնեանին հետ: Չորս ժամէն հասանք ալախով Կալկաթա:

Ինտենսիւայէն հեռագիր ստացայ, որով կը հաղորդէին որ Տրց. Պողոսին քիյ. ձեռնադրեմ իրենց համար:

Թ. 21բ.— Կալկաթա, Գշ. 7 փետրուար 1961:

Առտուն ժամեղգութիւն և պատարագ ունէինք, Դաւիթ Դաւիթեանի, աղջկանց դպրոցի բարերարին տարեդարձին առթիւ: Աշակերտները բոլոր եկած էին: Քարոզեցի, պատարագէն ետք բարերարին գերեզմանին վրայ ունեցանք հոգեհանգիստ: Կեսօրէն ետք զացինք ճաշի դպրոց այս առթիւ:

Թ. 22բ.— Կալկաթա, Եշ. 9 փետրուար 1961:

Երեկոյան Վարդանանց տօնին առթիւ հանդէս կար դպրոցի սրահին մէջ. խօսեցայ Վարդանանց պատերազմի արժեքին վրայ:

Թ. 24ա.— Կալկաթա, Կիր. 12 փետրուար 1961:

Ամերիկայէն Ալեքսէյի հայ մը եկած էր իր տիկնոջ հետ Տէր և Տիկ. Քիւլեաններ, մեծ ինձինքը մը, որ հեռաւոր Արևելքի եղբորական մեծ կայարաններու հիմնադրիչն է, Ամերիկեան կառավարութեան կողմէ նշանակուած: Բաւական տպաւորիչ էր:

Թ. 26բ.— Կալկաթա, Ուրբ. 17 փետրուար 1961:

Գիշերը զացինք Government House Անգլիոյ Էլիպաթէ թագուհին տեսնելու և իրեն ներկայացանք: Ես շատ չի տպաւորուեցայ իրենցմէ: Բաւական ժողովուրդ կար հաւաքուած զանազան ազգերէ և համայնքներէ:

Թ. 29ա.— Կալկաթա, Դշ. 22 փետրուար 1961:

Իրիկունը Ամերիկեան հիւպատոսարանը հրաւիրուած էինք, հոն Վաշինկթընի ծննդեան տօնին առնչութեամբ:

Թ. 33ա.— Կալկաթա, Եշ. 2 մարտ 1961:

Հնդիկներու տօնն է այսօր, որ կը կոչուի Holy (Սուրբ—Ն. Մ.) և իրարու վրայ ներկուած ջուր կը սրսկեն, տուններու և փողոցներու մէջ, տեսակ մը Վարդալուս:

Թ. 39բ.— Կալկաթա, Դշ. 15 մարտ 1961:

Այսօր նամակ մը ստացայ Ճավայէն, որ վիս կը հրաւիրեն Ջատիկէն առաջ հոն ըլլալու, եկեղեցիի քանդումին համար:

Բոմբէյէն ևս հեռագիր ստացայ, որ ճամբորդութիւնս կատարեմ ամսու 17-ին:

Թ. 40բ.— Բոմբէյ, Ուրբ. 17 մարտ 1961:

Առտուն ժամը 5-ին ելանք, վեցին հասանք օդակայան և եօթին օդը բարձրացանք, ժամը 11.15-ին հասանք Բոմբէյ:

Թ. 45բ.— Բոմբէյ, Եթ. 25 մարտ 1961:

Նամակ մը գրեցի Գարեգին Պատրիարքին: Յայտնեցի շնորհակալութիւնս իրեն, ինձի նուէր դրկած գիրքին՝ Բ. Շնորհալի Դուրեան Սրբազանի հարիւրամեայ յոբելեանին առթիւ հրատարակած: Շնորհաւորեցի նաև իր յոբելեանը:

Թ. 46բ.— Բոմբէյ, Դշ. 29 մարտ 1961:

Հեռագիր ստացայ Վեհ. Հայրապետէն, որ Կալկաթա կը դրկէ Հայկազուն եպիսկոպոսը Հայկ Առաքելեանին հետ, գործերու կարգադրութեան համար:

Թ. 49ա.— Բշ. 3 ապրիլ 1961 (ժամանում է Կալկաթա—Ն. Մ.):

Թ. 53ա.— Կալկաթա, Գշ. 11 ապրիլ 1961:

Այսօրուան տեղական Stateman թերթին մէջ գրուած էր, որ ռուսները արդէն մարդ դրկած են մեր երկրի սահմաններէն դուրս:

Թ. 54ա.— Կալկաթա, Եշ. 13 ապրիլ 1961:

Երկու նամակ գրեցի. մին Ռումանիա, Տիրայր վրդ. Մարտիկեանին, միւսը Բաքու Տ. Եղիշէ վրդ. Սարգիսեանին, երկուքին ալ շնորհաւորելով իրենց առաջնորդական պաշտօնները:

Թ. 56բ.— Կալկաթա, Գշ. 18 ապրիլ 1961:

Հայկազուն Սրբազանէն հեռագիր կար, որ այսօր պիտի երեկոյան օդանաւով հասնին Կալկաթա Նիւ Դէլիին: Իրիկունը բաւական ժողովուրդով զացինք պիտեք (Հայկ Առաքելյանի հետ—Ն. Մ.) դիմաւորելու և այս անգամ իրապէս եկան: Հրաշափառ ունեցանք: Եկեղեցիէն ետք ժողովուրդը վեր բարձրացաւ: Ամէն ինչ լաւ անցաւ:

Թ. 57ա.— Կալկաթա, Դշ. 19 ապրիլ 1961:

Իրիկուն, Եկեղեցական վարչութեան հետ ժողով ունեցանք, պատգամաւորները կարդացին Վեհ. Հայրապետին նամակը և հաղորդեցին ողջոյնները: Իմ հակառակորդներս սկսան հակառակիլ Վեհ. Հայրապետի կարգադրութեանը դէմ:

Թ. 59ա.— Կալկաթա, Կիր. 23 ապրիլ 1961:

Հայկազուն Սրբազանը պատարագեց, ես վինքը ներկայացուցի: Բաւական ժողովուրդ եկած էր եկեղեցի: Պատարագի ընթացքին կարդաց Կոնդակը և քարոզեց: Իրիկունը դպրոցը թէյանդան կար ի պատիւ Կաթողիկոսական պատուիրակներու: Բաւական ժողովուրդ հաւաքուած էր հոն: Ես ալ խօսեցայ քիչ մը:

Թ. 61ա.— Կալկաթա, Եշ. 27 ապրիլ 1961:

Մեր պատուիրակները՝ Հայկազուն Սրբազան և Հայկ Առաքելեանը պատրաստուեցան երթալու: Իրիկունը վարչութեան անդամներուն հետ միասին պատկեր քաջուեցան, վեր եկան, փոխադարձ մաղ-

թանքներ եղան և վերջապես ժամը 9-ին տարինք օդակայան ու ժամը 10.50-ին թռան դեպի Պեյրոք:

Թ. 65բ.— Կալկաթա, Շբթ. 6 մայիս 1961:

Այսօր իմացանք, որ դպրոցի վարչությունը կը ծրագրէ դպրոցէն ներս աննել նաև օտարները: Այս գաղափարը չի հաշտուիր մեր զգացումներուն հետ:

Թ. 66.— Կալկաթա, Կիր. 7 մայիս 1961:

Որոշեցինք Ասատուր Կիւլեանի հետ երթալ Գե-րեկա, Ատրիներու Կաթողիկոսին այցելութեան:

Թ. 66բ.— Կալկաթա, Բշ. 8 մայիս 1961:

Այսօր Թակօրի ծննդեան հարիւրամեակի առթիւ պետական տօն յայտարարուած էր:

Թ. 76բ.— Կալկաթա, Կիր. 28 մայիս 1961:

Քարոզեցի պատարագի ընթացքին օրուան ան-տարանի վրայ և յանդիմանեցի ժողովուրդին ան-հաւատութիւնը: Պատարագէն ետք բաւական ժողո-վուրդ եկած էր իմ քովս:

Թ. 80բ.— Կալկաթա, Բշ. 5 յունիս 1961:

Ճան Մայքըլը եկաւ քովս, անոր խնդրեցի, որ Սուքառնոյին գրելիք իմ նամակս թարգմանէ անգ-լիերէնի:

Թ. 82բ.— Կալկաթա, Ուրբ. 9 յունիս 1961:

Այսօր Տէր Արամայիսի նամակ մը գրեցի Ճա-կարթա և անոր հետ ներքակեցի նաև Նախագահ Սուքառնոյին ուղղեալ նամակ մը, որ մեր եկեղե-ցիին չի վնասէ և կալուածները, որ քանի տարիներէ ի վեր գրաւած է կառավարութիւնը, ետ դարձնէ:

Թ. 87բ.— Կալկաթա, Բշ. 19 յունիս 1961:

Այսօր աչքէ անցուցի 23 տարու յուշագիրներս, բաւական հետաքրքրական բաներ գտայ:

Թ. 89բ.— Կալկաթա, Ուրբ. 23 յունիս 1961:

Ճավայէն ստացայ տեղական վարչութեան կառա-վարութեան գրած նամակներու պատճենները մեր ձակարթայի եկեղեցիին փոխուն առթիւ:

Թ. 90ա.— Կալկաթա, Շբթ. 24 յունիս 1961:

Այսօր տխուր հեռագիր մը ստացայ Ադամայօլէն, որով կը գոժէր Գարեգին Պատրիարք խաչատուր-եանի մահը: Այս կերպով Արմաշի ամէնէն տարեց ու վերջին միաբանն ալ այս աշխարհին հրածեջտ կուտայ: Բաւական ընդմաստոր եկեղեցական մը եղած է հանգուցեալ Գարեգին Սրբապանը: Տրամադրու-թիւնս վատ էր: Բաւական ապուրեցայ այս տխուր յուրէն, որով կառկարուն եկեղեցական դէմք մըն ալ կը պակսի մեր արդէն իսկ տկար եկեղեցական դա-սէն: Ստամպօլի Աթոռը անգամ մըն ալ կայրիանայ:

Թ. 100ա.— Կալկաթա, Ուրբ. 14 յուլիս 1961:

Իրիկունը հրաւիրուած էինք քօթէյլ բարթիի ֆրանսական հիւպատոսարանին կողմէ, Յուլիս 14-ի առթիւ, որը տեղի ունեցաւ Grand Hotel-ի սրահ-ներէն մէկուն մէջ:

Թ. 102բ.— Կալկաթա, Դշ. 19 յուլիս 1961:

Սուրբաբայի եկեղեցական վարչութեան առեւա-պետէն ստացայ նամակ մը, որով կը գրէր թէ Ճա-կարթայի եկեղեցին արդէն փլցուած է և նոր եկե-ղեցիի հողը օրինուած և Տէր Արամայիսը մեկնած:

Տեղական լրագիրէն կարդացինք Գեր. Մամբրէ Արքեպիսկոպոսի (Գաֆայեան—Ն. Մ.) յանկարծակի մահուան մասին:

Թ. 109ա.— Կալկաթա, Գշ. 1 օգոստոս 1961:

Նամակ մըն ալ ստացայ Եգիպտոսէն Մամբրէ Սրբապանէն, որը կը նկարագրէր Գարեգին Պատ-րիարքի թաղումը, Վեհափառին գտած ընդունելու-թիւնը Պօլսոյ հայերուն կողմէ և կառավարութեան յարգալից ընդունելութեան մասին:

Թ. 110ա.— Կալկաթա, Եշ. 3 օգոստ. 1961:

Տեղական թերթերու մէջ այսօր գրուած էր որ Սիւրիոյ մէջ Դաշնակցական հայ կուսակցութիւն մը լրտեսութիւն կընէ Արմատեան ապգերու ի հաշիւ, ո-րոնք կը վճարուին Բէյրութի մէջ օտար Եւրոպական դեսպանութեանց կողմէ:

Թ. 116ա.— Կալկաթա, Գշ. 15 օգոստոս 1961:

Հնդկաստանի անկախութեան օրն էր, հրաւիրուած էինք կուսակալին կողմէ: Իրիկունը ժամը 5.30-ին գացինք, ծանօթացանք բաւական օտարականներուն հետ, ի միջի այլոց նաև հայ տիկնոջ մը, որուն ա-մուսինը հնդկի էր:

Թ. 124բ.— Կալկաթա, Ուրբ. 1 սեպտ. 1961:

Այսօր հնդկիկներուն տօնն էր իմաստութեան:

Թ. 128բ.— Ասանսօլ, Շբթ. 9 սեպտ. 1961:

Այսօր ժամը 10.30-ի շոգեկառքով Տէր Արամայիսի և օրգ. Մալեա (ն) ին հետ գացինք Ալանսօլ և իջանք Ալջալոյս Ալէքսանդրեանի տունը, ուր կէսան մեկի տեսնելու տեղոյն փոքրաթիւ հայութիւնը:

Թ. 129բ.— Ասանսօլ, Բշ. 11 սեպտ. 1961:

Ժամը 1-ին թաքսի մը առինք և գացինք Տամ-պատ, տեսնելու համար այստեղի մի քանի հայ ըն-տանիքները:

Թ. 140ա.— Կալկաթա, Բշ. 2 հոկտ. 1961:

Այսօր Կանտիին նուիրուած տօնական օր մըն էր, օֆիսները փակ էին: Կանտիի արձանին վրայ դրուն-լու համար ծաղկեայ պսակ մը դրկեցինք:

Թ. 140բ.— Կալկաթա, Գշ. 3 հոկտ. 1961:

Քար ձօնսէն Ռանգունէն նամակ մը ստացայ, ո-րով կը հաղորդէր թէ կառավարութիւնը 262.000 պրմական դրամ պիտի տայ մեր հին գերեզմանա-տան փոխարէն:

Թ. 143բ.— Կալկաթա, Բշ. 9 հոկտ. 1961:

Հնդկական տօն էր գիտութեան աստուծոյն:

Թ. 146ա.— Կալկաթա, Շբթ. 14 հոկտ. 1961:

Հեռագիր ստացանք Իստանպօլէն, որ Հնորիք Ե-պիսկոպոսը Պատրիարք ընտրուած է Թուրքիոյ հա-յոց:

Թ. 171ա.— Կալկաթա, Կիր. 3 դեկտ. 1961:

Այսօր կէսօրին Դերենիկ Սրբապանը եկաւ Կալ-կաթա:

Թ. 171բ.— Կալկաթա, Բշ. 4 դեկտ. 1961:

Դերենիկ Եպիսկոպոսը ամբողջ օրը հոս էր և Ե-կեղեցիին արիւնները կը պրպտէր և հին անօթները կը լուսանկարէր:

Թ. 173ա.— Կալկաթա, Եշ. 7 դեկտ. 1961:

Այս իրիկուն գացի մարզադաշտ, հանդիպեցայ հայ մարպիկներուն, որոնք Հայաստանէն եկած էին և կը մրցէին հնդկ մարպիկներու հետ:

Թ. 173բ.— Կալկաթա, Ուրբ. 8 դեկտ. 1961:

Կէսօրէն յետոյ գացի մարզական ակումբը, ուր

հրապիրում էին նաև Հայաստանէն եկած արեւելիկ խումբը:

Թ. 175ա.— Կալկաթա, Բջ. 11 դեկտ. 1961:

Իրիկունը ընթրիքի հրապիրում էինք Մեծն Բրիտանիոյ Հայ քօմիշներին մօտ, ի պատիւ Բէնթըրպըրբէյի Արքեպիսկոպոսին տրուած, հոն էին նաև քաղաքին միթորթոյիտը, լատինաց երկու եպիսկոպոսներ և ուրիշ երկու քահանաներ: Բաւական հաճելի ժամանակ անցուցինք:

Թ. 180բ.— Ռանգուն, Ուրբ. 22 դեկտ. 1961:

Ժամը 10-ին եկեղեցիէն եկանք դէպի օդակայան, ուր եկած էին բաւական ազգայիներ մեպի ճամբու դնելու: Ժամը 12-ին օդը բարձրացանք Կալկաթայէն ու հասանք Ռանգուն ժամը 2.35-ին:

Թ. 181բ.— Ռանգուն, Կիր. 24 դեկտ. 1961:

Պատարագեցի, քարոյցեցի Ռանգունի պպտիկ հայ համայնքի եկեղեցիի մէջ. անոնց հաղորդեցի Վեհ. Հայրապետի ողջոյնները:

Թ. 185ա.— Ռանգուն, Կիր. 31 դեկտ. 1961:

Պատարագեցի, քարոյցեցի Ռանգունի մեր Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցիի մէջ, փոքր ջուրջ 20 հոգիսց համայնքի անդամներու:

...Այսպէս էին տարիին հրաժեշտ կուտանք, իր բոլոր անցեալով, յաջող ու անյաջող, ուրախ և տխուր

յիշատակներով, քիչ վերջը դիմաւորելու համար Նոր Տարին 1962-ը:

(Չեռագրում կան ինտելյաները.)

1. Ասողիկ Սրբազանի անձնագրի փոքրիկ լուսանկարը:

2. Մեքենագրված կապույտ մի թուղթ, որ ցույց է տալիս Կալկաթայում կատարված հանգանակության ցուցակը, հօգուտ Սիդնիի հայոց եկեղեցուն: Հանգանակության մասնակցած են Կալկաթայի Հայոց եկեղեցին և Հայկական ակումբը, ինչպես նաև 25 ազգայիներ: Ընդհանուր գումարը հասել է 12.340 հնդկական ռուպիի: Վերևում գրված է.


Contributions towards Armenian Church in Sydney.

Ներքևում կա Ասողիկ Սրբազանի ստորագրությունը և կնիքը, ինչպես նաև Տ. Արամայիս քահանա Միրզայանի և մի ազգայինի ստորագրությունը: Վաւերաթուղթը կրում է 20 սեպտ. 1961 թվականը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.— Ասողիկ եպս.:

(Շարունակելի)



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(АВГУСТ 1985 г.)

1. Диакон Гурген Мартиросян—О нахождении в г. Москве Католикоса всех армян Вазгена I и об участии на юбилейных торжествах, посвященное 75-летию со дня рождения Патриарха Московского и всея Руси Пимена, с 22 июля по 27 июля сего года (стр. 3—6).

2. Приветственное послание молодежной организации армянской восточной епархии США Католикосу всех армян Вазгену I, 3 сентября 1985 г. (стр. 7).

3. Кончина архиепископа Евангелическо—Лютеранской Церкви Латвии Яниса Матулиса и телеграмма соболезнования Католикоса всех армян Вазгена I от 21 августа 1985 г. (стр. 8).

4. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за август месяц (стр. 9—10).

5. После шести месяцев реставрационных работ, 31 июля 1985 года вновь стала функционировать ризница кафедрального собора св. Эчмиадзина (стр. 10).

6. 21 августа 1985 г. группа зарубежных армянских педагогов, съехавшие из разных стран мира, посетила первопрестольный Эчмиадзин, побывала в Кафедральном соборе и была принята Католикосом всех армян Вазгеном I (стр. 11—13).

7. Шестая сессия Христианской Мирной Конференции в Праге, 2—9 июля 1985 г. (стр. 14—15).

8. Епархиальная жизнь

а) Рукоположение иподиаконов в армянской церкви св. Карапета в Багдаде, 13 марта 1985 г. (стр. 16—18).

б) Переизбрание административного состава армянской церкви св. Богородицы г. Русе в Болгарии, под председательством предстоятеля объединенных епархий Румынии и Болгарии высокопреосвященного архиепископа Тирайра Мартикяна (стр. 18—19).

в) Торжество Пятидесятницы в армянской церкви св. Богородицы в Софии, 26 мая 1985 г. (стр. 19—20).

г) Иеромонах Асогик Аристакесян—Праздник Вознесения в армянской престольной церкви св. Иоанна Предтечи в Париже, 16 мая 1985 г. (стр. 20—21).

9. Молитва Патриарха Нерсеса Благодатного для освящения винограда (стр. 22—23).


10. Анаит Багдасарян—Армянская Литургия в записи Никогаеса Ташчяна (исследование)—(стр. 24—37).

11. Карен Матевосян—Переписчик города Ани епископ Ованес Воскепорик (исследование)—(стр. 38—44).

12. Самвел Карапетян—Памятники армянской культуры в Гардманском уезде Шамахи (исследование)—(стр. 45—50).

13. Лилит Закарян—Иллюстратор рукописей Авак (исследование—окончание)—(стр. 51—57).

14. Нубар Микаэлян—Новые рукописи, полученные в первопрестольном Эчмиадзине (№ 610)—(стр. 58—61).



ETCHMIADZIN
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(AUGUST 1985)

1. **Deacon Goorgen Mardirossian**—From 22nd to 27th July of this year His Holiness Vasken I, the Catholicos of All Armenians, was in Moscow to participate to the jubiliary festivities of the 75th birthday anniversary of His Holiness Pimen, the Patriarch of All Russia (pages 3—6).

2. The letter of greetings of the youth organization of the Armenian eastern diocese of America to the Catholicos of All Armenians, 3rd September 1985 (page 7).

3. The death of Archbishop Yanis Matools, of the Evangelical—Lutheran Church of Latvia. The cable of condolence of Vasken I, the Catholicos of All Armenians, dated 21st August 1985 (page 8).

4. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the month of August (pages 9—10).

5. The museum of the Cathedral of Holy Etchmiadzin has been reopened on the 31st of July 1985, after a restoration of six months (page 10).

6. The group of the Armenian teachers, arrived from different countries of the world, visited the Holy See and the Cathedral on the 31st of August and has been received by the Catholicos of All Armenians (pages 11—13).

7. The sixth session of the Christian Peace Conference in Prague, 2—9th July 1985 (pages 14—15).

8 Diocesan life.—

A. Ordination of subdeacons in the Arme-

nian Holy Karapet Church at Baghdad, 13th March 1985 (pages 16—18).

B. Reelection of the administration of Holy Virgin Church at Ruse (Bulgaria), under the presidency of Archbishop Tirayr Martikian, the prelate of the united dioceses of the Armenians of Rumania and Bulgaria (pages 18—19).

C. The Pentecost celebration in the Holy Virgin Church at Sofia, 26th May 1985 (pages 19—20).

Reverend Assoghik Aristakessian—The Ascension celebration in the Saint John the Baptist Cathedral at Paris, 16th May 1985 (pages 20—21).

9. The prayer of the Catholicos Nerses Shevorhali for the benediction of grape (pages 22—23).


10. **Anahid Baghdassarian**—The Armenian Mass in the notation of Nigghayos Tashchian (study)—(pages 24—37).

11. **Karen Mathevossian**—The writer Bishop Hovhannes Voskeporik of Ani (study)—(pages 38—44).

12. **Samvel Karapetian**—The monuments of the Armenian culture in the province of Shamakhi at Gardman (study)—(pages 45—50).


13. **Lilith Zakarian**—Illuminator Avag (study—continuation)—(pages 51—57).

14. **Nubar Mikaelian**—The list of the newly received manuscripts of the Mother See of Holy Etchmiadzin under the number of 610 (pages 58—61).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՈՒՐԳԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ—Նորին Սուրբ Օծություն S. S. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի այցը Ռուս Պրավոսլավ Եկեղեցու պետ, Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Պիմենին	3
Ամերիկայի հայոց արևելյան թեմի երիտասարդաց կազմակերպության ողջույնը Վեհափառ Հայրապետին	7
Հանգիստ Ավետարանական-Լուսերական Եկեղեցու պետ Յանիս Մառուկիս արքեպիսկոպոսի	8
ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ—Եկեղեցական բեմ. լուրեր	9
Մայր տաճարի ավանդատան վերաբացումը	10
Սիյուռքահայ ուսուցիչները Մայր Աթոռում	11
Խաղաղության Քրիստոնեական Համաժողովի վեցերորդ նստաշրջանը Պրագայում	14
ԹԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔ	
Լուրեր Իրաքի հայոց թեմից	16
Լուրեր Բուլղարիայի հայոց թեմից	18
Հոգեգալստյան տոնակատարությունը Սոֆիայում	19
ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ—Համբարձման տոնը Փարիզում	20
Ներսես Շնորհալի Հայրապետի աղոթքը՝ խաղողն օրհնելու համար	22
ԱՆԱՀԻՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ—Հայոց Պատարագը Նիկողայոս Թաշչյանի գրառմամբ	24
ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ—Անիի եպիսկոպոս Հովհաննես Ոսկեփորիկ գրիչը	38
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ—Հայ մշակույթի հուշարձանները Շամախու Գարդման գավառում	45
ԼԻԼԻԹ ՋԱՔԱՐՅԱՆ—Ավագ ծաղկող	51
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Նոր ստացված ձեռագրերի	58
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата	62
«Etchmiadzin» official journal of Holy Etchmiadzin	63



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԷՋՄԻԱԾԻՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 6.08.1985 թ.: Ստորագրված է տպագրության 18.09.1985 թ.:
Տպագրական 4 մամուլ + 6 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 588

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1985 թ.